



հոլիս

1/56

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
JUSTICE

2022

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2022
N 1 (56)

Գիտական հանդես

Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հրապարակված է 15.07.2022թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալ, Արդարադատության առաջին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy Prosecutor General of the Republic of Armenia coordinating the field of functions aimed at confiscation of property of illicit origin, First Rank Counsellor of Justice, PhD student of the chair of criminal law, YSU, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – PhD in Law, Associate Professor, Chief Editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Ջհանգիրյան – «Գլաճոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor

Արփինե Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – PhD in Law

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Քեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոքիզնետի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Կրիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի դեկան, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդերբերգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյավսկի – Ոսկրահնայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ոսկրահնայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ռատիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskiy – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

- 6 ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**
Արժեքների ֆինանսաիրավական կարգավորման առանձնահատկությունները
- 15 ԷԼԻՆԱ ԳԵՂԱՍՅԱՆ**
ԱՐՄԱՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ
Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայմանների վերաբերյալ որոշ հիմնահարցեր
- 24 ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
Վարչական արդարադատության համակարգի առանձնահատկությունները և դրանք պայմանավորող սկզբունքները
- 32 ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
ՄԻԵԴ վճիռների շրջանակներում Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման մեթոդաբանությունը
- 38 ԶՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
Պիտանիությունը և անհրաժեշտությունը՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի տարրեր
- 47 ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Ընդհանուր տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն (հայեցակետ)
- 54 ՆՈՐԱՅՐ ԱՎԱԳՅԱՆ**
«Վարչական մարմին» հասկացությունը առանձին տեսակի վարչական վարույթների համատեքստում
- 61 ԱՀԱՐՈՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ**
Էլեկտրոնային արդարադատության համակարգի ստեղծման անհրաժեշտության որոշ հիմնահարցեր. էլեկտրոնային դատական համակարգի ստեղծման հետազոտություն
- 67 ДИАНА АВЕТИСЯН**
Конституционные и уголовно-правовые последствия нарушения присяги

ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՊՏՀ հասարակագիտություն ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների դոկտոր

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում առաջին անգամ ՀՀ-ում փորձ է կատարվել արժեթղթերի շուկայի և արժեթղթերի քաղաքացիաիրավական կարգավորումներից սահմանազատել արժեթղթերին ներհատուկ ֆինանսաիրավական առանձնահատկությունները, որոնք գործնականում ընդգծում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների իշխանական-իրավակազմակերպական, վերահսկողական և հսկողական լիազորությունները սահմանազատելով արժեթղթերի ֆինանսաիրավական կարգավորումները քաղաքացիական գույքային բնույթի իրավահարաբերություններից:

Արժեթղթերի շուկայի գործունեության հանրային իրավական կարգավորումներից ելնելով՝ բազմաթիվ առաջարկություններ են արված «Արժեթղթերի շուկայի մասին» գործող ՀՀ օրենքում տեղ գտած մի շարք իրավական սխալների և օրենսդրական բացթողումների ճշգրտման նպատակով:

Հոդվածում առաջին անգամ բացահայտված է, որ «Արժեթղթերի շուկայի մասին» իրավական ակտերում սխալ ձևակերպումների պատճառով կենտրոնական դեպոզիտարիան վերապահվում է վերահսկողության և հսկողության լիազորություններ այն դեպքում, երբ վերջինս տնտեսական գործունեության մասին է, (բաժնետիրական ընկերությունում) որին պետական գործառնությունների իրականացման լիազորություններ վերապահվել:

Հիմնաբառեր- արժեթուղթ, արժեթղթերի շուկա, արժեթղթերի բողոքում, տեղաբաշխում, չեկ, մուրհակ, դեպոզիտարիա, բորսա:

Արժեթղթերի շուկայի զարգացումը այսօր հանրապետության տնտեսական աճի ապահովման ուղղություններից մեկն է, որի նպատակը ֆինանսական շուկայի ձևավորումն ու տնտեսական հարաբերությունների ֆինանսաիրավական կարգավորման արմատավորումն ու զարգացումն է: Քաղաքացիների, կազմակերպությունների ազատ զարգացման իրավունքն արժեթղթերի շուկայի հիմնարար պայմաններից մեկն է, որը հիմնվելով ազատ մրցակցության վրա, նպատակ է հետապնդում վերածվել սոցիալական հիմնախնդիրների լուծման ֆինանսաիրավական ինստիտուտների: Պատահական չէ, որ վերջինիս և դրա ֆինանսաիրավական կարգավորման ձևերի իմացությունն ու ռազմավարական կառավարումը ներկայումս տնտեսական քաղաքականության մեջ զգալի նշանակություն է ձեռք բերել:

Արժեթղթերի շուկայի կառավարման, զարգացման, ինչպես նաև տնտեսական աճի կայունության ապահովման երաշխիքներից մեկը պետության ֆինանսական գործունեության իրավական կարգավորմանն ուղղված ժամանակակից ֆինանսատնտեսական պահանջները կարգավորող օրենսդրության ձևավորումն է, որի պահանջները պետք է ուղղվեն ֆինանսական միջոցների ձևավորման պայմանների ստեղծմանը, արժեթղթերի շուկայի անհրաժեշտ գործառնությունների, պե-

տական կարգավորման ձևերի և մեթոդների կատարելագործմանը:

Գիտության ոլորտում որևէ երևույթի լուսաբանումները որպես կանոն սկսվում է վերջինիս ճանաչումից և դրա վերաբերյալ տեսական եզրահանգումներից, առանց որի հնարավոր չէ հանգել որևէ գիտական բացահայտման: Այս առումով բացառություն չեն կազմում նաև արժեթղթերի շուկայի քաղաքացիա և ֆինանսաիրավական կարգավորումների առանձնահատկությունների բացահայտումները, որոնց շնորհիվ կարելի է հանգել իրավական այն եզրահանգման, որ արժեթղթերի շուկան համալիր (կոմպլեքս) իրավական ինստիտուտ է:

Գործող իրավական ակտերի ուսումնասիրությունները վկայում են, որ արժեթղթերի շուկայի վերաբերյալ օրենսդրական մեկնաբանություններն ու բնորոշումները շատ բազմազան են, հաճախ նաև իրարամերժ: Շուկայի նկատմամբ եղած տնտեսագիտական և իրավական դիրքորոշումները կարելի է դասակարգել: Գիտնականների մի խմբի կարծիքով, արժեթղթերի շուկան կարելի է դիտարկել որպես հարաբերությունների համակարգ: Այլ խոսքով՝ ֆինանսական շուկան իրենից ներկայացնում է ֆինանսական կապիտալով արտահայտված տնտեսական հարաբերությունների իրացման ոլորտ:

Տնտեսագիտության ոլորտում գիտնականների ճնշող մեծամասնությունը արժեթղթերի շուկան համարում է կապիտալի շուկա: Երբեմն, ինչպես տնտեսագիտության, այնպես էլ իրավագիտական աշխատություններում հանդիպում ենք այնպիսի կարծիքների, որով առևտրային կազմակերպությունների բաժնետոմս հասկացողությունը նշանակում է կորպորացիայի սեփականության, բաժնի նկատմամբ իրավունք, իսկ բաժնետոմսերի շուկան՝ շուկա, որտեղ իրականացվում է այդ իրավունքների վաճառքը[1]:

Արժեթղթերի շուկայի դերի, նշանակության և էության մեկնաբանման համար կարելի է այն դիտարկել որպես տնտեսական կատեգորիա և դրա կոնկրետ դրսևորման ձև:

Արժեթղթերի շուկայում արժեթղթերի թողարկման և շրջանառության հետ կապված հարաբերություններն առաջանում են թողարկող առևտրային կազմակերպությունների և ներդրողների, ինչպես նաև այդ շրջայում ֆինանսական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների միջև և ունեն ֆինանսաիրավական կարգավորում:

Ընդհանրացնելով արժեթղթերի շուկան՝ կարելի է ասել, որ այն ֆինանսական գործիքների ամբողջություն է, արժեթղթերի շուկայի դրսևորման կոնկրետ ձև, որը կարող է հանդես գալ բորսաների, բորսայակից շուկաների, կազմակերպված համակարգչային առևտրային համակարգերի, ինչպես նաև անկազմակերպ, չկարգավորվող շուկաների ձևով:

Արժեթղթերի շուկան պետության ֆինանսական գործունեության անբաժան մասն է, որն ուղղված է արժեթղթերի թողարկման և շրջանառության կազմակերպմանը: Այս գործունեության նպատակը դրամական միջոցների հավաքումը, բաշխումը և վերաբաշխումն է, որի գործընթացում արժեթղթեր թողարկողների և ներդրողների միջև առաջացած հարաբերություններն ունեն ֆինանսական-կառավարչական բնույթ և բացառապես կարգավորվում են ֆինանսաիրավական ակտերով:

Արժեթղթերի շուկայի որպես ֆինանսաիրավական ինստիտուտ առանձնահատկությունների մասին են վկայում շուկայի, արժեթղթերի տեսակների, դրանց թողարկման, շրջանառության, պետական հաշվառման, լիցենզավորման, ինչպես նաև պետական և գերատեսչական վերահսկողության և հսկողության իրավակարգավորումները սահմանող գործող օրենսդրությունը:

Հիմնախնդրի բացահայտման էքսկուրսները վկայում են, որ ՀՀ-ում արժեթղթերի շուկայի

ձևավորման հիմքերը սահմանվեցին մի շարք իրավական ակտերով, որոնք էլ դարձան արժեթղթերի, արժեթղթերի շուկայի կառույցների ստեղծման և հետագա զարգացման անկյունաքարեր: Արժեթղթերի իրավական կարգավորման ընդհանրական փաստաթուղթը «Արժեթղթերի շրջանառության մասին» ՀՀ օրենքն էր, որն ընդունվեց 1993թ. սեպտեմբերին: Գործնականում այս օրենքն ամբողջական իրավական դաշտ հանդիսացավ արժեթղթերի, դրանց տեսակների, թողարկողների, թողարկման պայմանների, արժեթղթերի շուկայի մասնակիցների, դրանց ներկայացվող պահանջների, գործունեության առանձնահատկությունների, ինչպես նաև արժեթղթերի շուկայի վերահսկման և կարգավորման լիազորված պետական մարմնի, դրա իրավասության և լիազորությունների սահմանման համար:

Արժեթղթերի շուկան ընդգրկող ամենածավալուն և ամբողջական փաստաթուղթը, որն անմիջականորեն ամփոփում էր արժեթղթերի շուկան, «Ինվեստիցիոն հիմնադրամների մասին» ՀՀ կառավարության որոշումն էր, որն ընդունվեց 1994թ. սեպտեմբերին:

Նշված ենթաօրենսդրական ակտը սահմանում և կարգավորում էր ինվեստիցիոն հիմնադրամների լիցենզավորման ընթացակարգը, դրանց գործունեության առանձնահատկությունները, սահմանափակումները, հաշվետվությունների և այլ տեղեկությունների պարտադիր հրապարակման միջոցով ապահովում էր հիմնադրամի թափանցիկությունը:

Արժեթղթերի շուկայի արմատավորման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին արժեթղթերի շուկայի այս կամ այն ոլորտները կարգավորող մի շարք որոշումներ, որոնցից մասնավորապես ֆինանսաիրավական կարգավորման յուրահատկություններով պետք է առանձնացնել «Արժեթղթերի շուկայի կարգավորումն ու վերահսկումն իրականացնող պետական լիազորված մարմնի մասին» 1994թ. սեպտեմբերի, «ՀՀ-ում արժեթղթերի, դրանց սերտիֆիկատների ձևավորման ու պատրաստման միասնական ստանդարտների հաստատման մասին» 1994թ. դեկտեմբերին ընդունված որոշումները:

Կազմակերպությունների արժեթղթերի շուկայի զարգացման նախադրյալ հանդիսացավ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը հանգամանորեն սահմանում է ընկերությունների բաժնետոմսերի և այլ արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման և իրականացման ձևերն ու մեխանիզմները:

Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության իրականացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ 1998թ. հունվարին ՀՀ կառավարության կողմից «Արժեթղթերի շուկայում իրականացվող գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունումը, որը իրավական հիմք հանդիսացավ շուկայում արժեթղթերի գծով մասնագիտացված գործունեության տեսակների սահմանման, դրանց առանձնահատկությունների հստակեցման և, դրանից ելնելով, գործունեության այլ տեսակների լիցենզավորման համար:

Արժեթղթերի շուկայի արմատավորմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի առատությունը դեռևս բավարար իրավական կարգավորումներ չի ապահովում: Օրենսդրությունը կարիք ուներ կատարելագործման և մի շարք նոր օրենքների ընդունման: Հանրապետությունը չուներ օրենք արժեթղթերի շուկայի կարգավորման, ֆոնդային բորսայի, ինվեստիցիոն կազմակերպությունների, արժեթղթերի շուկայի կառույցների (օրինակ՝ դեպոզիտարիայի, անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի) մասին և այլն:

ՀՀ արժեթղթերի շուկայի օրենսդրական դաշտը համալրվեց «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որը գործողության մեջ դրվեց 2000թ. օգոստոսից[2]: Օրենքը սահմանում էր ելակետային դրույթներ արժեթղթերի շուկայի, դրա կարգավորման մարմնի, կենտրոնացված դեպոզիտարիայի, ֆոնդային բորսայի վերաբերյալ:

Արժեթղթերի շուկայի պետական կարգավորումը նշանավորվեց ՀՀ կառավարության 1994թ. դեկտեմբերին ընդունված «Արժեթղթերի շուկայի կարգավորումն ու վերահսկումն իրականացնող պետական լիազորված մարմնի մասին» որոշմամբ, որպես կարգավորման մարմին սահմանվեց ՀՀ ֆինանսների նախարարությունը: Նախարարությունը կենտրոնական ապարատում 1995թ. փետրվարին ստեղծեց արժեթղթերի շուկայի պետական կարգավորման ու վերահսկման տեսչությունը, որի իրավասության մեջ մտնում էր արժեթղթերի թողարկման ազդագրերի գրանցում, ծառայություններ մատուցող անձանց գործունեության լիցենզավորում, շուկայի գործունեությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթերի նախագծերի մշակում, արժեթղթերի շրջանառության ոլորտում օրենսդրությամբ սահմանված պայմանները խախտող սուբյեկտների նկատմամբ սահմանված ֆինանսական հարկադրանքի միջոցների կիրառում:

Ներկայումս արժեթղթերի շուկայի, ինչպես

նաև արժեթղթերի հիմնական բնութագրերը, հասկացությունը և բովանդակությունը ամրագրված են հանրապետության երկու հիմնարար այնպիսի իրավական ակտերում, ինչպիսիք են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը և «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ին ընդունված ՀՀ օրենքը:

Արժեթղթերի ֆինանսաիրավական կարգավորումներն ակներև դարձնելու նպատակով քաղաքացիական և ֆինանսական իրավունքի ճյուղերի գործող օրենսդրության և գիտական բացահայտումների արդյունքների համեմատական վերլուծությունների մեթոդների կիրառմամբ փաստենք, որ արժեթղթերի իրավական կարգավորումը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 146-րդ հոդվածում, որտեղ ասված է, որ արժեթուղթը սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս[3]:

Արժեթղթի փոխանցմամբ փոխանցվում են դրանով հավաստող բոլոր իրավունքները:

Արժեթղթի հասկացության օրենսդրական սահմանումը ընդգծում է վերջինիս որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների օբյեկտի առավել էական առանձնահատկություններ, որպիսիք են.

- 1) արժեթղթի օրենքով սահմանված որոշակի ձևի առկայությունը,
- 2) սուբյեկտիվ իրավունքների հատուկ արձանագրումները,
- 3) արժեթղթում ամրագրված գույքային իրավունքների իրացման հնարավորությունը միայն այն ներկայացնելու դեպքում[4]:

Քաղաքացիական իրավունքի գիտության ոլորտում արժեթղթերի յուրահատկությունների թվին են դասվում վերջինիս իրավական կապի հասկացությունը, այսինքն քաղաքացիաիրավական հարաբերության սուբյեկտը գույքային իրավունքներ կարող է ձեռք բերել միայն արժեթուղթը ներկայացնելիս, օրինակ, փոխառություն, բաժնետոմս, չեկ: Այս հատկանիշով արժեթուղթը սահմանազատվում է մի շարք այլ գույքային իրավունքներ վերապահող փաստաթղթերից, ինչպիսիք են օրինակ, ապահովագրական պոլիսը, ստացվածը և այլն:

Արժեթղթերի քաղաքացիաիրավական առանձնահատկությունների թվին կարելի է դասել՝ դրամով հավաստված պարտավորությունների կատարումը, արժեթղթերի փոխանցելիությունը և այլ

գույքային իրավունքների և պարտավորությունների ապահովումը:

Արժեթղթերին ներկայացվող քաղաքացիա-իրավական-գույքային բոլոր պահանջները սպա-ռիչ թվարկված են ՀՀ քաղ. օրենսգրքի 147-րդ հոդ-վածում:

Ինչ վերաբերում է արժեթղթերի տեսակներին, դրանց քաղաքացիաիրավական կարգավորումնե-րին, յուրաքանչյուր տեսակի հասկացության գույ-քային իրավունքների բովանդակության բաղադ-րիչներին, ապա վերջիններիս օրենսդրական լու-սաբանումները սահմանված են քաղ. օրենսգրքի 153-ից 161-րդ հոդվածներում, որոնք վկայում են, որ արժեթղթերն ունեն քաղաքացիաիրավական կարգավորում:

Հիմնախնդրի նպատակային բացահայտում-ներին ուղղված հետազոտությունները ամբողջա-կան կարող են դարձնել մեր նկատառումները այն մասին, որ արժեթղթերի իրավակարգավորումների մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում ֆինանսաիրավական կարգավորումներին, որոնք դրսևորվում են ինչպես գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունված ենթաօրենսդրա-կան ակտերում, այնպես էլ գործող օրենքներում, որոնց նպատակը պետական իշխանության մար-մինների ֆինանսաիրավական գործառնությունների միջոցով հանրապետության պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման կայունության ապահովումն է:

Արժեթղթերի շուկայի գործունեության կազմա-կերպման, կառուցվածքի, սկզբունքների, ինչպես նաև արժեթղթերի յուրաքանչյուր տեսակի ֆինան-սաիրավական իրավակարգավորումների առանձ-նահատկությունները աչքի են ընկնում շուկայի մասնակիցների կարգավիճակի ֆինանսաիրավա-կան առանձնահատկություններով, իրավության շրջանակներով, որոնք դուրս են քաղաքացիաիրա-վական կարգավորումներից և կազմում են պետու-թյան բացառիկ լիազորությունները, որոնք ուղղված են գործունեության թույլտվությանը, պետական հաշվառմանը, ռեեստրավորմանը, պետական վե-րահսկողության և հսկողության կազմակերպման և իրականացման կարգին, ինչպես նաև իրավական ակտերով սահմանված պետական այլ գործա-ռություններ, որոնք վերապահված են ՀՀ ֆինանսների նախարարությանը, ՀՀ կենտրոնական բանկին: Խոսքը հանձին հիշատակված մարմինների, ար-ժեթղթերի սահմանված գործառնությունների խախտումների դեպքում, ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցների օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումն է, որը պետա-

կան գործառույթ է, և վկայում է արժեթղթերի իրա-վահարաբերություններում հանդես եկող կողմերից մեկի իշխանության լիազորություններով օժտված լինելու և պետության անունից հանդես գալու իրա-վազորության մասին[5]:

Հետևաբար, արժեթղթերի շուկայի կառավա-րումը կազմակերպող սուբյեկտների օրենքով վե-րապահված գործառնությունների իրավական բնույթի հետազոտությունները ավելի հիմնավոր են դարձ-նում շուկայի հանրային իրավական կարգավոր-ման ծավալների անսահմանափակությունները:

Արժեթղթերի շուկան կարգավորող գործող իրավական ակտերը սահմանում են, որ արժեթղթե-րի շուկայի մասնակիցներն են՝ թողարկողները, մասնագիտացված գործունեություն իրականաց-նող անձինք, առևտրային կազմակերպություննե-րը, ֆոնդային բորսաները, ամրագրելով սրանցից յուրաքանչյուրի ֆինանսաիրավական լիազորու-թյունները:

Արժեթղթերի շուկան արժեթղթերի թողարկ-ման, տեղաբաշխման և հրապարակային առքու-վաճառքի առնչությամբ առաջացող ֆինանսաիրա-վական փոխհարաբերությունների համակարգ է, որտեղ իրականացվում է մասնագիտացված գոր-ծունեություն:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածի համաձայն՝ արժեթղթերի շուկա-յի կարգավորման նպատակն է ներդրողների պաշտպանությունը, արժեթղթերի շուկայի մասնա-կիցների գործունեության թափանցելիության ապահովումը, արժեթղթերի շուկայի, արժեթղթերով գործարքների վճարահաշվարկային համակարգի արդյունավետ գործունեության ապահովումը, կա-տարելագործումը և զարգացումը, արժեթղթերի ար-ժանահավատ գնագոյացման համակարգի ձևավո-րումը և ապահովումը, ինչպես նաև արժեթղթերի և դրանցով իրականացվող գործարքների համար նախատեսված դրամական միջոցների օգտագործ-ման և վարկային համակարգի անվտանգության ապահովումը:

Արժեթղթերի շուկայի մասնակիցները բազմա-զան են: Ըստ էության, նրանք մասնագիտացված, իրավակազմակերպչական այս կամ այն ձև ունե-ցող ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք ապահովում են արժեթղթերի թողարկողից ներդրողին հասցնելու գործընթացը:

Իրավաբանական գրականության մեջ ար-ժեթղթերի շուկայի մասնակիցները որոշակի հիմքե-րով ենթարկվում են դասակարգման:

Շուկայի մասնակիցների առաջին խումբը բնութագրվում է արժեթղթերի գործիքների տարբե-

րակությամբ, ինչպիսիք են պարտատոմսերի, փոխառությունների, դեպոզիտային խնայողական սերտիֆիկատների վաճառքի շուկաները:

Մասնակիցների երկրորդ խումբը սահմանազատվում է կազմակերպվածության աստիճանով: Առանձնաճանաչում են կազմակերպված և չկազմակերպված շուկաներ, որոնք արժեթղթերի շրջանառությունը կազմակերպում են բորսայական սկզբունքներով:

Մասնակիցների երրորդ խմբում պետական, մունիցիպալ և կորպորատիվ արժեթղթերի շուկաներն են:

Վերջապես, արժեթղթերի շուկայի մասնակիցները տարբերվում են ըստ արժեթղթերի վաճառքի սկզբունքների, որոնք հանդես են գալիս որպես առաջին վաճառքի և երկրորդական (ազատ շրջանառության) շուկաներ[6]:

Արժեթղթերի շուկայի հիշատակված մասնակիցների համակարգում գործող օրենսդրությունը կարգավիճակի ֆինանսաիրավական առանձնահատկություններով ընդգծում է արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներին:

Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն է համարվում այն գործունեությունը, որը ենթակա է լիցենզավորման Կենտրոնական բանկի կողմից՝ «Արժեթղթերի շուկայի կազմակերպման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք են ներդրումային ծառայություններ մատուցող անձը, ներդրումային և օտարերկրյա ներդրումային ընկերությունը, արժեթղթերի կառավարիչը կարգավորվող շուկան և օպերատորը:

Կարգավորվող շուկայի օպերատոր է համարվում այն անձը, որը կազմակերպում է կարգավորող շուկայի գործունեությունը: Գործող օրենքում կարգավորող շուկա է համարվում հանրության համար ուղղակիորեն կամ անուղակիորեն մատչելի կազմակերպչական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգը, որը կանոնավոր կերպով արժեթղթերի առքի, վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառնություններ: Կարգավորող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորող շուկաները:

Օրենքում սահմանված է նաև «Արժեթղթերի փաթեթի կառավարում» հասկացությունը, ըստ որի արժեթղթերի փաթեթի կառավարում է համարվում

կառավարչի կողմից իր տիրապետմանը հանձնված հաճախորդին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարումը՝ հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն:

Հավատարմագրային կառավարիչը Կենտրոնական բանկի կողմից հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա ստացած առևտրային կազմակերպությունն է, որը պարտավոր է սահմանել հավատարմագրային կառավարման գործունեությունը կարգավորող կանոններ, որոնք պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված պահանջներին:

ՀՀ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 5-րդ բաժինը նվիրված է արժեթղթերի պահառության և կենտրոնական դեպոզիտարիատի իրավական կարգավորման հիմնահարցերին: Արժեթղթերի պահառության գործունեությունը արժեթղթերի պահպանության, պահառության և արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման ու փոխանցման գործունեությունն է:

Արժեթղթերի պահառու է համարվում պահառության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձը, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիան: Յուրաքանչյուր պահառու համարվում է Կենտրոնական դեպոզիտարիայի ենթապահառու՝ Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված բացառություններով: Ենթապահառուի գործառնություններն իրականացվում են Կենտրոնական բանկի որոշումներին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա:

Կենտրոնական դեպոզիտարիայի խնդիրները, իրավասությունը, ինչպես նաև գործառնությունների շրջանակը սահմանված է գործող օրենքի 175 - րդ և 176-րդ հոդվածներով:

Կենտրոնական դեպոզիտարիան բաժնետիրական ընկերություն է, որը սույն օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և իր կանոններով սահմանված կարգով իրականացնում է կենտրոնացված պահառուի, կենտրոնացված ռեեստրավարի և արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորի գործառնությունները:

Կենտրոնական դեպոզիտարիայի վրա տարածվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները, եթե օրենքով այլ

առանձնահատկություններ սահմանված չեն:

Օրենքի 5-րդ բաժնի դրույթները չեն տարածվում Կենտրոնական բանկի վրա, եթե Կենտրոնական բանկն իրականացնում է կենտրոնացված պահառուի հաշվարկային համակարգի օպերատորի գործառնություններ՝ Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթերի գծով:

Կենտրոնական դեպոզիտարիան օժտված է նաև վերահսկողական լիազորություններով: Այսպես, օրենքի 183-րդ հոդվածում ասվում է, որ.

1. Կենտրոնական դեպոզիտարիան վերահսկում է արժեթղթերով գործարքների քլիրինգի (հաշվանցում) և վերջնահաշվարկի, ինչպես նաև արժեթղթերի պահառության հետ կապված ծառայությունների մատուցման գործընթացը՝ պահառուների և հաշվարկային համակարգի անդամների կողմից խախտումների բացահայտման նպատակով:

2. Կենտրոնական դեպոզիտարիան վերահսկողություն է իրականացնում հաշվարկային համակարգի անդամների վճարունակության նկատմամբ՝ վերջիններիս կողմից իրենց պարտավորությունների չկատարման ռիսկերը կառավարելու նպատակով:

Անդրադառնալով հիշարկված հոդվածով կենտրոնական դեպոզիտարիային վերապահված վերահսկողական լիազորություններին՝ նկատենք, որ վերջինս հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ իրավաբանական անձի սահմանման տեսակների, հայեցակարգային դրույթներին:

Այլ խոսքով վերահսկողությունը պետական գործառնությ է, որը ներհատուկ չէ մասնավոր իրավունքի ճյուղերին այն դեպքում, երբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 175-176-րդ հոդվածները սահմանում են, որ կենտրոնական դեպոզիտարիան բաժնետիրական ընկերություն է:

Հետևաբար, շահույթ հետապնդող իրավաբանական անձին վերահսկողական լիազորություններ վերապահել և վերահսկողությամբ հայտնաբերված իրավախախտներին պատասխանատվության ենթարկելը էական տեղաշարժեր է առաջացնում պետական և տնտեսական մարմինների իրավական կարգավիճակի սահմանազատումների հարցում, կասկածի տակ առնելով իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական ուսմունքները: Նման բացառություններով օժտված են միայն կենտրոնական և ազգային բանկերը, որոնք օժտված են վերահսկողության և հսկողության իրականացման լիազորություններով, ինչպես նաև տնտեսական և իրավական նորմատիվները խախտած առևտրային բանկերի նկատմամբ իրավունք

ունեն կիրառել ֆինանսական հարկադրանքի միջոցներ:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների համակարգում իրավական կարգավիճակի առանձնահատկություններով անհրաժեշտ է սահմանազատել ֆոնդային բորսան, որն ինքնակարգավորվող կազմակերպություն է և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կենտրոնական բանկի որոշմամբ և իր կանոններով սահմանված կարգով կազմակերպվում է արժեթղթերի հրապարակային առևտուր՝ արժեթղթերի գնանշում, դրանց հիման վրա գործարքների կնքում, կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) որոշում և հաշվանցում (քլիրինգ): Բորսան կազմակերպում է արտարժույթի հրապարակային առևտուր միայն արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզիայի հիման վրա: Կենտրոնական բանկի սահմանած կարգով կազմակերպում է ֆոնդային այլ ապրանքների հրապարակային առևտուր:

Արժեթղթերի շուկայի զարգացմանը զուգընթաց այսօր ծնունդ են առնում իրավական նոր կատեգորիաներ, որոնք հնարավորություն են ընձեռում բացահայտել այն նոր երևույթները, որոնք սկզբնավորվում են ֆինանսական շուկայում:

Այսօր արժեթղթերի ավանդական հասկացությունը ձեռք է բերել ոչ միայն նոր բովանդակություն, այլև նոր իմաստ: Արժեթղթերի շուկայում երևան են եկել ոչ միայն նոր և բազմաձև արժեթղթեր, այլև լայնորեն շրջանառում են կազմակերպությունների անկանխիկ արժեթղթեր, որոնք որպես փաստաթուղթ, փոխարինում են ավանդային արժեթղթերին:

Արժեթղթերի իրավական ռեժիմը սահմանող գործող օրենսդրական ակտերի ուսումնասիրություններից դժվար չէ կռահել, որ արժեթղթերն իրենց ֆինանսաիրավական կարգավորման առանձնահատկություններով կարելի է դասակարգել ըստ լիազոր սուբյեկտի որոշակիության, ըստ սուբյեկտի պարտավորության, արժեթղթերի պետական կարգավորման կարծրության, կամ արժեթղթերի նկատմամբ իրավունքների ձեռք բերման առանձնահատկությունների, արժեթղթերում արտահայտված գույքային իրավունքների ամրագրման բնույթի, վերջապես, ըստ արժեթղթերի թողարկման ձևի: Հիշատակված բոլոր գործոնները բացառապես ունեն իշխանակազմակերպական բնույթ, որտեղ միայն արժեթղթի առարկա է հանդիսանում գույք կամ գույքային իրավունքների ձեռք բերման հնարավորությունը:

Արժեքների՝ ըստ լիազոր սուբյեկտի որոշակիության դասակարգումը, առաջին հերթին վկայում է արժեքների ձեռք բերման և պահման օրինականության մասին, որն ընկած է արժեքների դասակարգման հիմքում: Ըստ լիազոր սուբյեկտի որոշակիության, արժեքներով հավաստվող իրավունքներից ելնելով՝ արժեքները բաժանվում են ըստ ներկայացնողի, օրդերային և անվանական արժեքների:

Արժեքների այսպիսի դասակարգումը առաջին հերթին նպաստում է վերջիններիս շրջանառության և այլ անձանց իրավունքների փոխանցման կարգի և ձևերի կատարելագործմանը:

Արժեքների համակարգում իր բարձր շրջանառությամբ առանձնանում է ըստ ներկայացնողի արժեքները, քանի որ վերջինիս միջոցով այլ իրավունքների այլ անձանց փոխանցումը կատարվում է պարզեցված կարգով, այսինքն՝ բավական է միայն ներկայացնել արժեքի օրիգինալը, որպիսի հավաստվի այն ներկայացնողի սեփականության իրավունքը:

Օրդերային արժեքները սահմանափակ տարածում ունեն: Դրանց թվին է դասվում մուրհակը: Այս արժեքով գույքային իրավունքները պատկանում են այնտեղ նշված անձին, ով կարող է ինքնին իրականացնել այդ իրավունքները կամ իր համաձայնությամբ նշանակել այլ իրավագոր անձի:

Գործնականում իրավունքների փոխանցման ակտիվ գործընթաց է սահմանված անվանական արժեքին, այսինքն արժեքի պատկանելությունը կամ դրա նկատմամբ իրավունքը պատկանում է այն անձին, ում անունը նշված է արժեքի մեջ:

Ըստ սուբյեկտի պարտավորության չափանիշի՝ արժեքները բաժանվում են պետական (մունիցիպալ) և կորպորատիվ արժեքների:

Արժեքների այսպիսի դասակարգումն էական նշանակություն ունի դրանց տնտեսական և իրավական բնութագրերի համար, որոնք արտահայտում են արժեքների հոսալիությունը և բարձրացնում դրանց հեղինակությունը շուկայում: **Պետական (մունիցիպալ) արժեքների դրական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այս արժեքները օժտված են հանրային իշխանությամբ, խոսքը վերաբերվում է հարկային մուտքերին և պետության էմիսիոն իրավունքների իրականացմանը:**

Ինչ վերաբերում է կորպորատիվ արժեքներին, որոնք կարող են թողարկվել պետական կամ մունիցիպալ իշխանությունների կողմից ստեղծված կազմակերպությունների կողմից, ապա պետք է նկատել, որ պետությունը կամ տեղական իշխանությունները պատասխանատվություն չեն կրում

նրանց արժեքների համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Արժեքները ըստ պետական կարգավորման կարծրության կամ արժեքների նկատմամբ իրավունքների ձեռք բերման հատկանիշի կարող են հանդես գալ էմիսիոն և ոչ էմիսիոն արժեքների տեսքով: Էմիսիոն արժեքներին հատուկ է պետական հաշվումը, գրանցումը, տեղաբաշխումը: Այսպիսի ընթացակարգը հնարավորություն է ստեղծում մշտական հսկողություն իրականացնել էմիսիոն արժեքների թողարկման նկատմամբ[7]:

«Արժեքների շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներից բխում է, որ էմիսիոն արժեքներն օժտված են նաև այնպիսի հատկանիշներով, ըստ որոնց արժեքներն ամրագրում են «գույքային և ոչ գույքային իրավունքներ» հասկացությունը, որոնք ենթակա են հավաստման, զիջման և օրենքով սահմանված կարգով իրականացման:

Էմիսիոն արժեքները, բացի տեղաբաշխումից և թողարկումից, ունեն իրավունքների իրականացման համար ծավալ և ժամկետներ մեկ թողարկման ներսում, անկախ արժեքների ձեռք բերման ժամկետի:

Ոչ էմիսիոն արժեքները որպես կանոն, գործնականում թողարկվում են առևտրաշրջանառության նպատակով և արտահայտվում են կոնոսամենտներով և այլ ձևերով: Վերջիններս չունեն էմիսիոն արժեքներին հատուկ հիշատակված հատկանիշները: Արժեքների դասակարգման չափանիշներից է գույքային իրավունքների ամրագրման բնույթը, ըստ որի արժեքները դասակարգվում են դրամական բնույթի պահանջի իրավունքների: Դրանց թվին կարելի է դասել ապրանքաբաշխիչ փաստաթղթերը, որոնք արտահայտվում են կոնոսամենտում և դրամական այնպիսի պահանջներ, որոնք վկայում են պահանջատիրոջ մասնակցության աստիճանը համապատասխան առևտրային կազմակերպության հիմնադրման գործընթացին և նրա կառավարմանը: Այսպիսի արժեքն ունի է հանդիսանում բաժնետոմսը:

Վերջապես, արժեքները դասակարգվում են ըստ թողարկման ձևի և հանդես են գալիս փաստաթղթակցված և չփաստաթղթակցված արժեքների տեսքով: Փաստաթղթակցված համարվում է այն արժեքն ունի, որի տիրապետողը սահմանված կարգով փաստաթղթային ձևակերպումների հիման վրա ձեռք է բերում արժեքի սերտիֆիկատ, իսկ չփաստաթղթակցված արժեքի տիրապետողը միայն գրանցվում է և հաշվառման վերցվում արժեքներ տիրապետող անձանց ցուցակում:

Արժեթղթերի նկատմամբ իրավունք ձեռք բերումը պայմանավորված է վերը հիշատակված արժեթղթերի թողարկման կարգով, որի մանրամասները սահմանված են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում:

Գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 153-րդ հոդվածում սպառիչ կերպով թվարկված են արժեթղթերի տեսակները, դրանց քաղաքացիաիրավական կարգավորումները:

Արժեթղթերի շուկայի և արժեթղթերի ֆինանսական իրավունքի ճյուղին՝ որպես իրավական ինստիտուտ պատկանելիության հիմնախնդրի գիտական վերլուծությունները պահանջում են արժեթղթերի յուրաքանչյուր տեսակի քաղաքացիաիրավական կարգավորումներից սահմանազատել ֆինանսաիրավական այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են հանրային-իրավական (պետական) կարգավորումներին և օբյեկտիվորեն վկայում են, որ արժեթղթերի շուկայի իրավական կարգավորումներն ունեն համալիր (կոմպլեքսային) բնույթ:

Արժեթղթերի շուկայի, ինչպես նաև արժեթղթերի շուրջ ձևավորված տնտեսագիտական, իրավաբանական գիտական հայեցակարգերի ելակետային դրույթները, այդ թվում արժեթղթերի շուկան կարգավորող գործող օրենսդրության ուսումնասիրությունների հիման վրա արժեթղթերի ֆինանսաիրավական կարգավորման առանձնահատկությունների հիմնավոր փաստարկները երևան են գալիս էմիսիոն արժեթղթերի մասնակիցների կարգավիճակը լուսաբանելիս:

Այս նպատակով ընդգծենք, որ այդպիսիք են հանդիսանում

- ա) էմիտենտները,
- բ) արժեթղթերի հաշվառման մարմինները,
- գ) ներդրողները,

դ) անդերայտերները:

Արժեթղթերի շուկայում որպես էմիտենտներ հանդես են գալիս գործադիր իշխանությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց արժեթղթեր թողարկելու իրավունք է վերապահված:

Արժեթղթերի շուկայում իրենց պետաիրավական գործունեությամբ որպես արժեթղթերի պետական հաշվառումը կազմակերպող մարմիններ հանդես են գալիս գործադիր իշխանության մարմինները, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկը: Խոսքը վերաբերում է այնպիսի արժեթղթերին, ինչպիսիք են պետության գանձարկղային տոմսերը: Այս սերտիֆիկատները թողարկվում են ՀՀ Կենտրոնական բանկի և այլ բանկերի կողմից որոշակի տոկոսներով:

Ինչ վերաբերում է ինվեստորներին և անդերայտներին, ապա վերջիններս նույնպես կարող են հանդես գալ պետության անունից և իրականացնել իշխանական լիազորություններ:

Հիմնախնդրի վերլուծական բացահայտումները բերում են այն համոզման, որ արժեթղթերի շուկայի գործունեության իրավակարգավորումները հանրապետության գործադիր մարմինների ֆինանսատնտեսական քաղաքականության ապահովման իրավական երաշխիքներ են, հանրային ֆինանսների ոլորտում կոռուպցիայի և ֆինանսական իրավախախտումների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպման ճանապարհին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Фишер С., Дорнбуш Р., Шмалензи, “Экономика”, пер. с англ. со 2-го изд., М., “Дело”, ЛТД, 1993, С. 554.

2 ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 17 (115), 2000թ.:

3 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, Եր., 2020:

4 Гражданское право (часть первая), М., “Юрист”, 1997:

5 Финансовое право, (под. ред. доктора юридических наук, проф. И.Ш. Киясханова), 2-ое издание, Закон и право, М., “Юнити”, 2007:

6 Ն.Գ. Սուքիասյան, Ֆինանսական իրավունք (ուսումնական ձեռնարկ բուհերի համար), Եր., 2020:

Назели Сукиасян

Доцент кафедры обществознания Армянского
государственного экономического университета,
доктор юридических наук

РЕЗЮМЕ

Особенности финансово-правового регулирования ценных бумаг

В статье впервые предпринята попытка разграничить особенности финансово-правового регулирования ценных бумаг и гражданско-правового регулирования ценных бумаг и рынка ценных бумаг. На практике эти особенности подчеркивают властные, организационно-правовые и контрольно-надзорные полномочия государства и органов местного самоуправления, разграничивая финансово-правовое регулирование ценных бумаг и имущественные гражданские правоотношения.

На основании публично-правовых регулирований деятельности рынка ценных бумаг нами внесен ряд предложений по исправлению правовых ошибок и устранению законодательных пробелов, нашедших место в действующем Законе “О рынке ценных бумаг”.

Впервые в статье из-за неверных законодательных формулировок выявлено, что центральный депозитарий как юридическое лицо (акционерного общества), являясь одним из подразделений рынка ценных бумаг, не может осуществлять контрольно-надзорные полномочия, поскольку осуществляет экономическую деятельность и не имеет полномочий на выполнение государственных функций.

Ключевые слова: ценные бумаги, рынок ценных бумаг, выпуск ценных бумаг, размещение ценных бумаг, чек, вексель, депозитарий, фондовая биржа.

Nazeli Sukiasyan

Associate Professor of the Chair of Social Sciences
of the Armenian State University of Economics
Doctor of Law Sciences

SUMMARY

Peculiarities of financial legal regulation of securities

This article for the first time attempts to distinguish the peculiarities of financial legal regulation of securities from the civil-legal regulation of the securities market and securities. Such peculiarities in practice emphasize the governmental, legal, organizational, supervisory and control powers of the state and local self-government bodies, thus distinguishing financial legal regulation of securities from property civil legal relations.

Based on the public legal regulations of the securities market, a number of proposals have been put forward to correct a number of errors of law and legislative gaps in the current Law on the Securities Market.

This article for the first time reveals that due to incorrect wording of the legislation, the central depository – as one of the subdivisions of securities market – acts as a legal entity (in a joint stock company) and cannot exercise supervisory and control powers, since the central depository carries out economic activity and shall have no power to perform state functions.

Key words: securities, securities market, securities issue, placement of securities, receipt, promissory note, depository, stock exchange.

Բնագիրը ներկայացվել է 20.04.2022թ.
Ընդունվել է տպագրության 27.04.2022թ.

ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի օգնական,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ

ԱՐՄԱՆ ՀԱԿՈՒԶԱՆՅԱՆ

«Վարդանյան և գործընկերներ» ՍՊԸ, իրավաբան

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ**

Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի հռչակումն ինքնին, առանց վնասի հատուցման նախապայմանների հստակեցման, դեռ բավարար չէ վնասի հատուցումը երաշխավորելու համար:

Սույն աշխատանքում վերլուծվում են՝ հայրենական և արտասահմանյան օրենսդրության, տեսական աղբյուրների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Վճռաբեկ դատարանի և Եվրոպական միության արդարադատության դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում վերլուծվում են ոչ նյութական վնասի առկայությունը և վարչարարության ոչ իրավաչափությունը՝ որպես վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայմաններ:

Արդյունքում, հեղինակները եզրակացնում են, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ հիմնարար իրավունքի կամ ազատության խախտման հանգամանքը չի կարող քննության առարկա դառնալ վնասի հատուցման վարույթում, իսկ ոչ նյութական վնասի առկայության հանգամանքը, որպես ընդհանուր կանոն, պետք է ներառվի ապացուցման առարկայում, և տուժողը պետք է կրի ոչ նյութական վնասի առկայության հանգամանքի ապացուցման բեռը:

Հիմնաբաներ - ոչ իրավաչափ վարչարարություն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք, ոչ նյութական վնաս, հիմնարար իրավունքների և ազատությունների խախտմամբ պատճառված վնաս, ոչ նյութական վնասի հատուցում, վնասի հատուցման նախապայմաններ:

Սահմանադրությամբ¹ վարչարարությամբ պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի ամրագրումը (62-րդ հոդված) դեռևս չի կարող դիտարկվել որպես՝ միայն վնասի առկայության դեպքում վարչարարությամբ պատճառված վնասի փոխհատուցման իրավական երաշխիք: Վնասի փոխհատուցման համար պարտադիր է նաև վնասի փոխհատուցման նախապայմանների առկայությունը: Միջազգային լայն ճանաչում ունեցող սկզբունքի համաձայն՝ անձի համար պետք է հասանելի լինի ոչ միայն իր իրավունքները խախտող ակտի վերացումն ու խախտված իրավունքների ու օրինական շահերի վերականգնումը, այլև այդպիսի ակտով պատճառված վնասների հատուցումը: Թերևս սա է պատճառը, որ ժամանակակից գրեթե բոլոր իրավական համակարգերում հնարավոր է հանդիպել այնպիսի իրավակարգավորումների, որոնք հնարավորություն են տալիս ֆիզիկական կամ իրավաբանական անձին, համապատասխան վավերապայմանների առկայության դեպքում ստանալու փոխհատուցում՝ իշխանության մարմինների, մասնավորապես՝ վարչական մարմինների գործունեության ընթացքում իրենց պատճառված վնասի

համար²:

Եվրոպական միության արդարադատության դատարանը, անդրադառնալով պետության կողմից պատճառված վնասի (այդ թվում՝ ոչ նյութական վնասի) հատուցման նախապայմաններին, դրանց շարքում առանձնացրել է հետևյալ չորսը.

- 1) օրենքի խախտված դրույթը վերաբերում է անձի իրավունքներին,
- 2) խախտումը բավականաչափ լուրջ է,
- 3) պատճառվել է վնաս,
- 4) առկա է անմիջական պատճառական կապ խախտման և պատճառված վնասի միջև³:

Վնասի փոխհատուցման նախապայմանների վերաբերյալ կայուն իրավական պրակտիկա է ձևավորել Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ, ընդհանուր առմամբ, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պայմանը վարչական մարմնի իրավական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելն է և դրանց ու պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը⁴: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը, ըստ էության, նույնացրել է վարչարարությամբ պատճառված գույքային և ոչ գույքային վնասի փոխհատուցման նախապայմանները՝ երկու դեպքում էլ

որպես այդպիսիք սահմանելով՝

- 1) վարչարարության ոչ իրավաչափությունը,
- 2) վնասի առկայությունը,
- 3) վնասի և ոչ իրավաչափ վարչարարության

միջև պատճառահետևանքային կապի առկայությունը՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի⁶ (այսուհետ՝ Օրենք)՝ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի փոխհատուցմանը վերաբերող 104-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ ի տարբերություն վարչարարությամբ պատճառված գույքային վնասի, որի փոխհատուցման հիմքը ոչ իրավաչափ վարչարարությունն է ինքնին, ոչ գույքային վնասի դեպքում վարչարարության ոչ իրավաչափության հաստատումը դեռևս վնասի փոխհատուցման լիարժեք նախապայման չէ: Այսպես, ի տարբերություն ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված գույքային վնասի հատուցման, որն ըստ էության փոխհատուցում է ինքնին վարչական մարմնի ոչ իրավաչափ գործելու դիմաց, վարչարարությամբ պատճառված ոչ գույքային, այդ թվում՝ ոչ նյութական⁷ վնասի հատուցումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նաև (մեր կարծիքով՝ նախևառաջ) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման դիմաց փոխհատուցում է: Հետևաբար, ոչ նյութական վնասի հատուցման համար, բացի վարչարարության ոչ իրավաչափությունից, անհրաժեշտ է նաև, որ վնասը պատճառված լինի անձի հիմնարար իրավունքների խախտման միջոցով: Ուստի վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման առաջնահերթ նպատակն է՝ խախտված հիմնարար իրավունքի վերականգնումը:

Առհասարակ, հանրային իշխանության, այդ թվում նաև՝ վարչարարության իրականացումը ոչ իրավաչափ համարելու հիմքում, սովորաբար հենց դրա արդյունքում, հիմնարար իրավունքների խախտումն է՝⁸ Դժվար է պատկերացնել մի իրավիճակ, երբ ոչ իրավաչափ վարչարարությունը չհանգեցնի անձի որևէ հիմնարար իրավունքի խախտմանը: Հիմնարար իրավունքի խախտմամբ պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցումը հիմնարար իրավունքների պաշտպանության կոնվենցիոն և սահմանադրական երաշխիքների կարևոր բաղկացուցիչն է: Հաշվի առնելով նաև այն, որ 2015 թվականի Սահմանադրության փոփոխություններով ամրագրում է ստացել նաև պատշաճ վարչարարության իրավունքը՝ որպես անձի հիմնարար իրավունք պարզ է դառնում, որ վարչարարության՝ որոշակի փաստական հետևանքներ

առաջացնող ոչ իրավաչափության գրեթե բոլոր դեպքերում հիմնարար իրավունքի խախտումն առկա է՝ առնվազն պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի խախտման համատեքստում:

Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայման է ոչ թե պարզապես վարչական մարմնի գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչված լինելը, այլ այդպիսի գործողության, անգործության կամ վարչական ակտի ոչ իրավաչափության հետևանքով տուժողի հիմնարար իրավունքի խախտումը: Այս համատեքստում քննարկման ենթակա է այն հարցը, թե արդյոք վնասի փոխհատուցման պահանջի բավարարման համար տուժողի հիմնարար իրավունքի խախտումը պետք է հաստատված լինի վարչարարության իրավաչափության սկզբնական վարույթում, թե այն, ի թիվս վնասի հատուցման մյուս՝ ոչ նյութական վնասի և պատճառահետևանքային կապի առկայության վավերապայմանների, ենթակա է քննության վնասի փոխհատուցման վարույթի շրջանակում:

Օրենքի համապատասխան դրույթների վերլուծությունից բխում է, որ այս հարցի վերաբերյալ այն հստակ կարգավորում չի բովանդակում և սահմանափակվում է նշելով, որ ոչ նյութական վնասը պետք է պատճառված լինի որոշակի խումբ հիմնարար իրավունքների խախտման միջոցով, ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Անդրադառնալով հիմնարար իրավունքի՝ ոչ նյութական վնասի փոխհատուցման հիմք հանդիսացող խախտմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերջիններիս կողմից կատարված խախտումը չպետք է լինի ենթադրյալ խախտում. այն պետք է հաստատված լինի դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից՝¹⁰

Վարչարարության ոչ իրավաչափության հաստատման վարչական վարույթը կամ դատարանի կողմից այդպիսի պահանջով գործի քննությունը ենթադրում են, որ տուժողը պետք է հայցի կամ դիմումի հիմքում դնի բոլոր այն հանգամանքները, որոնք, իր կարծիքով, պետք է հիմք հանդիսանան համապատասխան վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու համար: Վարչական ակտը, անգործությունը կամ գործողությունն անվավեր կամ ոչ իրավաչափ ճանաչելու մասին վարչական ակտի կայացմամբ և դրա անբողոքարկելի դառնալով կամ համապատասխան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելով՝ տուժողը կորցնում է վարչարարության իրավաչափությունը հետագայում (թեկուզև այլ հիմքերով) վիճարկելու հնարավոր

րությունը՝ միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի կամ օրինական, ուժի մեջ մտած դատական ակտի առկայության հիմքով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այլ կերպ ասած՝ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտումը վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու առանձին հիմք է, և այն դեպքում, երբ այդպիսի իրավունքի խախտումը չի հաստատվել վարչարարության ոչ իրավաչափության հաստատման վարույթում, այն հետագայում ոչ գույքային վնասի փոխհատուցման վարույթում չի կարող քննության առարկա դառնալ և վարչական մարմնի կամ դատարանի կողմից հաստատվել:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա պարզ է դառնում, որ ի թիվս Վճռաբեկ դատարանի կողմից առանձնացված՝ ոչ գույքային վնասի փոխհատուցման նախապայման հանդիսացող ոչ իրավաչափ վարչարարության, վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման նախապայման է նաև ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով տուժողի որոշակի հիմնարար իրավունքի խախտումը: Ընդ որում, հիմնարար իրավունքի խախտման հանգամանքը ևս, ինչպես վարչարարության ոչ իրավաչափությունը, նախապես՝ մինչ վարչական մարմնին վնասի փոխհատուցման դիմում ներկայացնելը, պետք է հաստատված լինեն սահմանված կարգով:

Հատկանշական է, որ հիմնարար իրավունքի խախտումը նախապես, վարչարարության ոչ իրավաչափության հաստատման վարույթում հաստատված լինելու վերաբերյալ մի շարք գործերով դիրքորոշում է արտահայտվել նաև Վարչական դատարանի կողմից: Մասնավորապես, թիվ ՎԴ/2108/05/19 վարչական գործով 05.11.2019թ. կայացված վճռով Վարչական դատարանն արձանագրել է. «Տվյալ դեպքում հայցվորը, որպես ոչ իրավաչափ վարչարարությամբ խախտված իրավունքներ, վկայակոչել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի և սեփականության իրավունքի խախտումները: Մինչդեռ, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները՝ դատարանն արձանագրում է, որ Վարչական դատարանի 15.11.2018թ. վճռով կամ *որևէ այլ դատական ակտով կամ քրեական հետապնդման մարմնի որոշմամբ* (ընդգծումը մերն է) ոչ սեփականության իրավունքի, ոչ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման փաստ հաստատված չէ: Ուստի, տվյալ դեպքում առկա չէ ոչ նյութական վնասի պահանջ ներկայացնելու անհրաժեշտ պայմանը, այն է՝ դատարանի կողմից

հաստատված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու որևէ հիմնական իրավունքի խախտման փաստը, որպիսի պայմաններում ոչ նյութական վնասի հատուցումը ենթակա է մերժման»: Վարչական դատարանը այսպիսի եզրահանգման է եկել նաև թիվ ՎԴ/2308/05/18 վարչական գործով 03.08.2018թ. կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով:

Վարչական դատարանը, սակայն, վերը հիշատակված գործերով, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի համապատասխան դիրքորոշումը, հիմնարար իրավունքի խախտումը փաստելու բավարար հիմք է համարել միայն դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ այդ ցանկում չներառելով վարչական մարմնի կողմից խախտումը համապատասխան ակտով հաստատելը: Մինչդեռ՝ նման մոտեցումը հիմք ընդունելու դեպքում՝ վարչարարության վարչական կարգով բողոքարկման արդյունքում կայացված վարչական ակտով այդպիսի խախտումը հաստատվելը, փաստորեն, բավարար հիմք չի հանդիսանա հիմնարար իրավունքի խախտման առկայությունը հաստատված համարելու համար: Այս մոտեցումը, կարծում ենք՝ հիմնավորված չէ, քանի որ կարող է վարչարարությունը վարչական կարգով բողոքարկող սուբյեկտին դնել էականորեն ավելի անբարենպաստ դրության մեջ, քան վերջինս կլիներ, եթե դիմեր վարչարարության դատական կարգով բողոքարկմանը: Միևնույն ժամանակ, խիստ խնդրահարույց է քրեական հետապնդման մարմնի որոշումը վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման գործերով հիմնարար իրավունքի խախտման առկայությունը հավաստող բավարար ապացույց դիտելը: Այսպես, քրեական հետապնդման մարմնի որոշում է, օրինակ, քննիչի որոշումը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործը կարճելու մասին: Այս որոշման նպատակը և էությունը, սակայն, քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու փաստական և իրավական հիմքերը ներկայացնելն է, և քրեական հետապնդման մարմինների՝ դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի խնդիրը քրեական գործի մինչդատական վարույթում համապատասխան որոշումներ կայացնելիս վարչարարության ոչ իրավաչափությունը քննարկելը և համապատասխան իրավունքի կամ ազատության խախտման հաստատումը չէ: Այսպիսով, կարծում ենք՝ քրեական հետապնդման մարմինների որոշումները վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման նախապայման համարվող՝ հիմնարար իրավունք-

ների կամ ազատությունների խախտման հանգամանքն ինքնին (by default¹¹) հաստատված համարելու մոտեցումն արդարացված չէ՝ մասն ալն հիմնավորմամբ, որ վնասի փոխհատուցման պայման է ոչ թե պարզապես հիմնարար իրավունքի խախտման առկայությունը, այլ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով այդպիսի խախտումը, իսկ վարչարարության ոչ իրավաչափության հարցը ևս այդ մարմինների կողմից, ըստ էության, քննարկման առարկա չի դառնում:

Վերոգրյալի հիման վրա ակնհայտ է, որ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հիմք համարվող հիմնարար իրավունքի խախտումը կարող է հաստատված համարվել ինչպես դատարանի, այնպես էլ վարչական մարմնի համապատասխան ակտով, սակայն քրեական հետապնդման մարմնի որոշումն ինքնին հիմնարար իրավունքի կամ ազատության խախտման փաստը հավաստող բավարար ապացույց դիտելը խիստ խնդրահարույց է: Այսպիսով, վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի փոխհատուցման առաջին նախապայմանը վարչարարության ոչ իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում տուժողի հիմնարար իրավունքի կամ ազատության խախտման փաստը հաստատված լինելն է:

Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի առկայությունը փաստելու հարցում հիմնարար նշանակություն ունի մասն ոչ նյութական վնասի առկայության՝ որպես վնասի հատուցման նախապայմանի քննարկումը, մասնավորապես, այն հարցերի պատասխանը, թե ինչպես, ապացուցման ինչ միջոցներով պետք է հիմնավորվի ոչ նյութական վնասի առկայությունը, ով է կրում ոչ նյութական վնասի առկայության ապացուցման բեռը և արդյոք վնասի փոխհատուցման պահանջը քննող մարմինը իրավասու է մերժել ներկայացված հայցը կամ դիմումը՝ ոչ նյութական վնասի առկայությունը հաստատված չլինելու հիմքով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԵԴ) արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ չնայած այն հանգամանքին, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված բոլոր իրավունքների խախտման փաստն ինքնին դիտարկվում է որպես որոշակի ոչ նյութական վնասի պատճառում, այնուամենայնիվ, դատարանը բավարար չափով լուրջ ոչ նյութական վնասի առկայություն է արձանագրում միայն այն դեպքում, երբ տուժողը կրել է ակնհայտ վնասվածք՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական,

ցավ կամ տառապանք, անհանգստություն, ցանկությունների խախտում, անարդարության կամ անմարդկայնության, երկարաձգված անորոշության, կյանքի խախտման, հնարավորության իրական կորստի զգացում¹²:

ՄԵԴ-ը չի պահանջում դիմողից ներկայացնել իր կրած ոչ նյութական վնասի որևէ ապացույց¹³: Փոխարենը, դատարանը կիրառում է ապացուցողական չափորոշիչ՝ հիմք ընդունելով այն կանխավարկածը, որ Կոնվենցիոն իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասն առկա է¹⁴: Դատարանի կողմից այս կանխավարկածն ընտրելու հիմքում այն հանգամանքն է, որ ոչ նյութական վնասի մի շարք դրսևորումներ իրենց բնութով ապացուցման ենթակա չեն¹⁵: Ընդ որում, վնասի առկայության այս կանխավարկածի հիմքում այն մոտեցումն է, թե արդյոք միջին վիճակագրական անձը մնանատիպ իրավիճակում կկրեր ոչ նյութական վնաս¹⁶:

Փոքր-ինչ այլ է, սակայն, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը: Թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Ոչ նյութական վնասի հատուցման հիմք հանդիսացող տառապանքի, մասնավորապես՝ հոգեկան տառապանքի հաստատման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մնան տառապանքը հաստատելու համար ուղղակի ապացույցներ (օրինակ՝ բժշկական փաստաթղթեր, փորձագետի եզրակացություն) *կարող են և չենթկայացվել*: Տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցմունքներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու համար *չափից ավելի ֆորմալ պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից*: Ուստի ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին (օրինակ՝ ձեռքակալվածին պահելու պայմանները, տևողությունը, անձի անհատական հատկանիշները՝ դուրսագրգիռությունը, ներշնչվողականությունը և այլն), պետք է գնահատվի դատարանի կողմից»:

ՄԵԴ-ի դիրքորոշումներով, այսպիսով, ամրապնդված է այն կանխավարկածը, որ հիմնարար իրավունքի խախտումը անպայմանորեն պատճառում է որոշակի ոչ նյութական վնաս: Սակայն, ինչպես Օրենքը և ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումներով այս կանխավարկածն ուղղակիորեն չեն ամրագրել: Ավելին, Վճռաբեկ դատարանի վերը հիշատակված դիրքորոշման վերլուծության արդյուն-

քում կարող ենք պնդել, որ.

1) ոչ նյութական վնասի առկայությունը պետք է ներառվի ապացուցման առարկայում և տուժող կողմը պետք է կրի դրա ապացուցման բեռը,

2) ոչ նյութական վնասի առկայությունը հիմնավորող ապացույցների շրջանակը չպետք է սահմանափակված լինի, ընդ որում՝ դատարանը կամ վարչական մարմինը չունեն ոչ նյութական վնասի առկայությունը հաստատելու նպատակով փորձաքննություն նշանակելու, իսկ տուժողը՝ փորձագետի եզրակացություն կամ ապացուցման որևէ այլ կոնկրետ միջոց դատարան ներկայացնելու պարտավորություն,

3) ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին (օրինակ՝ հիմնարար իրավունքի խախտման պայմանները, տևողությունը, անձի անհատական հատկանիշները՝ դյուրագրգիռությունը, ներշնչողականությունը և այլն), պետք է գնահատվի դատարանի կողմից: Միաժամանակ, դատարանը պետք է խուսափի ապացուցման բարձր չափանիշի սահմանման հետևանքով վնասի փոխհատուցման դիմումներն անհարկի մերժելուց¹⁷:

Այնուամենայնիվ, դատական պրակտիկայի վերլուծությունից բխում է, որ ՄԻԵԴ-ի կողմից ամրագրված՝ ոչ նյութական վնասի առկայության վերաբերյալ կանխավարկածը որոշակի առումով իր արտացոլումն է գտել նաև ներպետական իրավական պրակտիկայում: Այս հանգամանքը հավաստվում է նաև նրանով, որ Վճռաբեկ դատարանը, անդրադարձ կատարելով ՄԻԵԴ-ի վերոնշյալ մոտեցումներին, որևէ կերպ դիրքորոշում չի հայտնել դրանք չկիրառելու վերաբերյալ, ինչպիսի պայմաններում դրանց վկայակոչումը ենթադրում է Վճռաբեկ դատարանի կողմից վնասի հատուցման գործի քննության ժամանակ նաև ՄԻԵԴ-ի համապատասխան դիրքորոշումների կիրառելիության ընդգծում: Այս մոտեցումը, սակայն, կարծում ենք, հիմնավորված չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Առաջին, Սահմանադրությամբ ամրագրված՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքը և Կոնվենցիայով ամրագրված արդարացի փոխհատուցման իրավունքն իրենց բովանդակությամբ նույնական չեն, և եթե վնասի հատուցման բոլոր վավերապայմանների առկայության դեպքում ոչ նյութական վնասի հատուցում տրամադրելը կամ չտրամադրելը ՄԻԵԴ-ի հայեցողության տիրույթում է, և փոխհատուցումը կարող է մերժվել՝ նաև նպատակահարմարությունից ելնելով, ապա վարչարարությամբ պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական վնասի դեպքում այդպիսի փոխհատուցում տրամադրելը վնասի

սի փոխհատուցման վավերապայմանների առկայության դեպքում վարչական մարմնի պարտականությունն է:

Այսպես, Կոնվենցիայի 41-րդ հոդվածն ամրագրում է համապատասխան վավերապայմանների դեպքում արդարացի փոխհատուցում հայցելու իրավունքը: Արդարացի փոխհատուցման գաղափարը բխում է միջազգային իրավունքի՝ պետության պատասխանատվության վերաբերյալ սկզբունքներից¹⁸, և դրա նպատակն է՝ վնաս կրած անձի համար ապահովել նույն դրությունը, «որում նա կլիներ, եթե նրա Կոնվենցիոն իրավունքը չխախտվեր»¹⁹: Արդարացի փոխհատուցման իրավունքի մաս կազմող՝ ոչ նյութական վնասի հատուցում հայցելու կոնվենցիոն իրավունքը և Սահմանադրությամբ երաշխավորված՝ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքը, սակայն, իրենց բովանդակությամբ չեն նույնանում: Չնայած այն հանգամանքին, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածը տուժողին թույլատրում է արդարացի փոխհատուցում ստանալ՝ տուժողը չունի արդարացի փոխհատուցում ստանալու իրավունք: Կոնվենցիայի համատեքստում տուժողն ունի միայն ՄԻԵԴ-ից արդարացի *փոխհատուցում հայցելու իրավունք*²⁰: ՄԻԵԴ-ն է որոշում՝ արդյոք համապատասխան վավերապայմանների առկայության դեպքում արդարացի փոխհատուցում տրամադրելն անհրաժեշտ է:

Մինչդեռ՝ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում ստանալու սահմանադրական իրավունքն այլ բովանդակություն ունի. Սահմանադրությունը երաշխավորում է ոչ միայն ոչ նյութական վնասի հատուցում հայցելու, այլև հատուցում ստանալու իրավունքը: Այլ կերպ ասած, ի տարբերություն արդարացի փոխհատուցում ստանալու կոնվենցիոն իրավունքի, վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար անհրաժեշտ վավերապայմանների առկայության դեպքում ոչ նյութական վնասի հատուցումը հանրային իշխանության մարմինների համար պարտականություն է: Ուստի, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար, անհրաժեշտ վավերապայմանների առկայության դեպքում՝ ոչ վարչական մարմինը և ոչ էլ դատարանն իրավասու չեն մերժելու վնասի փոխհատուցումը՝ նման փոխհատուցման անհրաժեշտության բացակայության, վնասի հատուցման ոչ նպատակահարմարության հիմքով:

Ընդ որում, այդ պարտականությունն առկա է՝ անկախ պատճառված ոչ նյութական վնասի բնույթից ու չափից (նշանակալիությունից): Հետևաբար,

եթե Կոնվենցիայի և ՄԻԵԴ-ի պրակտիկայի տեսանկյունից ոչ նյութական վնասի առկայության կանխավարկածի հակակշիռն այն հանգամանքն է, որ վնասի առկայության կանխավարկածն ինքնին չի ենթադրում բոլոր դեպքերում վնասի հատուցում, և դատարանն իրավասու է վնասի առկայության պայմաններում անգամ որոշակի դեպքերում փոխհատուցում չտրամադրել վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի դեպքում ո՛չ դատարանը և ո՛չ վարչական մարմինը նման իրավասությանը օժտված չեն:

Երկրորդ, իրավունքի տեսությունից հանրաճանաչ գաղափարի համաձայն՝ իրավական ցանկացած կանխավարկած որոշակի փաստական և/կամ իրավական հիմքերի առկայության պայմաններում կարող է հերքվել: Այս համատեքստում ոչ նյութական վնաս պատճառված լինելու կանխավարկածը ևս, ըստ էության, կարող է հերքվել: Վարչական վարույթի և վարչական դատավարության ապացուցման կանոններից ելնելով՝ որպես անձի համար անբարենպաստ հանգամանք, այդ կանխավարկածը հերքելու, այսինքն՝ դիմողին կամ հայցվորին ոչ նյութական վնաս պատճառված չլինելու հանգամանքի ապացուցման բեռն ինչպես վարչական վարույթում, այնպես էլ վարչական դատավարությունում կրում է վարչական մարմինը: Մինչդեռ օբյեկտիվ իրականության մեջ դժվար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ վարչական մարմինը կարողանա ապացուցել տուժողին վնաս պատճառված չլինելու հանգամանքը: Դժվար է պատկերացնել նաև, թե նման դեպքում ինչ ապացույցներ կամ ապացուցման միջոցներ կարող են կիրառվել: Թերևս, միակ հնարավոր իրավիճակն այն է, երբ հայցվորը ոչ իրավաչափ ճանաչված վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունք չի ունեցել, այդ վարչական ակտի ընդունմանը հասել է, օրինակ, կեղծ փաստաթղթերի ներկայացման միջոցով: Սակայն այս օրինակը ևս, կարծում ենք, կիրառելի չէ, քանի որ Օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ տվյալ դեպքում խոսք կարող է գնալ ոչ թե ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնաս չպատճառվելու, այլ առհասարակ վնասի փոխհատուցման իրավունքը չժագելու մասին:

Վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման գործերով ոչ նյութական վնաս պատճառված լինելու վերաբերյալ կանխավարկածը ելակետ ընդունելու դեպքում ստացվում է, որ վարչարարության ոչ իրավաչափությունը հաստատված լինելու դեպքում պրակտիկայում գրեթե անհնարին է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ կանխավարկածը կարող է հերքվել,

իսկ ներկայացված հայցը կամ դիմումը մերժվել՝ ոչ նյութական վնաս պատճառված չլինելու հիմքով: Հետևաբար, նման պայմաններում վնասի փոխհատուցման պահանջը քննող դատարանի կամ վարչական մարմնի հիմնական գործառույթը պարզապես վնասի փոխհատուցման չափը և եղանակը որոշելն է դառնում: *Ստացվում է նաև, որ ոչ նյութական վնասի փոխհատուցման վավերապայման է ոչ թե ոչ նյութական վնաս պատճառված լինելը, այլ ոչ նյութական վնաս պատճառված չլինելը. վարչական մարմնի կողմից չապացուցվելը:*

Մինչդեռ, կարծում ենք, որ առավել նպատակահարմար և արդարացված է՝ ոչ նյութական վնաս պատճառված լինելու հանգամանքը ներառել ապացուցման առարկայում, և որպես դիմողի համար իրավաստեղծ նշանակություն ունեցող հանգամանք, վերջինիս վրա դնել այդ հանգամանքի ապացուցման բեռը: Այս դեպքում ևս կիրառելի պետք է համարվի ՄԻԵԴ-ի պրակտիկայում ամրապնդված և Վճռաբեկ դատարանի կողմից արձանագրված՝ վնասի հատուցմանն ուղղված ապացույցների հարցում ճկուն մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ կանոնը՝ վնաս պատճառված լինելու հանգամանքին իրավական գնահատական տալու հարցը թողնելով դատարանին կամ վարչական մարմնին: Այնուամենայնիվ, այս կանոնից ևս, կարծում ենք՝ իրավակիրառ պրակտիկայում կարող են որոշակի բացառություններ լինել այն դեպքերում, երբ ոչ նյութական վնասը և դրա հատուցման հիմք հանդիսացող հիմնարար իրավունքի կամ ազատության խախտումն օբյեկտիվ բնույթ են կրում: Այսինքն՝ խախտումն իր բնույթով ինքնին ենթադրում է անպայմանորեն որոշակի ոչ նյութական վնասի պատճառում: Խոսքը, մասնավորապես, պատվին, արժանապատվությանը օբյեկտիվ չափանիշներից ելնելով և անհրաժեշտաբար ենթադրվող վնաս պատճառող ոչ իրավաչափ վարչարարության մասին է: Ուստի կարծում ենք, առանձին հետազատության առարկա է նման դեպքերում ոչ նյութական վնասի հատուցման պահանջը քննող մարմնի կողմից ապացուցման առարկայում ներառված վնասի առկայության հանգամանքը ապացուցված համարելու և տուժողի վրա միայն պատճառված վնասի չափը հիմնավորելու պարտականություն դնելու իրավական հնարավորությունը:

Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարության և ոչ նյութական վնասի առկայության՝ որպես վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վավերապայմանների, քննարկման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ.

- ի տարբերություն վարչարարությանը պատճառված գույքային վնասի հատուցման, որի դեպ-

քում վնասի հատուցման առաջին նախապայմանը ինքնին վարչարարությանն ոչ իրավաչափությունն է, վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման դեպքում վնասի հատուցման նախապայման է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի կամ հիմնարար ազատության խախտումը.

- ինչպես վարչարարությանն ոչ իրավաչափությունը, այնպես էլ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման առկայությունը, պետք է նախապես հաստատված լինեն վարչարարությանն ոչ իրավաչափության վարույթում՝ դատարանի կամ վարչական մարմնի կողմից, և ոչ նյութական վնասի հատուցման վարույթում քննության առարկա լինել չեն կարող.

- վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման գործերով ոչ նյութական վնասի առկայությունն ինքնին ենթադրվել և վնասի առկայության կանխավարկածը կիրառվել չի կարող, ոչ նյութական վնաս պատճառված լինե-

լու հանգամանքը, որպես ընդհանուր կանոն, պետք է ներառվի ապացուցման առարկայում, իսկ այդ հանգամանքի ապացուցման բեռը պետք է կրի տուժողը՝ վնաս պատճառված լինելու հանգամանքին իրավական գնահատական տալու հարցը թողնելով դատարանին կամ վարչական մարմնին.

- ոչ նյութական վնասի առկայությունը հիմնավորող ապացույցների շրջանակը չպետք է սահմանափակված լինի, ընդ որում՝ դատարանը կամ վարչական մարմինը չունեն ոչ նյութական վնասի առկայությունը հաստատելու նպատակով փորձաքննություն նշանակելու, իսկ տուժողը՝ փորձագետի եզրակացություն կամ ապացուցման որևէ այլ կոնկրետ միջոց դատարան ներկայացնելու պարտավորություն, և ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին, պետք է գնահատվի դատարանի կողմից:

¹ Ընդունվել է 06.12.2015թվականին, տե՛ս, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118-րդ:

² Տե՛ս, J. Bell and AW. Bradley, Governmental Liability: A Comparative Study, United Kingdom National Committee of Comparative Law; London: 1991, էջեր 1-2:

³ Տե՛ս, օրինակ, ԵՄ Արդարադատության դատարանի թիվ C-6/90 և C-9/90 Francovich, Bonifaci and others V Italy միացված գործերով 1991 թվականի նոյեմբերի 19-ի վճիռը (հասանելի է <http://curia.europa.eu/juris/liste.jsf?num=C-6/90>), թիվ C-46/93 Brasserie du PÜcheur SA v Bundesrepublik Deutschland գործով 05.03.1996թ. վճիռը և թիվ C-48/93 The Queen v Secretary of State for Transport, ex parte: Factortame Ltd and others գործերով վճիռը (հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61993CJ0046> 04.02.2022թ.):

⁴ Տե՛ս, թիվ ՎԳ-1/761/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը:

⁵ Տե՛ս, օրինակ, թիվ ԵԿԳ-0441/02/16 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 07.04.2018թ. որոշումը:

⁶ Ընդունվել է 18.02.2004թ. (տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413-րդ):

⁷ Հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, որը վնասն ըստ տեսակների դասակարգում է՝ հիմքում դնելով դրա նյութական և ոչ նյութական լինելը, Օրենքը վնասը դասակարգում է գույքային և ոչ գույքային տեսակների՝ ոչ գույքային վնաս հասկացության ներքո ներառելով ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը (հոգեկան ցավը, տառապանքը, այդ թվում՝ հիմնարար իրավունքների խախտմամբ պատճառված վնասը), այնպես էլ կյանքին և առողջությանը պատճառված վնասը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր մոտեցմամբ, կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրներն էականորեն տարբերվում են անձի հոգեկան ամբողջականության խախտման հետևանքով պատճառված վնասի հիմնախնդիրներից, սույն աշխատանքի շրջանակում օգտագործվում է առավելապես «ոչ նյութական վնաս» հասկացությունը՝ դրա ներքո հասկանալով հիմնարար իրավունքների խախտման հետևանքով տուժողի հոգեկան ամբողջականության խախտմամբ պատճառված վնասը, այլ կերպ ասած՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ (օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) վերջիններիս հիմնարար իրավունքների խախտմամբ (ներառյալ՝ պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին) պատճառված ֆիզիկական կամ հոգեկան ցավը կամ տառապանքը:

⁸ Տե՛ս, Alexia Solomou, The Contribution of the European Court of Human Rights and the Inter-American Court of Human Rights to the Emergence of a Customary International Rule of Just Satisfaction and the Creative Expansion of its Scope, էջ 2 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.corteidh.or.cr/tablas/r34034.pdf>):

⁹ Տե՛ս, I. Stribis, Damages for the Infringement of Human Rights by the Public Authority in Greece, էջ 6:

¹⁰ Տե՛ս, թիվ ԵԿԳ-3296/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը:

¹¹ Legal Terms and Definitions <https://dictionary.law.com/Default.aspx?typed=by%20default&type=1>:

¹² Տե՛ս, Varnava and others v. Turkey, App. Nos. 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90, 16073/90, գործով ՄԻԵԴ-ի վճռի 224-րդ պարբերությունը:

¹³ Տե՛ս, Gridin v. Russia, App. No. 4171/04, (Eur. Ct. H.R. June 1, 2006), գործով ՄԻԵԴ-ի վճռի 20-րդ պարբերությունը. Firstov v. Russia, App. No. 42119/04, (Eur. Ct. H.R. February 20, 2014) գործով վճռի 49-րդ պարբերությունը:

¹⁴ Տե՛ս, Apicella v. Italy, App. No. 64890/01, (Eur. Ct. H.R. March 29, 2006) գործով ՄԻԵԴ-ի վճռի 93-րդ պարբերությունը:

¹⁵ Տե՛ս, Peck v. United Kingdom, App. No. 44647/98, (Eur. Ct. H.R. January 28, 2013) գործով ՄԻԵԴ-ի վճռի 118-րդ պարբերությունը:

¹⁶ Տե՛ս, Franz Bydlinski, Methodological Approaches to the Tort Law of the ECHR, in Tort Law In The Jurisprudence Of The European Court Of Human Rights, para. 190 (Attila Fenyves, Ernst Karner, Helmut Koziol & Elisabeth Steiner eds., 2011):

¹⁷ Դատական պրակտիկայում հանդիպում են մասնաճյուղային դեպքեր, օրինակ, թիվ ՎԴ/10865/05/18 վարչական գործով Վարչական դատարանը մերժել է հայցը՝ ոչ նյութական վնասի առկայության վերաբերյալ բավարար պացույցների բացակայության հիմքով:

¹⁸ Տե՛ս, Cyprus v. Turkey գործով ՄԻԵԴ-ի վճռի 40-րդ պարբերությունը:

¹⁹ Տե՛ս, Etnija protiv nacije, Božidar Jakšić, Filozofija I Društvo 2006 (31), 2006, էջ 465:

²⁰ Տե՛ս, Radivojevic, Zoran & Raicevic, Nebojsa. (2020). State Liability for Non-Pecuniary Damages in the Jurisprudence of the European Court of Human Rights, Одговорност Држава за Нематеријалну Штету у Јуриспруденцији Европског Суда За Људска Права. Теме. Xviv. 17-32. 10.22190/Teme191114006r., էջեր 14 (հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/341120180_STATE_LIABILITY_FOR_NON-PECUNIARY_DAMAGES_IN_THE_JURISPRUDENCE_OF_THE_EUROPEAN_COURT_OF_HUMAN_RIGHTS_ODGOVORNOST_DRZAVA_ZA_NEMATERIJALNU_STETU_U_JURISPRUDENCIJI_EVROPSKOG_SUDA_ZA_LUDSKA_PRAVA20.02.2022p.):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. Alexia Solomou, The Contribution of the European Court of Human Rights and the Inter-American Court of Human Rights to the Emergence of a Customary International Rule of Just Satisfaction and the Creative Expansion of its Scope, 2014, 22 էջ (<https://www.corteidh.or.cr/tablas/r34034.pdf> հղումը 20.02.2022թ. դրությամբ):

2. Bydlinski, Franz. «Methodological Approaches to the Tort Law of the ECHR». Tort Law in the Jurisprudence of the European Court of Human Rights, edited by Attila Fenyves, Ernst Karner, Helmut Koziol and Elisabeth Steiner, Berlin, Boston: De Gruyter, 2011, էջեր 29-128. (<https://doi.org/10.1515/9783110260007.29> հղումը 20.02.2022թ. դրությամբ):

3. Bell and AW. Bradley, Governmental Liability: A Comparative Study, United Kingdom National Committee of Comparative Law, 1991, 294 էջ:

4. Franz Bydlinski, Methodological Approaches to the Tort Law of the ECHR, in Tort Law In The Jurisprudence Of The European Court Of Human Rights (Attila Fenyves, Ernst Karner, Helmut Koziol & Elisabeth Steiner eds., 2011):

5. Radivojevic, Zoran & Raicevic, Nebojsa. (2020). State Liability for Non-Pecuniary Damages in the Jurisprudence of the European Court of Human Rights, Одговорност Држава за Нематеријалну Штету у Јуриспруденцији Европског Суда За Људска Права. Теме. Xviv.17-32. 10.22190/Teme191114006r., էջ 16 (https://www.researchgate.net/publication/341120180_STATE_LIABILITY_FOR_NON-PECUNIARY_DAMAGES_IN_THE_JURISPRUDENCE_OF_THE_EUROPEAN_COURT_OF_HUMAN_RIGHTS_ODGOVORNOST_DRZAVA_ZA_NEMATERIJALNU_STETU_U_JURISPRUDENCIJI_EVROPSKOG_SUDA_ZA_LUDSKA_PRAVA հղումը 20.02.2022թ. դրությամբ):

6. Stribis, Ioannis. «Damages for the Infringement of Human Rights by the Public Authority in Greece.» Ius Comparatum - Global Studies in Comparative Law (2016): 137–167, (https://www.academia.edu/28132287/Damages_for_the_Infringement_of_Human_Rights_by_the_Public_Authority_in_Greece հղումը 20.02.2022թ. դրությամբ):

7. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով 26.12.2016 թ. որոշում:

8. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում:

9. ԵՄ արդարադատության դատարանի թիվ C-6/90 և C-9/90 Francovich, Bonifaci and others V Italy միացված գործերով 1991 թվականի նոյեմբերի 19-ի վճիռ:

10. ԵՄ արդարադատության դատարանի թիվ C-46/93 Brasserie du PUcheur SA v Bundesrepublik Deutschland գործով 05.03.1996թ. վճիռ:

11. ԵՄ արդարադատության դատարանի թիվ C-48/93 The Queen v Secretary of State for Transport, ex parte: Factortame Ltd and others գործերով վճիռ:

12. Apicella v. Italy, App. No. 64890/01 (Eur. Ct. H.R. March 29, 2006) գործով ՄԻԵԴ-ի վճիռ:

13. Gridin v. Russia, App. No. 4171/04 (Eur. Ct. H.R. June 1, 2006) գործով ՄԻԵԴ-ի վճիռ:

14. Peck v. United Kingdom, App. No. 44647/98, (Eur. Ct. H.R. January 28, 2013) գործով ՄԻԵԴ-ի վճիռ:

15. Varnava and others v. Turkey, App. Nos. 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90, 16073/90 գործով ՄԻԵԴ-ի վճիռ:

Элина Гегамян

Ассистент главного принудительного исполнителя РА,
аспирант юридического факультета ЕГУ

Арман Акобджанян

«Варданын и партнеры» ООО, Юрист

РЕЗЮМЕ

*Некоторые вопросы по предпосылок возмещения нематериального ущерба
причиненном администрированием*

Провозглашение права на возмещение неимущественного ущерба, причиненного администрированием без выяснения предпосылок возмещения недостаточно, чтобы считать реализацию этого права гарантированным.

В данной научной статье рассматриваются наличие нематериального ущерба и незаконность администрирования, анализируется их сущность как предпосылок для возмещения неимущественного вреда - в контексте отечественного и международного законодательства и теоретических источников, правовых позиций ЕСПЧ, Кассационного суда Республики Армения и Суда Европейского Союза.

В результате авторы приходят к выводу, что факт нарушения незаконным администрированием основных прав или свобод не может быть предметом рассмотрения в рамках процедуры возмещения нематериального ущерба. Между тем, факт существования нематериального ущерба должен быть включен в предмет доказывания, а бремя доказывания данного факта лежит на потерпевшем.

Ключевые слова: *неправомерное администрирование, право на компенсацию ущерба, причиненного администрированием, нематериальный ущерб, ущерб, причиненный нарушением основных прав и свобод, компенсация за нематериальный ущерб, предпосылок возмещения вреда.*

Elina Geghamyan

Assistant to the Chief Compulsory Enforcement Officer of the RA
Postgraduate student of YSU Faculty of Law

Arman Hakobjanyan

«Vardanyan & partners» LLC, Lawyer

SUMMARY

Some issues on preconditions of remuneration of non-pecuniary damage caused by administration

The mere declaration of the right to compensation of non-pecuniary damage caused by administration is not enough to guarantee the execution of that right if the preconditions of remuneration are not clarified.

The existence of non-pecuniary damage and the illegality of administration are discussed in this scientific article and their essence as preconditions for compensation of non-property damage is analyzed – in the context of domestic and international legislation and theoretical sources, legal positions of the ECHR, the Cassation Court of the Republic of Armenia and the Court of Justice of the European Union.

As a result, the authors conclude that the fact of violation of fundamental rights or freedoms by illegal administration cannot be subject to examination during the procedure of remuneration of non-pecuniary damage. Meanwhile, the fact of the existence of non-pecuniary damage shall be included in the scope of facts to be proven with the injured entity bearing the burden of proof of that fact.

Key words: *Illegal administration, right to compensation of damage caused by administration, non-pecuniary damage, damage caused by violation of fundamental rights and freedoms, compensation for non-pecuniary damage, preconditions of remuneration of damage.*

Բնագիրը ներկայացվել է 10.03.2022թ.

Ընդունվել է տպագրության 14.03.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանը

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արդարադատության նախարարության
վերահսկողական վարչության առաջին բաժնի պետ,
Պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է վարչական արդարադատության առանձնահատկությունները պայմանավորող ելակետային սկզբունքների վերհամաձայնեցման և դրանց համակողմանի ուսումնասիրությանը: Մասնավորապես, հոդվածում ներկայացվել են վարչական արդարադատության սկզբունքների շուրջ տարբեր իրավագետների ընկալումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տարբեր պետությունների օրենսդրությամբ նախատեսված առանձնահատկությունները, դրանց շուրջ առկա խնդիրները:

Միաժամանակ, հոդվածում անդրադարձ է կատարվել վարչական արդարադատության կարևորագույն սկզբունքների շուրջ առկա խնդրահարույց օրենսդրական կարգավորումներին, համեմատականներ կատարվել այլ դատավարական սկզբունքների հետ, առաջ քաշվել եզրահանգումներ՝ ներկայացվելով համապատասխան առաջարկություններ:

Հիմնարարը՝ վարչական արդարադատության սկզբունքներ, «ex officio» սկզբունք, մրցակցության սկզբունք, տնօրինչականության սկզբունք, վարչական դատավարություն, մասնագիտացված արդարադատություն:

Արդի ժամանակներում վարչական արդարադատությունը, հանդիսանալով մասնագիտացված արդարադատության կարևորագույն և անբաժանելի մասը, առանձնանում է իրեն հատուկ մի շարք բնորոշ գծերով և ուրույն հատկանիշներով, որոնք թույլ են տալիս հստակ տարանջատելու այն արդարադատության մյուս տեսակներից՝ միաժամանակ ընդգծելով վերջինիս կարևորությունը և նշանակությունը:

Վարչական արդարադատության հիմքում դրված ղեկավար սկզբունքներն ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն արտացոլում են վարչական արդարադատության առանձնահատկությունները և հանդիսանում են դրա արդյունավետ իրականացման միջոցները: Ինչպես հայտնի է, հռոմեական իրավունքից՝ «սկզբունքն ամեն ինչի կարևոր մասն է (principium est potissima pars cuiusque rei)»: Համաձայն Ս. Վ. Նիկիտինայի բնորոշման՝ արդարադատության սկզբունքներն ընդհանուր նորմատիվ իրավական դրույթներ են, որոնք սահմանում են արդարադատության կազմակերպման և իրականացման համար ֆունդամենտալ հիմքեր՝ նպատակաուղղված լինելով դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը (արդյունավետ իրականացմանը)¹: Թերևս հարկ է կարևորել, որ վարչական արդարադատությունն իրեն հատուկ սկզբունքների կիրառմամբ է հասնում, մի կողմից, անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնմանը, մյուս կողմից՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող հակաօրինական վարչարարական տարբեր դրսևորումների կանխարգելմանը և վերացմանը, մեկ այլ կողմից՝ հանրային իշխանությամբ օժտված մարմինների և անձանց միջև առաջացող փոխհարաբերություններում օրենքի գերակայության ապահովմանը:

Վարչական արդարադատության իրականացման նպատակը բացահայտվում և արտահայտվում է դրա ելակետային սկզբունքների՝ գործնականում կենսագործման միջոցով, որոնք միաժամանակ հանդիսանում են հատուկ կանոններ վարչական դատավարության իրականացման տարբեր ընթացակարգերում՝ միտված լինելով հասնելու վարչաիրավական բնույթի վեճի արդյունավետ լուծմանը: Վարչական արդարադատության իրականացմանն ուղղված գրեթե ցանկացած նորմ կամ ընթացակարգ փոխկապակցված է որևէ դատավարական սկզբունքի հետ:

Վարչական արդարադատության իրականացման նպատակը բացահայտվում և արտահայտվում է դրա ելակետային սկզբունքների՝ գործնականում կենսագործման միջոցով, որոնք միաժամանակ հանդիսանում են հատուկ կանոններ վարչական դատավարության իրականացման տարբեր ընթացակարգերում՝ միտված լինելով հասնելու վարչաիրավական բնույթի վեճի արդյունավետ լուծմանը: Վարչական արդարադատության իրականացմանն ուղղված գրեթե ցանկացած նորմ կամ ընթացակարգ փոխկապակցված է որևէ դատավարական սկզբունքի հետ:

Ըստ Յու. Ն. Ստարիլովի՝ այս կամ այն իրավական վեճը քննելիս դատական գործունեության հիմքն են հանդիսանում դատավարության սկզբունքները²: Դատավարական սկզբունքների միջոցով են որոշվում վարչական արդարադատության էությունը և նպատակը, դատավարության տարբեր ընթացակարգերի կազմակերպման ձևերը և կարգերը, դատավարական տարբեր ընթացակարգերում դատարանի դերակատարության հնարավոր

րությունները և չափը, սահմանագծվում դատարանի, դատավարության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, դատավարության մասնակիցների՝ միմյանց և դատարանի հետ փոխհարաբերությունների շրջանակը, երաշխավորվում դատավարության մասնակիցների դատավարական իրավունքների և շահերի իրացումը:

Նշվածի համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյո՞ք վարչական արդարադատության և վարչական դատավարության իրականացման համար կարող են գործել միևնույն սկզբունքները և թե արդյո՞ք դրանք նույնական են: Հարցի կապակցությամբ հարկ ենք համարում հիշատակել «վարչական դատավարություն» հասկացության շուրջ Ն. Գ. Սալիշևայի կողմից արված այն բնութագրումը, ըստ որի՝ վարչական դատավարությունը համարվում է վարչական արդարադատության ինստիտուտի ընթացակարգային (պրոցեսուալ) բաղադրիչը³: Ըստ Վ. Վ. Յարկովի՝ վարչական դատավարության սկզբունքները վարչական դատավարության իրավունքի նորմերում ամրագրված դրույթներն են, որոնք ընկած են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերով արդարադատության իրականացման հիմքում և արտահայտում են վարչական դատավարության առանձնահատկությունները: Մեջբերված տեսակետներից կարող ենք եզրակացնել, որ վարչական դատավարությունը համարվում է վարչական արդարադատության բաղկացուցիչ մասը, իսկ վարչական դատավարության սկզբունքներն ընկած են վարչական արդարադատության իրականացման հիմքում, ուստի, վարչական արդարադատության և վարչական դատավարության սկզբունքները մեծամասամբ համընկնում են: Միաժամանակ, վարչական դատավարությունը վարչական արդարադատության իրականացման միջոց է, ձև, որը կոչված է իրագործելու վարչական արդարադատության գլխավոր նպատակները:

Տարբեր պետությունների վարչական դատավարությունը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանցում նախատեսված սկզբունքները միատեսակ ձևակերպված չեն, սակայն բովանդակային առումով շատ մոտ են. որոշ պետությունների դեպքում դրանք անվանվում են այլ կերպ կամ դրանց վերաբերյալ ձևակերպումներն ավելի լայնածավալ կամ փոքրածավալ են, իսկ որոշ դեպքերում էլ՝ դրանք զետեղված են մի քանի իրավական ակտերում: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Ե. Վ. Միցկայան, նշելով, որ տարբեր պետությունների օրենսդրությամբ սկզբունքներն իրենց անվանում-

ներով և ձևակերպումներով կարող են տարբեր լինել, սակայն իմաստով նույնը⁴:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված են թվով յոթ սկզբունքներ (դատավորների անկախության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, վարչական գործերի օրինական և արդարացի քննության ու լուծման, ողջամիտ ժամկետում վարչական դատավարության իրականացման և դատական ակտերի կատարման, դատական վարույթի դոմբաց իրականացման և հրապարակայնության, դատական վարույթի անմիջականորեն իրականացման, դատարանի ակտիվ դերակատարմամբ կողմերի մրցակցության և հավասարության հիման վրա վարչական դատավարության իրականացման), իսկ Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված են տասը սկզբունքներ, որոնք բովանդակային իմաստով հիմնականում կրկնում են Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքները և դրանից բացի նախատեսում որոշ սկզբունքներ՝ կապված դատական ակտերի պարտադիրության, բողոքարկման և դատական ծախսերի փոխհատուցման հետ⁶:

Ի տարբերություն մյուս պետությունների՝ Վրաստանի վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված են ընդամենը երեք սկզբունքներ՝ կողմերի դիսպոզիտիվության (տնօրինչականության), մրցակցության և քննչական (ինկվիզիցիոն) սկզբունքները: Հիշյալ սկզբունքը հանդիպում ենք նաև Ֆրանսիայի և Ադրբեյջանի վարչական դատավարության օրենսգրքերում⁸: Վերջինս, սակայն, իր բովանդակությամբ առավել նման է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք)՝ «Վարչական դատավարության սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխով օրենսդիրը նախատեսել է ընդամենը հինգ՝ փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու, կողմերի իրավահավասարության հիման վրա վարչական դատավարության իրականացման, գործերի բանավոր քննության, դատական վարույթի հրապարակայնության և լեզվի սկզբունքներ: Պետք է նկատել, որ Օրենսգրքով առանձնացված հինգ սկզբունքներից, ի տարբերություն մնացածի, փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին կարելի է հանդիպել բացառապես վարչական դատավարությունում, որի հիման վրա կառուցված է ամբողջ վարչական-դատավարական

ընթացակարգային առանձնահատկությունները և Վարչական դատարանի յուրատեսակ պարտականությունները՝ արդարադատության իրականացման ընթացքում⁹: Քննարկվող սկզբունքի վերաբերյալ դեռևս 2008թ. կարծիք է արտահայտել Սահմանադրական դատարանը՝ նշելով, որ առանձին սկզբունքներ էականորեն տարբերվում են քաղաքացիական դատավարության սկզբունքներից, մասնավորապես՝ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքը վարչական դատավարությանը բնորոշ կարևորագույն սկզբունքներից է¹⁰:

Փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի վերաբերյալ հիմնական կարգավորումը տրված է Օրենսգրքի՝ «Փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը» վերտառությամբ 5-րդ հոդվածով, որի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նշվածից պարզ է դառնում, որ Վարչական դատարանի կողմից մամսակտիվ դերակատարմամբ գործողություններ կատարելը ոչ թե պարզապես իրավունք կամ հայեցողություն է, այլ՝ պարտականություն, որը կատարելու համար դատարանն անհրաժեշտության դեպքում պետք է միջամտություն ցուցաբերի դատավարական տարբեր գործընթացներին՝ կատարելով գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե (ex officio) պարզելու գործառնություն:

Դատարանի այսպիսի անսովոր ակտիվությունը թելադրված է վարչական դատավարության կողմերի իրավական և փաստացի կարգավիճակով: Ինչպես նշում է Գ. Բ. Դանիելյանը՝ թեպետ քննարկվող սկզբունքի շարադրանքից ուղղակիորեն չի բխում հատկապես ֆիզիկական և իրավաբանական անձանց փաստացի իրավահավասարությունն ապահովելու անհրաժեշտությունը, սակայն դա պարզ է դառնում Օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծության արդյունքում: Խնդիրն այն է, որ դատավարության կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձն իր կարգավիճակով գործնականում չի կարող ինքնըստինքյան հավասարվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, քանի որ վերջիններս ի սկզբանե այլ իրավական հնարավորություններ ունեն, և կողմերի միջև իրավահավասարություն ձևավորելու նպատակով, հարկ է, որ հան-

րային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով դատարանն իր ակտիվ միջամտությամբ նպաստի առաջացած անհավասարության թուլացմանը՝ ձեռնամուխ լինելով ապահովելու գործի համար անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը, ինչպես նաև տվյալ սկզբունքի հետ առնչություն ունեցող այլ դատավարական գործողությունների կատարմանը: Հատկանշական է, որ ըստ Ա. Բ. Ջեյենցովի և Օ. Ա. Յաստրեբովի՝ վարչական դատավարությունում՝ որպես ավելի թույլ կողմ հանդիսացող անհատին փաստացի առավելությունը տրամադրվում է ոչ թե հակառակ կողմի համաձայնությամբ կամ դատարանի հայեցողությամբ, այլև՝ դատավարական կանոնով¹²:

Հարկ է նկատել, որ քննարկվող սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները չեն սահմանափակվում միայն գործի փաստական հանգամանքները պարզելով, այլ նաև ընդգրկում են դատավարական գործողությունների մի ամբողջ շրջանակ: Թեև օրենսգրքում նշված սկզբունքը վերնագրված է որպես «Փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու» սկզբունք, այնուամենայնիվ, դրա տարբեր հոդվածների ուսումնասիրությունից պարզվում է, որ դատարանի կողմից տվյալ սկզբունքի իրացումն իր մեջ ներառում է ոչ միայն գործի փաստական, այլև՝ իրավական հիմքերը պարզելուն և բացահայտելուն ուղղված դատավարական գործողություններ: Տվյալ հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ իր որոշման մեջ այն դիտարկելով որպես քննարկվող սկզբունքի շրջանակներում իրականացվող դատարանի համար նախատեսված պարտադիր գործողություն՝ նշելով, որ վարչական դատավարությունում հայցվորը չի կրում հայցադիմումում հայցի իրավական հիմքերը մատնանշելու օրենսդրական պարտականություն: Օրենսդիրը հայցվորի համար սահմանել է պարտականություն՝ հայցադիմումում մատնանշել միայն իր պահանջը և այն հիմնավորող փաստարկները: Մյուս կողմից, վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների և անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ դարձնելու և վերջիններիս նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով օրենսդիրը վարչական դատարանին օժտել է ակտիվ դերակատարությամբ¹³: Ըստ այդմ, վարչական դատարանը պարտավոր է ինքնուրույն որոշել

վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը, ապա ձեռնարկել համարժեք միջոցներ՝ գործն ի պաշտոնե քննելու համար¹⁴ :

Ներկայացվածի համատեքստում, համաձայն լինելով Լ. Պետրոսյանի այն առաջարկի հետ, որ Օրենսգրքում քննարկվող սկզբունքն անհրաժեշտ է ամրագրել որպես գործի ի պաշտոնե քննության սկզբունք¹⁵, միաժամանակ, կարծում ենք, որ առաջարկվող փոփոխությամբ սկզբունքին առավել ընդհանրական անվանում տալն արդարացված է նաև այն հանգամանքով, որ վերոնշյալի լույսի ներքո տվյալ սկզբունքի շրջանակներում դատարանը պարտավորվում է ոչ միայն միջոցներ ձեռնարկել գործի փաստական հանգամանքները պարզելու ուղղությամբ, այլ նաև սեփական նախաձեռնությամբ որոշել վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը¹⁶ :

Հարկ է նշել, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը դրսևորվում է նաև վերաքննության փուլում. մասնավորապես՝ Օրենսգրքի 144-րդ հոդվածի ուսումնասիրության արդյունքներով կարող ենք առանձնացնել, որ Վերաքննիչ դատարանը. 1. դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում, 2. ընդունում է նաև դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, 3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում այդ փաստը չի վիճարկվում, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն:

Կարծում ենք՝ վերաքննության փուլում դատարանին անհրաժեշտ է տրամադրել առավել նեղ լիազորություններ, քանի որ վերաքննիչ ատյանի առաքելությունն ուղղված է ոչ թե գործի կրկնակի քննությանը, այլ՝ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված սխալների հայտնաբերմանը և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շտկմանը: Մասնավորապես՝ վերաքննության փուլում դատարանին նոր ապացույցներ ներկայացնելու թույլատրելիության պարագայում դատավարության մասնակիցները ստորադաս ատյանում չեն փորձի լիարժեքորեն ներդնելու իրենց ջանքերը՝ փորձելով հասնելու գործի արդյունավետ քննությանը՝ հույս ունենալով բացթողումները լրացնելու վերաքննության փուլում:

Շատ պետություններում (օրինակ՝ Ֆրանսիայում) գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքն իր առավել «ծայրահեղ» դրսևորմամբ հայտնի է որպես քննչական

(ինկվիզիցիոն) սկզբունք, ըստ որի՝ դատարանը սեփական նախաձեռնությամբ կատարում է իրավաբանական փաստերի ու հարաբերությունների հետազոտում՝ ձգտելով ամեն հնարավոր միջոցներով պարզելու խնդրի լուծման համար անհրաժեշտ հանգամանքները՝ կաշկանդված չլինելով շահագրգիռ անձանց ներկայացրած դիրքորոշումներով ու ապացույցներով: Տվյալ սկզբունքի իրացման շրջանակներում դատավորը կարող է հանձնարարել կողմին տրամադրելու գործի համար էական նշանակություն ունեցող փաստաթղթեր, անհրաժեշտությունից ելնելով նշանակել փորձաքննություններ, կատարելու հարցումներ, կողմերից պահանջելու ապացույցներ:

Դատավարագիտության մեջ քննչական (ինկվիզիցիոն) սկզբունքին՝ որպես հակառակ, հայտնի է մրցակցության սկզբունքը: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն սահմանված չեն մրցակցության և տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքները, սակայն դրանք անուղղակիորեն դրսևորվում են Օրենսգրքի որոշ դրույթներում: Որոշ իրավագետների կողմից երբեմն հնչեցվում է այնպիսի թյուր կարծիք, ըստ որի՝ վարչական դատավարության՝ «ex officio» հիմնարար սկզբունքի առկայությամբ պայմանավորված վարչական դատավարությունում չի կարող գործել մրցակցային սկզբունքը: Դատավարագետները, ուսումնասիրելով մրցակցության սկզբունքի հարաբերակցությունը վարչական դատավարության այլ սկզբունքների հետ, առանձնացնում են իրավական այն հարցադրումը, թե արդյոք «ex officio» սկզբունքի ամրագրումը և ըստ այդմ դատարանին ակտիվ լիազորություններով օժտելը չի խոչընդոտում վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքի իրացմանը¹⁷ :

Նմանաբանությամբ հարցադրումների վերաբերյալ կարող ենք նշել, որ թեև վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքը չունի այնքան մեծ կիրառելիություն, որքան քաղաքացիական և քրեական դատավարություններում, սակայն դա դեռևս չի նշանակում, որ «ex officio» սկզբունքի առկայության դեպքում դատավարությունում կարող են խոչընդոտներ առաջանալ մրցակցության սկզբունքի կիրառման համար: Օրինակ, մրցակցության սկզբունքի որոշակի դրսևորումների կարելի է հանդիպել Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերում, մասնավորապես՝ նշված կարգավորումներով մի կողմից օրենսդիրը դատավարության կողմի վրա դրել է պարտականություն՝ ներկայացնելու իրեն հասանելի այն բոլոր ապացույցները, որոն-

ցով հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, մյուս կողմից՝ վարչական մարմնի համար սահմանել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած բոլոր ապացույցները ներկայացնելու պարտականություն, որոնցով հիմնավորվում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Այսինքն՝ տվյալ նորմերի ուսումնասիրությունից հետևում է, որ նախ և առաջ դատավարության կողմեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց և վարչական մարմինների համար երկուստեք նախատեսված են մրցակցային հնարավորություններ, որոնք համապատասխանաբար չկատարելու դեպքում նոր միայն կգործեն Օրենսգրքի 29-րդ հոդվածով սահմանված ապացուցման բեռի կանոնները¹⁸:

Օրենսգրքով առանձին ամրագրում չի ստացել ինչպես մրցակցության, այնպես էլ՝ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը: Վճռաբեկ դատարանն իր կողմից ընդունված մի շարք որոշումներում անդրադառնալով հիշյալ սկզբունքին՝ նշել է, որ այն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները¹⁹: Վճռաբեկ դատարանը միաժամանակ հավելել է, որ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը, ինքնուրույն որոշել հայցի հիմքը և առարկան:

Չնայած այն հանգամանքին, որ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն իրապես արտահայտվում է վարչական դատավարության տարբեր դրույթներում (հայցադիմումի ներկայացում, հայցից հրաժարում, հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխություն, պահանջների միացում, միջնորդությունների ներկայացում, դատարանի կողմից հայցվորի համաձայնության հիման վրա ոչ պատշաճ պատասխանողի փոխարինում, հաշտության համաձայնության գալ և այլն), այդուհանդերձ, այն ունի որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքի շրջանակներում դատարանի ակտիվ դերակատարմամբ: Ամեն դեպքում, կարծում ենք, որ դատարանի կողմից ցուցաբերվող նման ակտիվությունը կարող է որոշ դեպքերում անձի համար ունենալ ընդամենը ուղ-

ղորդող նշանակություն, սակայն՝ ոչ պարտադրող, քանի որ հակառակ դեպքում կարող է սահմանափակվել դատավարության մասնակցի՝ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքից օգտվելու հնարավորությունը: Նման մոտեցում կարելի է նկատել նաև Վճռաբեկ դատարանի կողմից կայացված մի շարք որոշումներում, ըստ որոնց՝ Վարչական դատարանի կողմից առաջարկված պատշաճ հայցատեսակով ոչ պատշաճ հայցատեսակը չփոխարինելու պարագայում դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ²⁰, այսինքն՝ դատարանի կողմից առաջարկված հայցատեսակը չընտրելու և առաջնային ընտրած հայցատեսակը կրկին պնդելու դեպքում, Վարչական դատարանը պարտավոր է գործի քննությունը շարունակել հայցվորի ընտրած հայցատեսակի շրջանակներում:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ կարող ենք առանձնացնել հետևյալը.

1. վարչական արդարադատության առանձնահատկություններն, առաջին հերթին, պայմանավորված են դրա հիմքում ընկած ելակետային սկզբունքներով, որոնց հիման վրա են կառուցված վարչական դատավարությանը հատուկ մի շարք դատավարական ընթացակարգեր և կանոններ,

2. վարչական արդարադատության և վարչական դատավարության սկզբունքները մեծամասամբ համընկնում են,

3. թեև տարբեր պետությունների վարչական դատավարությունը կարգավորող իրավական ակտերով նախատեսված դատավարական սկզբունքները չունեն միևնույն անվանումները, սակայն բովանդակային իմաստով դրանք շատ մոտ են,

4. վարչական արդարադատության իրականացմանն օժանդակող և վերջինիս առաքելությունն ընդգծող առանձնահատուկ սկզբունքն է հանդիսանում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն (ex officio) պարզելու սկզբունքը: Հաշվի առնելով Օրենսգրքով հիշյալ սկզբունքի հիման վրա դատարանի վրա դրված մի շարք կարևոր պարտականությունների բովանդակությունը՝ այդ թվում՝ ոչ միայն գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն պարզելու, այլ նաև սեփական նախաձեռնությամբ վեճի լուծման համար կիրառելի իրավանքները որոշելու պարտականությունները՝ առաջարկում ենք «ex officio» սկզբունքին դատավարությամբ տալ առավել ընդհանրական անվանում,

5. գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն (ex officio) պարզելու սկզբունքը վարչա-

կան դատավարությունում գործում է նաև վերաքննության փուլում: Կարծում ենք՝ դրա շրջանակներում, ի թիվս այլնի, վերաքննության փուլում դատավարության մասնակիցների կողմից դատարանին նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքն անհրաժեշտ է սահմանափակել, քանի որ վերաքննիչ ատյանի գործունեությունն ուղղված է ոչ թե գործի կրկնակի քննությանը, այլ՝ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված սխալների հայտնաբերմանը և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շտկմանը:

6. Օրենսգրքի 2-րդ գլխում վարչական դատավարության սկզբունքների ամրագրումը դեռևս չի նշանակում, որ դրանք սպառնիչ են և չեն կարող գործել այլ դատավարական սկզբունքներ: Չնայած այն հանգամանքին, որ Օրենսգրքով հատուկ ամրագրված չեն մրցակցության և դիսպոզիտիվության սկզբունքները, այնուամենայնիվ, դրանք դրսևորվում են Օրենսգրքի տարբեր կարգավորումներում:

7. Վարչական դատարանի կողմից դատավարության մասնակիցների միջև ի սկզբանե առաջացած անհավասարությունը մեղմելու ուղղությամբ ձեռնարկվող դատավարական գործողությունները

պետք է լինեն համաչափ և չպետք է իրացվեն այն աստիճան, որ բացառվի կողմերի միջև մրցակցությունը:

8. Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն արտահայտվում է վարչական դատավարության տարբեր ընթացակարգերում, սակայն ունի որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված «ex officio» սկզբունքի առկայությամբ:

Այսպիսով, վարչական արդարադատության՝ որպես մասնագիտացված արդարադատության առանձնահատկությունները մեծապես արտահայտվում են դրա իրականացման հիմքում ընկած սկզբունքների միջոցով, որոնց օժանդակությամբ ապահովվում են վարչական արդարադատության կարևորագույն նպատակները՝ հասնելով հանրային-իշխանական լիազորություններով օժտված մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև առաջացած վեճերի արդարացի և ճշմարիտ լուծմանը:

¹ St'u, С. В. Никитин, Административное судопроизводство: учебник, Москва, 2018, С. 21.

² St'u, Старилов Ю. Н., К эффективному правосудию и надлежащей судебной-правовой защите через специализацию правосудия, административно-процессуальный аспект, ФГБОУ ВПО, Российская правовая академия Министерства юстиции Российской Федерации, Модернизация судебной системы в условиях международной интеграции, проблемы и перспективы. Сборник научных статей. Под ред. О. И. Александровой, Ю. В. Мишальченко, Е. В. Трофимова. Санкт Петербург. Дитон, 2014, С. 41–52.

³ St'u, Салищева Н. Г., Проблемы развития административной юстиции в России, Административное судопроизводство в Российской Федерации, развитие теории и формирование административно-процессуального законодательства, отв. ред. Ю. Н. Старилов, Воронеж, 2013. Вып. 7., С. 713.

⁴ St'u, Мицкая Е. В., О сущности и принципах административной юстиции, Наука. 2020. N 1 (64), С. 20.

⁵ St'u, Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 08.03.2015թ., http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/ (28.03.2022թ. դրությամբ)

⁶ St'u, Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 06.07.2005թ., <https://cis-legislation.com/document.fwx?rgn=10720> (28.03.2022թ. դրությամբ)

⁷ St'u, Վրաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 23.07.1999թ., <https://matsne.gov.ge/en/document/view/16492?publication=77> (28.03.2022թ. դրությամբ)

⁸ St'u, Ադրբեջանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդված, ընդունված 30.06.2009թ., <https://www.legislationline.org/download/id/4030/file/Административный-Процессуальный%20одекс%202010.pdf> (28.03.2022թ. դրությամբ)

⁹ Նշվածից բացառություն է կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ հայցային վարույթ հանդիսացող ընտանեկան (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ գլուխ), պաշտպանական որոշման (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1-րդ գլուխ), ինչպես նաև ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ գլուխ) գործերով վարույթները, որոնց դեպքում օրենսդիրը նախատեսել է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու պարտականություն: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ՀՀ քաղաքացիական դատավարությամբ այն նախատեսված չէ որպես սկզբունք:

¹⁰ Տե՛ս, Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ ՍԴՈ-780 որոշումը:

¹¹ Տե՛ս, Դանիելյան Գ. Բ., «Վարչական վարույթ և դատավարություն» ուսումնական ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2011թ., էջ 171-172:

¹² Տե՛ս, Зеленцов А. Б., Ястребов О. А., Судебное административное право (учебник для студентов вузов, обучающихся по специальности), Юриспруденция, Москва: 2017, С. 146.

¹³ Նման բովանդակությամբ սահմանում է տվել ռուս իրավագետ Անատոլյեվնա Շ. Ե.-ն՝ միաժամանակ «ex officio» սկզբունքը համարելով վարչական դատավարության առանցքային սկզբունքներից մեկը: Տե՛ս Анатольевна Ш. Е. К вопросу о роли суда при реализации принципа состязательности и равноправия сторон в административном судопроизводстве, Бизнес в законе. 2011, N1, С. 111.

¹⁴ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018 թվականի որոշումը:

¹⁵ Տե՛ս, Պետրոսյան Լ., Վարչական դատարանում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացման որոշ հիմնախնդիրներ, «Արդարադատություն» գիտական հանդես, N 1 (53), 2021, Երևան, էջ 62:

¹⁶ Եզրահանգումը հիմնավորվում է նրանով, որ Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն (Օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Քննարկվող սկզբունքի մեկ այլ դրսևորում կարելի է համարել, երբ Վարչական դատարանը, քննության առնելով նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ դիմումը, պարզում է վիճարկվող ակտի համապատասխանությունը նաև դիմումում չնշված այլ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) Օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մաս):

¹⁷ Տե՛ս, Henrichsen C., Administrative Justice in a Scandinavian Legal Context: From a Liberal and a Social State to a Market State or a Milieu State. Administrative Justice in Context, Ed. Michael Adler, London, Hart Publishing, Bloomsbury Collections, 2010, էջ 321–350:

¹⁸ Հարկ ենք համարում ընդգծել, որ Օրենսգրքի 29-րդ հոդվածով նախատեսված ապացուցման բեռի կանոնները գործում են միայն այն դեպքում, երբ ներկայացված չեն լինում ապացույցներ, կամ ներկայացված են լինում ապացույցներ, սակայն ոչ լիարժեք, և, դատարանի գնահատմամբ, գործի ելքի վրա ազդեցություն ունեցող որևէ փաստ մնում է չապացուցված:

¹⁹ Տե՛ս, օրինակ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով 18.07.2014թ., թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018թ., թիվ ՎԴ/4650/05/16 վարչական գործով 06.10.2020թ. և թիվ ՎԴ/5599/05/20 վարչական գործով 25.06.2021թ. որոշումները:

²⁰ Տե՛ս, օրինակ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016թ., թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով 20.07.2017թ. որոշումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 08.03.2015թ., http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/ (28.03.2022թ. դրությամբ):

2. Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 06.07.2005թ., <https://cis-legislation.com/document.fwx?rgn=10720> (28.03.2022թ. դրությամբ):

3. Վրաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 23.07.1999թ., <https://mat-sne.gov.ge/en/document/view/16492?publication=77> (28.03.2022թ. դրությամբ):

4. Ադրբեջանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդված, ընդունված 30.06.2009թ., <https://www.legislationline.org/download/id/4030/file/Административный-Процессуальный%20одекс%202010.pdf> (28.03.2022թ. դրությամբ):

5. Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ ՍԴՈ-780 որոշում:

6. Դանիելյան Գ. Բ., «Վարչական վարույթ և դատավարություն» ուսումնական ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2011թ., էջ 171-172:

7. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018 թվականի որոշում:

8. Պետրոսյան Լ., Վարչական դատարանում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացման որոշ հիմնախնդիրներ, «Արդարադատություն» գիտական հանդես, N 1 (53), 2021, Երևան:

9. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով 18.07.2014թ., թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018թ., թիվ ՎԴ/4650/05/16 վարչական գործով 06.10.2020թ. և թիվ ՎԴ/5599/05/20 վարչական գործով 25.06.2021թ. որոշումներ:

10. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016թ., թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով 20.07.2017թ. որոշումներ:

11. Никитин С. В., Административное судопроизводство: учебник, Москва, 2018.

12. Стариков Ю. Н., К эффективному правосудию и надлежащей судебной-правовой защите через специализацию правосудия, административно-процессуальный аспект, ФГБОУ ВПО, Российская правовая академия Министерства юстиции Российской Федерации, Модернизация судебной системы в условиях международной интеграции, проблемы и перспективы. Сборник научных статей. Под ред. О. И. Александровой, Ю. В. Мишальченко, Е. В. Трофимова.

Санкт Петербург. Дитон, 2014.

13. Салищева Н. Г., Проблемы развития административной юстиции в России, Административное судопроизводство в Российской Федерации, развитие теории и формирование административно-процессуального законодательства, отв. ред. Ю. Н. Старилов, Воронеж, 2013. Вып. 7..

14. Ярков В. В., Административное судопроизводство, Учебник для студентов высших учебных заведений, Уральский государственный юридический университет, Екатеринбург, Москва, 2016.

15. Мицкая Е. В., О сущности и принципах административной юстиции, Наука. 2020. N 1 (64)..

16. Зеленцов А. Б., Ястребов О. А., Судебное административное право (учебник для студентов вузов, обучающихся по специальности), Юриспруденция, Москва: 2017.

17. Анатольевна Ш. Е., К вопросу о роли суда при реализации принципа состязательности и равноправия сторон в административном судопроизводстве, Бизнес в законе. 2011, N1.

18. Henrichsen C., Administrative Justice in a Scandinavian Legal Context: From a Liberal and a Social State to a Market State or a Milieu State. Administrative Justice in Context, Ed. Michael Adler, London, Hart Publishing, Bloomsbury Collections, 2010.

Петрос Варданян

Начальник первого отдела контрольного департамента министерства юстиции.

Соискатель Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Особенности системы административной юстиции и принципы, которые их обуславливают

Статья посвящена раскрытию основных принципов, определяющих специфику административной юстиции, и их всестороннему изучению. В частности, в статье представлены восприятия разных юристов на принципы административной юстиции, а также особенности, предусмотренные для них законодательством разных государств, проблемы существующие вокруг них.

В то же время в статье упоминались существующие проблемные правовые нормы о важнейших принципах административной юстиции, проводились сравнения с другими процессуальными принципами, делались выводы представляя соответствующие предложения.

Ключевые слова: *Принципы административной юстиции, принцип «ex officio», принцип состязательности, принцип диспозитивности, административное судопроизводство, специализированная юстиция.*

Petros Vardanyan

Head of the First Division of the Control Department of the Ministry of Justice

Applicant at the Public Administration Academy of the RA

SUMMARY

Features of the system of administrative justice and the principles conditioning them

The article is dedicated to reveal the basic principles that determine the specifics of administrative justice and their comprehensive study. In particular, the article presents the perceptions of different lawyers on the principles of administrative justice, as well as the specifics provided for them by the legislation of different states, the existing problems around them.

At the same time, the article referred to the existing problematic legal regulations on the most important principles of administrative justice, made comparisons with other procedural principles, drew conclusions making relevant proposals.

Key words: *Principles of administrative justice, the principle of “ex officio”, the principle of adversarial, the principle of dispositivity, administrative proceedings, specialized justice.*

Բնագիրը ներկայացվել է 25.03.2022թ.

Ընդունվել է տպագրության 29.03.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Շաքիրյանը

ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային
իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի
Վճիռների և որոշումների կատարման վարչության պետ,
ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ՄԵԿՆԱԲԱՆՍԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներն ընկալվում և կիրառվում են այնպես, ինչպես մեկնաբնված են Եվրոպական դատարանի վճիռներում: Եվրոպական դատարանը տարիների ընթացքում աստիճանաբար ձևավորել և արդյունավետ կերպով կիրառում է ՄԻԵԴ վճիռների մեկնաբանման իր ուրույն մեթոդները:

Այս հոդվածի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը միտված է Եվրոպական դատարանի վճիռներում Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման մեթոդաբանության առանձնահատկությունների համընդգրկուն ուսումնասիրությանը:

Հիմնաբաներ- ՄԻԵԴ վճիռներ, «travaux preparatoires», մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մեկնաբանում, «ապրող փաստաթուղթ»:

Եվրոպական կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպական դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը (...): Փաստացի, Եվրոպական դատարանը հանդես է գալիս որպես Եվրոպական կոնվենցիայի դրույթների մեկնաբանման բացառիկ գործառնություն (իրավասությանը) օժտված մարմին: Եվրոպական դատարանի վճիռներում մասնավորեցվում, լրացուցիչ պարզաբանվում և հստակեցվում է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորվող մարդու իրավունքների և հիմնական ազատությունների բովանդակությունը: Վեր հանելու համար Եվրոպական դատարանի վճիռներում Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման մեթոդաբանությունը անհրաժեշտ է նախ քննարկել տեսաբանների մոտեցումները իրավական ակտերի մեկնաբանման առնչությամբ:

Հիմք ընդունելով իրավական ակտերի մեկնաբանման վերաբերյալ տեսաբանների խիստ տարբերվող մոտեցումները՝ ձևավորվել են երկու հիմնական տեսություններ: Առաջին տեսության կողմնակիցները հակված են ընդունելու, որ իրավական ակտերի դրույթների մեկնաբանումը պետք է հիմնվի իրավական ակտի տեքստի և դրանում պարունակվող ձևակերպումների վրա (textualism), մյուս տեսության կողմնակիցների պնդմամբ իրավական ակտի դրույթների մեկնաբանման հիմքում պետք է ընկած լինի խնդրո առարկա իրավական կարգավորումը նախատեսելու նպատակի վերհանումը

(intentionalism) [1, էջեր 11-13]: Իրավական ակտի տեքստի հիման վրա մեկնաբանման տեսության կողմնակիցները պնդում են, որ իրավակիրառողները՝ մասնավորապես դատարանները պետք է ընկալեն և կիրառեն իրավական ակտի դրույթներն այնպես, ինչպես շարադրված է, առանց լրացուցիչ ենթատեքստ փնտրելու: Այս տեսության կողմնակիցները պնդում են, որ միայն իրավական ակտի տեքստի հիման վրա իրավական ակտի մեկնաբանության ճանապարհով են դատավորները գործնականում երաշխավորում իրավական որոշակիությունը [2, էջ 76]:

Ինչպես Ֆրանկ Իսթերբորդն է նշել իր «Իրավական ակտերի մեկնաբանման գործնական նշանակությունը» աշխատության մեջ՝ «...իրավական ակտի դրույթները դատավորների անհատական իրավական մտքի զարգացման համար չեն նախատեսված, դրանք հանրային-իրավական բնույթի հարաբերությունների նկատմամբ կիրառվող դրույթներ են: Իրավական ակտի տեքստն է, որ արտահայտում է այս կամ այն հարցի վերաբերյալ իրավական հանրության պատկերացումը և եթե դատավորներն իրավական ակտի տեքստի նկատմամբ նախապատվություն տան իրավական կարգավորման ընդհանուր, չգրված և չարտահայտված նպատակին, չի բացառվում, որ գործնականում փորձեն առաջ մղել իրենց սեփական պատկերացումները, ընկալումները և այսպիսով անէացնեն իրավական ակտի դրույթների իրական բովանդակությունը» [3, էջեր 79-81]: Իրավական ակտի տեքստի հիման վրա մեկնաբանման տեսության

քննադատները գտնում են, որ այն չի բխում օրինակալության և արդարության սկզբունքներից, քանի որ առավելապես կարևորում է իրավական ակտի ձևը, քան բովանդակությունը [4, էջ 14]:

Իրավական կարգավորման հետապնդումն ապահովում է հիմնականում իրավական ակտի մեկնաբանման տեսության կողմնակիցները պնդում են, որ «օրենսդրությունը հստակ նպատակաուղղված փաստաթուղթ է, և դատավորները պետք է օրենքներն այնպես կիրառեն, որպեսզի լավագույնս բացահայտվի օրենսդրի հետապնդած նպատակը» [5]: Այս տեսության կողմնակիցները հատուկ ուշադրություն են դարձնում օրենսդրական գործընթացին, որով ընդունվել է կոնկրետ իրավական ակտը՝ փորձելով վեր հանել այն իրավական խնդիրը, որի հաղթահարմանը միտված է եղել իրավական ակտի այս կամ այն դրույթի ընդունումը: Որոշելու համար օրենսդրի նպատակը՝ այս տեսության կողմնակիցները հաճախ գնում են իրավական ակտի ընդունման անհրաժեշտության ուսումնասիրության և իրավական կարգավորման հիմքում նկատելի ենթատեքստի բացահայտման ճանապարհով:

Թեև յուրաքանչյուր դեպքում դատարանի մեկնաբանման առարկան կիրառման ենթակա իրավական ակտի կոնկրետ դրույթն է, այնուամենայնիվ իրավաստեղծ գործունեության նպատակը վեր հանելու ճանապարհին դատարանը չի կարող սահմանափակվել միայն մեկ դրույթի բովանդակության մեկնաբանմամբ: Հետևաբար, այս տեսության կողմնակիցներն առանձնահատուկ կերպով կարևորում են դատարանի կողմից իրավական կարգավորման հիմքում ընկած նպատակը բացահայտելու համար ամբողջ իրավական ակտի և ոչ միայն կոնկրետ դրույթի գաղափարախոսությամբ առաջնորդվելու հանգամանքը [6, էջ 97]:

Քննարկվող տեսության քննադատները նշում են, որ անհմար է յուրաքանչյուր առանձին դեպքում ապահովել դատարանների կողմից իրավական ակտերի համակարգային վերլուծության իրականացումը պայմանավորված այն հանգամանքով, որ դատական համակարգի կոչումը որևէ իրավիճակում իրավական ակտերի գործնական կիրառության ապահովումն է, խնդրո առարկա հարաբերությունների կարգավորման նպատակով անհրաժեշտ իրավական դրույթների պատշաճ կիրառումը և ոչ իրավական ակտի ընդունման նախապատմության բացահայտումը: Հատկանշական է, որ ֆրանսիացի փիլիսոփա և իրավագետ Շառլ Լուի Մոնտեսքյոն ևս կարծում էր, որ օրենքները գործում են դատարանների միջոցով, երբ դատարանը կիրա-

նում ու մեկնաբանում է օրենքը («courts should act as the mouth of the law») և իրենց ամենօրյա աշխատանքը պետք է ուղղված լինի իրավական նորմերով մախատեսվող կարգավորման հետապնդած նպատակի պարզաբանմանը:

Եվրոպական դատարանը, լինելով Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում, իր վճիռներում Եվրոպական կոնվենցիայի դրույթները մեկնաբանելիս հաջողությամբ զուգակցում է վերը նշված մեթոդները: Ավելին, Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ Եվրոպական դատարանը, վերը նշված մեթոդներին զուգահեռ, սահմանել և կիրառում է Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման իր ինքնուրույն մեթոդները, որոնց կանոդադառնանք ստորև:

Պայմանավորված հասարակական հարաբե-
րությունների, տեխնիկայի ու գիտության զարգա-
մամբ՝ մարդու իրավունքների և հիմնարար ազա-
տությունների բովանդակային ընկալումը մշտա-
պես փոփոխվում և ընդլայնվում է, ինչն էլ պայմա-
նավորում է, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների
եվրոպական կոնվենցիայի դրույթների էվոլյուցիոն
մեկնաբանման անհրաժեշտությունը: Հատկապես
համացանցի առաջացումից հետո Կոնվենցիոն մի
շարք դրույթների բովանդակային ծավալը փոփոխ-
վեց՝ ի հայտ բերելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածով
երաշխավորվող անձնական և ընտանեկան կյան-
քի նկատմամբ հարգանքի իրավունքի [7] կամ 10-
րդ հոդվածով երաշխավորվող արտահայտվելու
ազատության պաշտպանության ներքո ընկալվող
նոր իրավունքներ [8]: Վերը նշվածով պայմանա-
վորված՝ Եվրոպական դատարանն իր քննությանը
հանձնված գործերով մշտապես հաշվի է առնում
կոնկրետ կիրառման ենթակա կոնվենցիոն դրույթի
իմացաբանական ծավալի նոր զարգացումները:
Եվրոպական դատարանը մշտապես փորձում է
տալ Եվրոպական կոնվենցիայի դիմամիկ կամ
էվոլյուցիոն մեկնաբանությունը՝ համարելով վեր-
ջինս «ապրող փաստաթուղթ»: «Ապրող փա-
ստաթղթի» դոկտրինը Եվրոպական դատարանի
նախադեպային իրավունքի ամենահայտնի սկզ-
բունքներից մեկն է: Համաձայն վերջինիս՝ Եվրո-
պական կոնվենցիան պետք է մեկնաբանվի «ներ-
կայիս պայմանների լույսի ներքո», և որ կոնվենցի-
ոն համակարգը զարգանում է Դատարանի մեկնա-
բանության միջոցով [9]:

Ferrazzini v. Italy գործով Մեծ պալատի վճռում
Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոն-

վեցնցիայի ընդունումից հետո անհատի և պետության միջև հարաբերությունները ակնհայտորեն զարգացել են բազմաթիվ ոլորտներում, ինչի արդյունքում պետական կարգավորումն ավելի ու ավելի է միջամտում մասնավոր-իրավական հարաբերություններին: Սրա արդյունքում մի շարք հանրային-իրավական բնույթի հարաբերություններ¹ ներառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պաշտպանության ներքո, եթե գործի ելքը որոշիչ է անձանց մասնավոր իրավունքների և պարտականությունների համար:

«Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մեծ պալատի վճռով Եվրոպական դատարանն ավելի խորացրեց Կոնվենցիայի վերաբերյալ «ապրող փաստաթուղթ» դոկտրինը՝ նշելով, որ Կոնվենցիան ապրող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի ներկայիս պայմանների և այսօր ժողովրդավարական պետություններում տիրող գաղափարների լույսի ներքո [10]:

Թեև Կոնվենցիոն դրույթների էվոլյուցիոն մեկնաբանումը դիտարկվում է որպես Կոնվենցիոն համակարգի զարգացման անհրաժեշտ նախապայման, այնուամենայնիվ Դատարանը յուրաքանչյուր դեպքում դրույթի մեկնաբանությունը տալիս է միասնական եվրոպական համաձայնության լույսի ներքո: Այլ կերպ ասած՝ Դատարանը, որպես կանոն, տալիս է կոնվենցիոն դրույթի նոր՝ առավել ընդարձակ բովանդակային մեկնաբանություն այն դեպքերում, երբ ինքն իր համար արձանագրում է խնդրո առարկա հարցի կապակցությամբ բավականաչափ հստակ կերպով արտահայտված միասնական եվրոպական համաձայնության առկայությունը [11]: Վերջինիս առկայությունը դատարանը պարզում է իրավահամեմատական ուսումնասիրությունների [12], միջազգային համաձայնագրերի [13], միջազգային կազմակերպությունների ու կառույցների գեկույցների ուսումնասիրման [14] և այլ գործիքների օգնությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում աստիճանաբար զարգացրել է այն գաղափարը, որ Եվրոպական կոնվենցիայի գլխավոր նպատակը ոչ թե մարդու հիպոթետիկ իրավունքների ու ազատությունների երաշխավորումն է, այլ դրանց հաղորդվող բովանդակությունը, ինչը պետք է ապահովի, որ կոնվենցիոն իրավունքները լինեն գործնականում կիրառելի: Այս մոտեցումը Եվրոպական դատարանի կողմից պահպանվում է նաև կոնվենցիոն դրույթները մեկնաբանելիս: Օրինակ՝ Soering v. United Kingdom գործով Եվրոպական դատարանն արձանագրել է որ Կոնվենցիայի՝ որպես անհատ-

ների իրավունքների պաշտպանության իրավական գործիքի դրույթները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն այնպես, որ դրա երաշխիքները գործնականում կիրառելի և արդյունավետ լինեն:

Կախված իր առջև բարձրացված հարցի բնույթից, կիրառելի հոդվածի բովանդակությունից և կոնկրետ գործով էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներից՝ երբեմն Դատարանը Կոնվենցիայի դրույթները մեկնաբանում և դրանցով նախատեսված կարգավորումների նպատակը վեր է հանում հիմք ընդունելով Կոնվենցիայի նախագծման նախապատրաստական փուլի փաստաթղթերում արված դիտարկումները travaux preparatoires: Այսպես, օրինակ «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի Մեծ պալատի վճռում Դատարանը նշում է, որ մինչև սույն գործն այն երբևէ չի քննել կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի նկատմամբ 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը, ի տարբերություն Հանձնաժողովի, որը մերժել էր կիրառել այդ հոդվածը մնացած գործերով: Հանձնաժողովն այդպիսով Կոնվենցիայի 9-րդ հոդվածը դիտարկել էր 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի հետ օրգանական կապի մեջ՝ գտնելով, որ դրանով կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչման որոշումը թողնվել է Պայմանավորվող կողմերի հայեցողությանը: Հետևաբար, կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձինք դուրս էին 9-րդ հոդվածի պաշտպանության սահմաններից, որը չի կարող մեկնաբանվել որպես բանակում ծառայելուց հրաժարվելու դեպքում քրեական հետապնդումից խուսափելու երաշխիք տրամադրող նորմ:

«Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մեծ պալատի վճիռը շրջադարձ մտցրեց դատարանի նախադեպային իրավունքում՝ զարգացնելով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը նախկինից էականորեն տարբերվող ուղղությամբ: Մեկնաբանելով 4-րդ հոդվածը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը 4-րդ հոդվածի 2-րդ կետով արգելված «հարկադիր և պարտադիր աշխատանք» հասկացության շրջանակներից բացառում է զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությամբ: Դատարանը, այնուհետև, այս կապակցությամբ նշել է 4-րդ հոդվածի վերաբերյալ Travaux

preparatoires-ը, որի 23-րդ պարբերությամբ սահմանվում է «բ» ենթակետում, կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ դրույթը նպատակ ունի մատնանշելու, որ օրենքով նրանցից պահանջվող ցանկացած ծառայություն չի ընդգրկվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք հասկացության մեջ: Դատարանի կարծիքով Travaux preparatoires-ով հաստատվում է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի միակ նպատակն է տալ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացության լրացուցիչ պարզաբանում: Այն ինքնին չի ճանաչում և ոչ էլ բացառում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, և հետևաբար այն չպետք է ունենա 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները սահմանափակող ազդեցություն:

Մեկ այլ՝ *Hirsi Jamaa and others v. Italy* գործով Եվրոպական դատարանի առջև բարձրացվել էր Կոնվենցիային կից 4-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի արտատարածքային կիրառության հարցը: Գանգատը մասնավորապես վերաբերում էր բաց ծովում բռնված ներգաղթյալներին իրենց մեկնման երկիր վերադարձնելուն: Եվրոպական դատարանի առջև բարձրացված հարցն էր գնահատել, թե արդյոք Կոնվենցիային կից 4-րդ Արձանագրության 4-րդ հոդվածը կիրառելի է օտարերկրացիներին երրորդ երկիր վտարելու՝ պետության տարածքից դուրս իրականացված գործողության վերաբերյալ գործով:

Բարձրացված իրավական հարցին առավել համապարփակ պատասխան տալու համար Եվրոպական դատարանն ուսումնասիրել է ինչպես կիրառելի իրավունքը, այնպես էլ Կոնվենցիայի նախապատրաստական նյութերը (*travaux preparatoires*)՝ փորձելով բացահայտել քննարկվող դրույթի շրջանակներում «վտարում» հասկացության ինչպես բառացի, այնպես էլ նպատակային նշանակությունը: Արդյունքում՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ չկա որևէ հանգամանք, որը կխոչընդոտի այդ հոդվածի արտատարածքային կիրառությանը: Բացի այդ, խնդրո առարկա դրույթի կիրառումը սահմանափակելով մասնակից պետությունների տարածքներից օտարերկրացիների կոլեկտիվ վտարման դեպքերով, կնշանակեր, որ ժամանակակից ներգաղթի մոդելների նշանակալից տարրերը չէին վերաբերի այդ դրույթի գործողության ոլորտին և կգրկեին հաճախ իրենց կյանքը վտանգելով ծովում գտնվող և պետության սահմաններին հասնելու հնարավորություն չունեցող

ներգաղթյալներին վտարումից առաջ իրենց անձնական գործի հանգամանքների ուսումնասիրությանը, ի տարբերություն ցամաքում գտնվող անձանց: «Վտարում» հասկացությունը հիմնականում տարածքային է իր բնույթով, ինչպես և «իրավագործությունը»: Սակայն անդամ պետությունները բացառիկ դեպքերում կարող են իրականացնել արտատարածքային իրավագործությունը, որը տվյալ դեպքում դրսևորվել է կոլեկտիվ վտարման ձևով: Ավելին, ծովային միջավայրի հատուկ բնույթը չի կարող հանգեցնել իրավական պաշտպանությունից դուրս գտնվող տարածքի առաջացման, ուր անձանց նկատմամբ չի կիրառվում որևէ իրավական համակարգ, որն ունակ է ապահովել Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և երաշխիքները:

Կոնվենցիան բովանդակում է մի շարք եզրույթներ և արտահայտություններ, ինչպես օրինակ՝ «դատարան», «վկա», «գույք», «ամուսնություն», «վնաս», որոնց իմաստն ու բովանդակությունը տարբեր իրավական համակարգերում կարող է տարբեր լինել: Օրինակ սեփականություն եզրույթի քաղաքացիաիրավական բովանդակությունը տարբերվում է Դանիայում և Հունաստանում, ուստի մի դեպքում անձը կոնկրետ իրավիճակում կարող է ունենալ օրենքով պաշտպանվող իրավունքներ, մյուս դեպքում՝ ոչ [15]: Կոչված լինելով ապահովել անձի հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը՝ Եվրոպական դատարանը սահմանել է մի շարք հասկացությունների ինքնավար նշանակությունը և առաջնորդվում է դրանցով: Այս ճանապարհով Եվրոպական դատարանը ԵԽ անդամ բոլոր պետություններում երաշխավորում է իրավունքների պաշտպանության հավասար մակարդակ:

Այսպիսով, Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի դրույթները մեկնաբանելիս ելնում է օգտագործվող բառերի և արտահայտությունների առաջնային նշանակությունից՝ դրանք դիտարկելով խնդրո առարկա կարգավորումը նախատեսելիս հետապնդած նպատակի լույսի ներքո [16]: Այսկերպ Եվրոպական դատարանն ապահովում է Եվրոպական կոնվենցիայի դրույթների մեկնաբանությունների արդյունավետությունը և գործնականում կիրառելիությունը:

¹ Ինչպես օրինակ՝ մասնավոր կլինիկայի շահագործումը, մասնագիտական գործունեության պայմանների հետ կապված թույլտվության տրամադրումը կամ ակոհիոլային խմիչքներ վաճառելու լիցենզիան:

² Հոդված 4 Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում (... Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Khelili v. Switzerland* գործով:
2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *mouvement raelien suisse v. switzerland* գործով:
3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի վճիռը *Matthews v. the United Kingdom* գործով:
4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի վճիռը *Bayatyan v. Armenia* գործով:
5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Christine Goodwin v. UK* գործով:
6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Costa and Pavan v. Italy* գործով:
7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Mamatkulov and Askarov v. Turkey* գործով:
8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Opuz v. Turkey* գործով:
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Magyar Helsinki Bizottsag v. Hungary* գործով:
10. R. Bernhart «Thoughts on the interpretation of human rights treaties» R.St.J. Macdonald eds. The european system for the protection of human rights. 1993, pp.65-71, p. 67.
11. Guido Calabresi, An Introduction to Legal Thought: Four Approaches to Law and to the Allocation of Body Parts, 55 STAN. L. REV. 2113 (2003), pages 11-13.
12. John F. Manning, Without the Pretense of Legislative Intent, 130 HARV. L. REV. 2397, 2413, 2425 (2017), p. 76.
33. Easterbrook, The Role of Original Intent in Statutory Construction, 11 HARV. J.L. & PUB. POL'Y 59, p. 79-81.
14. Robert A. Katzmann, Response to Judge Kavanaugh's Review of Judging Statutes, 129 HARV. L. REV. F. 388 (2016) p. 14.
15. Robert A. Katzmann, Judging statutes 31 (2014). Academics sometimes distinguish between «purpose» and «intent», most frequently using «purpose» to mean the objective intent that is the goal of new purposivism, and «intent» to mean the legislature's actual intent, which was the goal of the old «intentionalism». See, e.g., Jonathan R. Siegel, The Inexorable Radicalization of Textualism, 158 U. PA. L. REV. 117, 123-24 (2009). However, courts generally use the two words interchangeably, and this report follows suit. See MIKVA & LANE, supra note 9, at 107; see, e.g., *Liparota v. United States*, 471 U.S. 419, 424-25 (1985) (referring both to «congressional intent» and «congressional purpose»).
16. Henry M. Hart, JR. & Albert M. Sacks, The legal process: basic problems in the making and application of law 1182 (William N. Eskridge, Jr. & Phillip P. Frickey eds., 1994), p. 97.

Արփե Արակելյան

Начальник управления по исполнению постановлений и решений
офиса представителя по международно-правовым вопросам
аппарата премьер-министра РА.

Аспирант Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Методология толкования европейской конвенции в рамках постановлений ЕСПЧ

Установки Европейской конвенции прав человека воспринимаются и используются так, как толкованы в постановлениях Европейского суда. В течение многих лет Европейский суд постепенно сформировал и эффективно применяет свои особые методы при толковании постановлений ЕСПЧ.

Исследование осуществимое в рамках этой статьи склонно к исследованию особенностей методологии толкования Европейской конвенции в решениях Европейского суда.

Ключевые слова: постановления ЕСПЧ, “travaux préparatoires”, толкование Европейской конвенции прав человека, “живущий документ”.

Arpine Arakelyan

Office of the Prime minister of RA

Office of the representative on international legal matters,
head of the department for execution of judgments and decisions
PhD student, Public Administration Academy

SUMMARY

*The methodology of interpretation of the European Convention
in the framework of the judgments of the ECtHR*

The provisions of the European Convention on Human Rights are perceived and applied as interpreted in the judgments of the European Court. Over the years, the European Court of Human Rights has gradually developed and effectively applies its special methods of interpretation in the judgments of the ECtHR.

The study carried out within the framework of this article tends to reveal the peculiarities of the methodology of interpretation of the European Convention in the judgments of the European Court.

Key words: ECtHR judgments, travaux préparatoires, interpretation of the European Convention on Human Rights, “living instrument”.

Բնագիրը ներկայացվել է 12.04.2022թ.

Ընդունվել է տպագրության 27.04.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը

ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ

**ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՏԱՐԲԵՐ**

Հոդվածը նվիրված է վարչարարության համաչափության սկզբունքի՝ պիտանիության և անհրաժեշտության տարրերի ուսումնասիրությանը: Հոդվածում ներկայացվում են պիտանիության և անհրաժեշտության պահանջների էությունն ու բաղադրիչները, ինչպես նաև փորձ է արվում ներկայացնել դրանց գնահատման հիմնական չափանիշներն այնպես, որպեսզի ապահովվի համաչափության սկզբունքի տարրերի միջև աշխատանքի հնարավորինս հավասար բաժանումը:

Հիմնաբառեր- սահմանափակման համաչափություն, պիտանիություն, անհրաժեշտություն, լեզիտիմ նպատակ:

Պիտանիությունը և անհրաժեշտությունը վարչարարության համաչափության սկզբունքի այն տարրերն են, որոնք անմիջականորեն կապված են վարչական միջոցի նպատակի և դրան հասնելու համար վարչական մարմնի կողմից ընտրված միջոցների միջև հարաբերությունների հետ:

Այս աշխատանքի շրջանակներում մենք քննարկելու ենք՝ վարչարարության համաչափության սկզբունքի պիտանիության և անհրաժեշտության տարրերի էությունը, ինչպես նաև այս պահանջներին վերաբերող և գիտագործնական նշանակություն ունեցող հնարավոր խնդիրները:

Պիտանիության պահանջի էությունը կայանում է նրանում, որ սահմանափակող միջոցները ողջամիտ կերպով կապված լինեն այն նպատակի հետ, որին հասնելու համար ընտրվել են¹: Վարչական մարմնի ընտրված սահմանափակող միջոցները պետք է կարողանան իրականացնել կամ աջակցել հետապնդվող հիմնական նպատակը, և նման միջոցների օգտագործումը ողջամիտ կերպով պետք է հանգեցնի նպատակի իրականացմանը: Հետևաբար, եթե միջոցների իրացումը չի նպաստում նպատակի իրականացմանը, ապա նման միջոցների օգտագործումն անհամաչափ կլինի: Այդ դեպքերում, կարելի է եզրակացնել, որ վարչական մարմինը «բաց է թողել իր թիրախը»:

Ինչպես նշում է Ն. Էմիլուն՝ պիտանիության չափանիշը չի պահանջում, որ ընտրված միջոցները լինեն միակը, որոնք կկարողանան իրականացնել հետապնդվող նպատակը²: Կարող են լինել դեպքեր, երբ կլինեն այլ միջոցներ, և դրանք բոլորն էլ կհամարվեն նպատակի հետ ողջամիտ կապ ունեցող: Այն փաստը, որ կան մի քանի տարբերակներ, չի նշանակում, որ ընտրված միջոցը պիտանի չէ:

Պիտանիության պահանջը փաստացի բնույթ ունի: Այն էմպիրիկ հարց է տալիս՝ օգտագործվող միջոցների լեզիտիմ նպատակը խթանելու կամ իրականացնելու ունակության վերաբերյալ: Այս առումով, անորոշությունն է հայտնի իրավակիրառ պրակտիկայում: Դրանցից մեկը հաճախ հանդիպող անորոշությունն է՝ ընտրված միջոցով հետապնդվող նպատակին հասնելու հավանականության վերաբերյալ: Հարց է առաջանում, թե արդյոք փաստացի որոշակիության բացակայությունը բավարար հիմք է այն եզրակացության համար, որ միջոցների և նպատակների միջև ողջամիտ կապ գոյություն չունի կամ արդյոք պիտանիության չափանիշը պահանջում է փաստացի որոշակիություն:

Էթիմոլոգիական տեսանկյունից «պիտանի» լինելը, ըստ երևույթին, ենթադրում է ավելի քիչ խիստ պատճառահետևանքային կապ, քան, օրինակ, «անփոխարինելի» լինելը, միևնույն ժամանակ, այն ավելի խիստ և, հետևաբար, ավելի քիչ ճկուն է, քան պարզապես «օգտակար» լինելն է³:

Այս հարցի վերաբերյալ ծայրահեղ մոտեցումներից մեկն այն է, որ պիտանիության չափանիշը պահանջում է լիակատար վստահություն և ընտրված վարչական միջոցները հանգեցնում են հետապնդվող լեզիտիմ նպատակի իրականացմանը: Այս մոտեցումն ընդունելի չհամարելով՝ Ա. Բարաքը նշում է, որ նման մոտեցումն ապահովում է մարդու բոլոր իրավունքների առավելագույն պաշտպանությունը: Մենք ևս ընդունելի չենք համարում այս մոտեցումը, սակայն, ի տարբերություն Ա. Բարաքի կարծում ենք, որ այս մոտեցումը ոչ թե ապահովում է իրավունքների առավելագույն պաշտպանություն, այլ ընդհակառակը՝ որոշ դեպքերում հանգեցնում

իրավունքների ամենախիստ սահմանափակման: Այսպես, եթե մենք վարչական մարմնից պահանջենք, որ վերջինս հետապնդվող նպատակներն իրականացնելու համար, ընդունի միայն այնպիսի միջոցներ, որոնք միանգամայն ապահովելու են դրանց իրականացումը, ապա սա անխուսափելիորեն հանգեցնելու է վարչական մարմնի կողմից այնպիսի միջոցների ընտրությանը, որոնք նաև առավելագույն կերպով սահմանափակելու են մարդու սահմանադրական իրավունքները: Ակնհայտ է, որ որքան ավելի հավանական լինի, որ սահմանափակող միջոցը կհասնի հետապնդվող նպատակին, այնքան մեծ է հավանականությունը, որ այն նաև ավելի խիստ է լինելու՝ իրավունքի միջամտելու տեսանկյունից: Մյուս կողմից, սա չի համապատասխանում սահմանադրական ժողովրդավարության պայմաններում իշխանության (օրենսդիր և գործադիր) թևերի կողմից կատարվող գործառնությունների վերաբերյալ ժամանակակից պատկերացումներին: Այս գործառնությունները ներառում են սոցիալական քաղաքականության զարգացումն ու իրականացումը: Դա տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, եթե նման քաղաքականությունը պարունակում է անորոշության տարրեր: Եթե քաղաքականության հաջող իրականացման համար պահանջվեր լիակատար որոշակիություն, ապա մենք չէինք կարողանա հասնել պետության տնտեսական, սոցիալական և ազգային նպատակների մեծ մասի իրականացմանը:

Մեկ այլ ծայրահեղ մոտեցում պնդում է, որ պիտանիության չափանիշը բավարարվում է ամեն անգամ, երբ իշխանության ճյուղերը (օրենսդիր և գործադիր) կարծում են, որ նման կապ գոյություն ունի: Ընդհանուր առմամբ, նման մոտեցումը թույլ կտար վերջիններիս իրականացնել սեփական նպատակները: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ այս դիրքորոշումը նույնպես չպետք է ընդունվի. այն չի համապատասխանում մարդու իրավունքների ժողովրդավարության մեջ ունեցած դերին: Մարդու իրավունքները չեն կարող սահմանափակվել միայն իրականության հետ չկապված ենթադրությունների հիման վրա, որոնց արդյունքը կարող է լինել որևէ լեգիտիմ նպատակին հասնելու համար ընտրված միջոցների ներդրման բացակայությունը, կամ, լավագույն դեպքում, աննշան ներդրումը:

Եզրակացությունը, որ բխում է այս վերլուծությունից, հետևյալն է՝ մենք գտնում ենք, որ պիտանիության չափանիշը չպետք է հիմնվի այն պատկերացման վրա, թե ընտրված միջոցները իրականացնում են լեգիտիմ նպատակը լիարժեք հստակությամբ: Սակայն, միայն չնչին ներդրումը բավարար

չի լինի, քանի որ ոչ մի պահանջ չկա, որ ընտրված միջոցներն ամբողջությամբ իրականացնեն նպատակը, գտնում ենք, որ դրա մասնակի իրականացումը, (պայմանով, որ այն եզրային կամ աննշան չէ) բավարարում է պիտանիության պահանջը: Հետևաբար, պիտանիության պահանջն այն է, որ միջոցները բավարար չափով նպաստեն սահմանադրական իրավունքը սահմանափակող նպատակին հասնելուն, և կապ լինի ընտրված միջոցների և պատշաճ նպատակի միջև: Այս կամ այն միջոցի պիտանիությունը պետք է որոշվի օբյեկտիվ չափանիշներից ելնելով, ոչ թե՝ վարչական մարմնի սուբյեկտիվ դատողությանը համապատասխան⁴:

Ներկայացված եզրակացությունից ակնհայտ է, որ պիտանիության պահանջի վերաբերյալ առաջ քաշված հարցերի լուծումները մենք գտանք սահմանափակվող իրավունքի և հանրային շահերի միջև որոշակի հավասարակշռություն գտնելու արդյունքում՝ մի կողմից նպատակ ունենալով բացառել իրավունքի հնարավոր առավելագույն միջամտության հնարավորությունը, մյուս կողմից՝ հաշվի առնելով հանրային շահերին հասնելու կարևորությանը: Մենք չընդունեցինք այն մոտեցումը, որ սահմանափակող միջոցը հստակորեն պետք է հասնի իր հետապնդած նպատակին, այլ ընդունելի համարեցինք պիտանիության ավելի մեղմ չափանիշը: Այսպիսով, թեև հավասարակշռումը համաչափության վերջին փուլն է, սակայն դրա որոշ տարրեր կիրառվում են նաև պիտանիության փուլում:

Հաջորդ հարցը, որին կանդադադառնանք, այն է, ինչը Եվրոպական միության Արդարադատության դատարանը անվանել է «հետևողականություն» («consistency»)⁵: Այս պահանջի համատեքստում կարծում ենք, որ վարչական մարմնի ընտրված միջոցների պիտանիությունը պետք է գնահատել վարչական մարմնի ընդհանուր պրակտիկայի համատեքստում: Տվյալ դեպքում կիրառվող միջոցները պետք է պիտանի լինեն ոչ միայն հետապնդվող նպատակներին, այլ նաև պետք է ընդունելի լինեն վարչական մարմնի քաղաքականության նույն կամ այլ ոլորտներում հետապնդվող նպատակների համատեքստին: Այսպիսով, ընդունված միջոցը չպետք է հակասի արդեն ընդունվածին: Ասել է, թե այն դեպքում, երբ վարչական մարմինը որևէ սահմանափակող միջոցի կիրառումը հիմնավորում է օրենքով սահմանված կոնկրետ նպատակի հասնելու անհրաժեշտությամբ, ապա վերջինս պրակտիկորեն պետք է հիմնավորի, որ վարչական մարմինն այդ նպատակը հետապնդում է հետևողականորեն, ոչ թե միայն կոնկրետ գործով:

Հետևողականության պահանջի կիրառման օրինակ է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի հուլիսի 29-ի թիվ ՎԴ/5630/05/19 վարչական գործով⁶ Երևանի քաղաքապետարանի կողմից բնակելի տան կառուցման նպատակով համապատասխան թույլտվություն տրամադրելը, մերժելը, ոչ իրավաչափ ճանաչելը: Այս գործով հայցվոր կողմը վիճարկել էր միջոցի համաչափ լինելը՝ նշելով, որ վարչական մարմինը շինարարական թույլտվություն էր տրամադրել բարձրահարկ շենքեր կառուցելու համար, սակայն մերժել էր թույլտվության տրամադրումը երկհարկանի շենքի կառուցման համար: Դատարանը, թեև ուղղակիորեն կասկածի տակ չի դրել միջոցի պիտանի լինելը, այնուամենայնիվ նշել է. «Դատարանի գնահատմամբ, տվյալ տարածքում բարձրահարկ բնակելի շենքերի կառուցումը թույլատրելի լինելու պայմաններում երկհարկանի բնակելի տուն կառուցելը ևս թույլատրելի է՝ հաշվի առնելով, որ տվյալ տարածքում առկա են ոչ բարձրահարկ բնակելի տներ և հայցվորի պահանջը վերաբերում է իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող մեկ այլ բնակելի տան հարևանությամբ բնակելի տուն կառուցելուն: Այսինքն, եթե բարձրահարկ շենքի կառուցումը քաղաքաշինական տեսանկյունից տեսականորեն թույլատրելի է համարվում, ապա երկհարկանի առանձնատան կառուցմամբ ևս որևէ նորմ և այլ անձանց իրավունք չի խախտվի»:

Հետևողականության պահանջի այս ասպեկտը նման է կամայականության արգելքի սկզբունքին, որը պահանջում է միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ դրսևորել միատեսակ մոտեցում: Սակայն հետևողականության պահանջն ավելի լայն է, քան կամայականության արգելքի սկզբունքը: Այն միջոցի համաչափությունը պիտանիության տեսանկյունից գնահատում է՝ ոչ միայն միատեսակ փաստական հանգամանքների, այլ նաև վարչական մարմնի ընդհանուր քաղաքականության և պրակտիկայի համատեքստում: Այս առումով, պիտանիության պահանջի խախտման տիպիկ օրինակ է վերջերս Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարարված արտակարգ դրության իրավական ռեժիմի ժամանակ (ըստ էության, բացօթյա տարածքներում) հավաքերի իրականացման արգելումն այն դեպքում, երբ թույլատրվում էր հանրային միջոցառումների (որոնք, որպես կանոն, իրականացվելու են փակ տարածքներում) իրականացումն անհատական պաշտպանության միջոցների կիրառման պայմանով:

Թեև հետևողականության պահանջի պահպանումն ավելի շատ կարող է օգտագործվել միջոցի պիտանիությունը գնահատելու համար, մենք գտնում ենք, որ հետևողականության չափանիշի կիրառման հիմքում ընկած ավելի գործնական պատճառը կարող է կապված լինել նաև հիմնավորված կասկածների առկայության հետ, որ վարչական մարմինն անկեղծորեն է վերաբերում միջոցի նպատակին: Եթե վարչական մարմինն անկեղծ է այն նպատակի վերաբերյալ, որով նա արդարացնում է այս կամ այն միջոցը, ապա ենթադրվում է, որ նա պետք է այդ նպատակի որոնումն իրականացնի ինչպես նմանատիպ, այնպես էլ այն բոլոր ոլորտներում, որոնք առնչվում են տվյալ նպատակին: Այս մոտեցումն արտացոլում է նաև այն, որ թեև մենք առանձնացնում ենք համաչափության սկզբունքի չորս տարրերը և դրանք քննարկում առանձին-առանձին, այդպիսի առանձնացումը խիստ պաշտոնական բնույթ է կրում: Համաչափության սկզբունքի տարրերի միջև կա սերտ գործառնության կապ, և երբ առկա է կասկած տարրերից մեկի խախտված լինելու վերաբերյալ, սակայն չկան բավարար հիմքեր միջոցի ոչ համաչափ լինելը հենց այդ փուլում հաստատելու համար, նախընտրելի է անցում կատարել համաչափության սկզբունքի հաջորդ փուլերին՝ այս սկզբունքի խախտումն ավելի հիմնավոր դարձնելու համար:

Համաչափության հաջորդ բաղադրիչը անհրաժեշտության չափանիշն է: Այն նաև կոչվում է «պակաս սահմանափակող միջոցների» պահանջ⁷: Այս չափանիշի համաձայն՝ վարչական մարմինը բոլոր այն միջոցներից, որոնք կարող են նպաստել նպատակին հասնելուն, պետք է ընտրի մեկը, որը նվազագույն չափով կսահմանափակի մարդու՝ քննարկվող իրավունքը: Համաչափության այս չափանիշը հիմնված է այն նախադրյալի վրա, որ միջոցների օգտագործումը կամ նման միջոցների օգտագործման անհրաժեշտությունը պահանջվում է միայն այն դեպքում, եթե նպատակը չի կարող ձեռք բերվել այլ միջոցների օգտագործման միջոցով, որոնք հավասարապես կբավարարեն պիտանիության չափանիշը, և քննարկվող իրավունքի սահմանափակման մակարդակը ցածր կլինի: Այսպիսով՝ միջոցների անհրաժեշտությունը բխում է այն փաստից, որ գոյություն չունի որևէ այլ այլընտրանք, որը պակաս սահմանափակող կլինի քննարկվող իրավունքի համար և միևնույն ժամանակ հավասարապես կնպաստի հետապնդվող նպատակին: Եթե կա ավելի քիչ սահմանափակող այլընտրանք, որը կարող է կատարել լեգիտիմ նպատակը, ապա ընտրված միջոցը անհրաժեշտ չէ:

Պարզ է, որ անհրաժեշտության փաստարկը միայն մեկ ուղղությամբ է գործում, և վարչական մարմինը չի կարող արդարացնել իր գործողությունները, պնդելով, որ կարող էր օգտագործել ավելի սահմանափակող միջոցներ. «Թնդանքի օգտագործումը ճանճերի սպանության համար չի կարող արդարացվել այն հիմքով, որ դրա փոխարեն կարող էր օգտագործվել միջուկային հրթիռ»⁹։ Նշանակություն ունի միայն պակաս սահմանափակող միջոցների, ոչ թե ավելի սահմանափակող միջոցների գոյությունը։

Անհրաժեշտության վերը նշված բնորոշումներից կարող ենք եզրակացնել, որ այն ներառում է երկու տարրեր։ Առաջինը այլընտրանքային միջոցների առկայությունն է, որոնք կարող են նպաստել նպատակին հասնելուն նույն ծավալով կամ ավելի լավ, քան օգտագործվող միջոցները։ Երկրորդ՝ ենթադրյալ այլընտրանքային միջոցները պետք է սահմանափակեն սահմանադրական իրավունքը ավելի քիչ չափով, քան ընտրված միջոցները։ Եթե այս երկու տարրերն առկա են, ապա կարելի է եզրակացնել, որ միջոցը անհրաժեշտ չէ։ Այժմ անդրադառնանք այս տարրերին առանձին-առանձին։

Անհրաժեշտության չափանիշի առաջին տարրի վերաբերյալ Ս. Փոլիդոն նշում է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել հարցը, թե արդյոք այլընտրանքային միջոցները կարող են ապահովել լեգիտիմ նպատակին հասնելն ինտենսիվության և արդյունավետության նույն մակարդակով, ինչպես ընտրված միջոցները։ Եթե նման այլընտրանք գոյություն չունի, ապա միջոցն անհրաժեշտ է, և անհրաժեշտության պահանջը բավարարված է¹⁰։ 2020 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1546 որոշմամբ Սահմանադրական դատարանն օրենսդրի ընտրած միջոցի անհրաժեշտության պահանջի մասին նշել է, որ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնում է նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն։

Ինչպես արդարացիորեն նշում է Լ. Հիրշբերգը, իրավաբանական լաբորատորիայում կարելի է պատկերացնել հավասարապես արդյունավետ տարբեր միջոցների մի պարզ սանդղակ, որոնք տեսակավորված են, ըստ իրավատիրոջ համար միջամտության ինտենսիվության, և ընտրել այդ այլընտրանքներից ամենաքիչ միջամտողը¹¹։ Սակայն, իրականում, ամեն ինչ ավելի բարդ է։ Դժվար է պատկերացնել երկու տարբեր այլընտրանքներ,

որոնք ունեն նույն արդյունավետությունը։ Յուրաքանչյուր միջոց առաջացնում է տարբեր հետևանքներ, ունի որոշակի թերություններ կամ պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ¹²։ Կարծում ենք, որ եթե վարչական մարմնից պահանջենք այլընտրանքային միջոցի հավասար արդյունավետություն, ապա անհրաժեշտության չափանիշը անիմաստ կլիներ ճանաչել։ Այսպիսով, անհրաժեշտության չափանիշին վերաբերող հարցերից մեկը, որին կցանկանայինք անդրադառնալ այն է, թե որքանով է կարելի վարչական մարմնից պահանջել ավելի քիչ սահմանափակող այլընտրանքներ, որոնք պակաս արդյունավետ են, քան ընդունված միջոցը։

Այլընտրանքային միջոցի արդյունավետությունը կարելի է գնահատել երկու տեսանկյունից՝

- նպատակին հասնելու ինտենսիվության մակարդակով,
- այլ ազդեցությունների տեսանկյունից։

Առաջին խնդրի հետ կապված այլ երկրների՝ համաչափության սկզբունքի կիրառման պրակտիկան թույլ է տալիս առանձնացնել երկու մոտեցում¹³։ Առաջին՝ դասական մոտեցումը պահանջում է ավելի քիչ սահմանափակող միջոցների ընտրություն, եթե դրանք հավասար արդյունավետությամբ կարող են հասնել նպատակին, թեև այդ ձևակերպման շրջանակներում գոյություն ունեն հավասար արդյունավետություն սահմանման տարբեր մոտեցումներ։ Երկրորդ ձևակերպումն ավելի պահանջկոտ է՝ նախապատվությունը տալով պակաս սահմանափակող միջոցներին, նույնիսկ եթե դրանք համարժեք արդյունավետ են։ Այս մոտեցումն ընդգծում է պակաս սահմանափակող այլընտրանքի համարժեք, այլ ոչ թե հավասար արդյունավետությունը։ Արդյունքում խիստ սահմանափակող միջոցները պետք է մերժվեն՝ անկախ դրանց բարձր արդյունավետությունից։ Մենք ընդունելի ենք համարում այս մոտեցումը, քանի որ այն, ըստ երևույթին, ճիշտ է արտացոլում աստիճանների փոխաբերությունը, որը հաճախ օգտագործվում է անհրաժեշտության չափանիշը նկարագրելու համար. պետությունը պետք է սկսի սահմանափակման ամենացածր մակարդակից և շարունակի մինչև նպատակի համարժեք աստիճանին հասնելը, այլ ոչ թե սկսի ամենասահմանափակող միջոցներից և իջնի մինչև արդյունավետությունը մնա նույնը¹⁴։

Ինչ վերաբերում է այլընտրանքային միջոցի արդյունավետության գնահատման երկրորդ խնդրին, ապա գտնում ենք, որ անհրաժեշտության չափանիշը չի կարող օգտագործվել որպես պակաս սահմանափակող միջոց ընտրելու պատրվակ, երբ

վերջինս կհանգեցնի պետական միջոցների ծախսմանը կամ նույն անձի կամ այլ անձանց իրավունքների հետագա սահմանափակմանը կամ կունենա այլ ազդեցություն: Գտնում ենք, որ նպատակի իրականացումն արդյունավետորեն ապահովող այլընտրանքային միջոցը, որն առաջացրել է այլ հետևանքներ, քան ընտրված միջոցը, կարող է քննարկվել համարժեքության, բայց ոչ անհրաժեշտության փուլում:

Անհրաժեշտության չափանիշի երկրորդ տարրը քննարկում է այն հարցը, թե արդյոք այլընտրանքը սահմանափակում է սահմանադրական իրավունքը ավելի քիչ չափով, քան ընտրված միջոցը: Երկրորդ տարրը դիտարկելու համար մենք պետք է համեմատենք սահմանափակող միջոցի գործողությունը սահմանադրական իրավունքի նկատմամբ և ենթադրյալ այլընտրանքի գործողությունը նույն իրավունքի նկատմամբ: Սահմանափակման աստիճանը որոշվում է, մասնավորապես, ի թիվս այլնի, սահմանափակման շրջանակի, դրա գործողության, տևողության և տեղի ունենալու հավանականության ուսումնասիրության հիման վրա:

Այլ հավասար պայմանների դեպքում. 1) ժամանակավոր միջոցները պակաս սահմանափակող են, քան մշտականները, 2) իրավունքի իրականացման արգելքն իրենից ավելի մեծ սահմանափակում է ներկայացնում, քան այդ իրավունքի մասնակի սահմանափակումը, 3) աշխարհագրորեն սահմանափակված միջոցները պակաս սահմանափակող են, քան պետության ամբողջ տարածքն ընդգրկող միջոցները, 4) անհատական միջոցները պակաս սահմանափակող են, քան բազմաթիվ անհատների վրա ազդող միջոցները¹⁵, 5) ընթացակարգային երաշխիքներով ձեռնարկվող միջոցները պակաս սահմանափակող են, քան առանց ընթացակարգային երաշխիքների ձեռնարկվող միջոցները¹⁶, և այլն:

Ավելի ընդհանուր առումով անհրաժեշտության պահանջը նախապատվությունը տալիս է ճկունությանը, այլ ոչ թե կոշտությանը: Այդ պատճառով է. Բրենսի պատկերավոր ձևակերպմամբ՝ այն հատկապես լավ է «ուղեկցող վնասների» դեմ պայքարելու համար, որոնք առաջանում են ընդհանուր կանոնների խիստ կիրառման արդյունքում, որոնք անհամաչափ ազդեցություն են ունենում կոնկրետ մարդկանց վրա¹⁷:

Մենք քննարկեցինք անհրաժեշտության պահանջի կիրառման հետ կապված հնարավոր հարցերը և ներկայացրեցինք դրանց լուծման վերաբերյալ մեր մոտեցումները: Ինչպես պիտանիության, այնպես էլ այս դեպքում մեր ներկայացրած առա-

ջարկությունները հետևանք են որոշակի հավասարակշռման իրականացման: Այսպես, ի տարբերություն իրավաբանական գրականության մեջ գերիշխող մոտեցման, որ այլընտրանքային միջոցը պետք է ունենա հավասար արդյունավետություն, մենք ընդունելի համարեցինք այն դիրքորոշումը, որ այլընտրանքային միջոցը պետք է ունենա համարժեք արդյունավետություն, որն ըստ էության հավասարակշռման կիրառման դրսևորում է (իրավունքի սահմանափակման աստիճանի էական նվազեցումը նպատակի արդյունավետության չնչին նվազեցման հաշվին):

Քննարկելով անհրաժեշտության պահանջի էությունն ու բաղադրիչները՝ այժմ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչպես պետք է իրականացվի այս պահանջի գնահատումը: Անհրաժեշտության չափանիշը պահանջում է, որ ընտրված միջոցները «նեղ հարմարեցված» լինեն լեգիտիմ նպատակին հասնելու համար: Այս հասկացությունն արդեն արտահայտվել է Ֆրից Ֆլեյերի կողմից 1911 թվականին, ով իր հայտնի խոսքերում նշել է, որ «ուստիկանությունը չի կարող կրակել ճնճղուկներին թնդանոթներից» («polizie soll nicht mit Kanonen auf Spatzen schieben»)¹⁸: Լորդ Դիպլոկն օգտագործել է մմանատիպ փոխաբերություն, երբ իր գործերից մեկում նկատել է, որ «չի կարելի օգտագործել վերամբարձ կռուկ՝ ընկույզը կոտրելու համար»¹⁹: Բոլոր այդ փոխաբերությունները նախատեսված են ընդգծելու, որ միջոցները պետք է համապատասխանեն նպատակին: Ամեն անգամ, երբ նպատակին կարելի է հասնել ավելի քիչ սահմանափակող միջոցներով, դա պետք է արվի: Ոչ մի իմաստ չունի օգտագործել մոլորը, երբ անհրաժեշտ է ընդամենը ընկույզկոտրիչ²⁰:

Գտնում ենք, որ պահանջը, որ միջոցները «նեղ կապված» լինեն լեգիտիմ նպատակին հասնելու համար, կարող է ձախողվել երկու դեպքում: Նախ, միջոցները լիովին չեն հասնում նպատակին, և կան ասպեկտներ, որոնք անհրաժեշտ են այդ նպատակին հասնելու համար, չեն ծածկվում ընտրված միջոցներով: Կարող ենք ասել, այս դեպքում միջոցը բավականաչափ է: Ամեն դեպքում, կարծում ենք, որ սա կապված չէ անհրաժեշտության վերլուծության հետ: Բավականաչափ չլինելը կարող է մեկնաբանվել վարչական մարմնի ոչ պատշաճ շարժառիթով և դրանով իսկ ազդել նպատակի բաղադրիչի վրա: Այն կարող է ազդել լեգիտիմ նպատակի իրականացման համար օգտագործվող միջոցների պիտանիության վրա: Ելնելով համաչափության պահանջի էությունից, որը պարզապես պահանջում է իրավունքի համար պակաս միջամտող մի-

ջոցների օգտագործում, գտնում ենք, որ նշված հարցը չի կարող քննարկվել անհրաժեշտության փուլում:

Երկրորդ դեպքը կարող ենք համարել այն, երբ ընտրված միջոցները հասնում են լեզվաբանական, բայց դրանք «նեղ կապված» չեն դրան, քանի որ դրանք սահմանափակում են քննարկվող իրավունքը, ավելին, քան անհրաժեշտ է: Սա նույնն է, ինչ ճնճողուկի վրա կրակող թնդանոթը կամ ընկույզը կտրող վերամբարձ կռունկը: Կարող ենք ասել, որ այս դեպքում վարչական մարմինը լայն ցանց է նետում: Գտնում ենք, որ «նեղ կապվածության» բացակայության այս ասպեկտն է հենց համապատասխանում անհրաժեշտության վերլուծությանը:

Անհրաժեշտից ավելի սահմանափակումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ լեզվաբանականներին ամբողջապես հասնելու համար պահանջվում է միայն միջոցների մի մասը, որոնք սահմանափակում են սահմանադրական իրավունքը. այլ կերպ ասած, ընդունված ոչ բոլոր միջոցներն են, որ անհրաժեշտ են օրենքի նպատակին հասնելու համար: Այդ դեպքերը կարող ենք բաժանել երկու խմբի. առաջին խումբը ներառում է այն իրավիճակները, երբ կարելի է տարբերություն դնել նպատակին հասնելու համար ոչ անհրաժեշտ միջոցների («ավելորդ» միջոցների) և այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոցների միջև: Ուստի լեզվաբանականներին կարելի է հասնել առանց մարդու իրավունքների լրացուցիչ սահմանափակման, որը պայմանավորված է «ավելորդ» միջոցներով: Այդ դեպքերում ավելորդ սահմանափակումը հանգեցնում է այն եզրակացության, որ միջոցները անհրաժեշտ չեն: Այստեղ է, որ անհրաժեշտությունը և սահմանափակման ավելորդ լինելը միաձուլվում են: Որպես օրինակ ներկայացնենք Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2021 թվականի փետրվարի 8-ի ՎԴ/3255/05/20 վարչական գործը²¹: Այս գործով Շրջակա միջավայրի նախարարն անձին ամբողջությամբ զրկել էր ջրօգտագործման թույլտվությունից՝ հետապնդելով ջրային ռեսուրսները և այլ ջրօգտագործման թույլտվություն ունեցողների իրավունքները պաշտպանելու նպատակ: Մինչդեռ դատարանը գտել էր, որ այս նպատակին կարելի էր հասնել պակաս սահմանափակող միջոցի օգտագործմամբ, այն է՝ թույլատրել էականորեն ավելի նվազ ծավալի ջրօգտագործում:

Անհրաժեշտից ավելի սահմանափակման հետ կապված իրավիճակների երկրորդ խումբը, որը մենք առանձնացնում ենք, շատ ավելի բարդ է: Այս-

տեղ հնարավոր չէ առանձնացնել անհրաժեշտ միջոցները «ավելորդներից»: Այլ կերպ ասած, հնարավոր չէ ոչ մի կերպ հասնել լեզվաբանական նպատակին, առանց դիմելու ավելորդ սահմանափակող միջոցների: Այս դեպքերում, հարց է առաջանում՝ միջոցն անհրաժեշտ է, թե սահմանափակումն ավելորդ է: Այս երկու պահանջներից որն է գերիշխելու²²: Գտնում ենք, որ այս դեպքում անհրաժեշտության չափանիշը պետք է գերակշռի: Ըստ անհրաժեշտության քննության՝ չափից ավելի սահմանափակումն արգելվում է միայն այն դեպքում, երբ քիչ միջամտող միջոցներով հնարավոր չէ համարժեք արդյունավետությամբ հասնել հետապնդվող նպատակին: Երբ անհրաժեշտ և «ավելորդ» միջոցները չեն կարող առանձնացվել, ավելորդ միջոցները ևս դառնում են անհրաժեշտ: Կարծում ենք, որ այս իրավիճակում առաջացած սահմանափակման համաչափության քննարկումը պետք է իրականացվի ոչ թե անհրաժեշտության չափանիշի շրջանակներում, այլ, ավելի շուտ, համարժեքության շրջանակներում: Որպես օրինակ, կարող ենք ներկայացնել իրավաբանական գրականության մեջ պարբերաբար քննարկվող Միացյալ Թագավորությունում տեղի ունեցած գործը, որտեղ անգլիական վերաքննիչ դատարանը քննում էր ոստիկանության գործողությունների օրինականությունը, որոնք ուղղված էին անկարգությունների կանխարգելմանը Թագավորական ռազմաօդային ուժերի ավիաբազայում ցույցի ժամանակ²³: Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրակացության, որ իրենց վարքի պատճառով «հնարավոր չէր բացահայտել հանգստության պոտենցիալ խախտողներին և տարբերել նրանցից, ովքեր մտադիր էին խաղաղ ցույց անել»: Ուստի ոստիկանությանն այլ բան չէր մնում, քան կիրառել հավաքների ազատության իրավունքը սահմանափակող միջոց (արգելել հավաքը), որը կտարածվեր ոչ միայն խաղաղ ցուցարարների, այլ նաև իրավախախտների նկատմամբ:

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ հարկ են համարում առանձնացնել հետևյալ հիմնական եզրահանգումները.

- վարչարարության համաչափության սկզբունքի պիտանիության պահանջը վարչական մարմնից պահանջում է ընտրել այնպիսի միջոցներ, որոնք ունակ են աջակցելու հետապնդվող լեզվաբանական նպատակին իրականացմանը: Միևնույն ժամանակ, պիտանիության չափանիշը հիմնված չէ այն պատկերացման վրա, որ ընտրված միջոցները պետք է իրականացնեն լեզվաբանական նպատակը՝ լիարժեք հստակությամբ: Պիտանիության չափանիշը ենթադրում է նաև վարչական մարմնի պրակտիկա-

յի հետևողականություն. սա նշանակում է, որ վարչական մարմնի կողմից ընտրված սահմանափակող միջոցը պետք է պիտանի լինի ոչ միայն տվյալ կոնկրետ նպատակի, այլ նաև վերջինիս քաղաքականության համատեքստում, այն իմաստով, որ վարչական մարմինն այդ նպատակը հետապնդում է հետևողականորեն:

- անհրաժեշտության չափանիշի համաձայն՝ վարչական մարմինը բոլոր այն միջոցներից, որոնք կարող են նպաստել նպատակին հասնելուն, պետք է ընտրի մեկը, որը նվազագույն չափով կսահմանափակի մարդու սահմանադրական իրավունքը: Վարչական մարմնի ընտրած միջոցն անհրաժեշտ չէ, եթե կա այլ պիտանի միջոց, որը, ավելի քիչ սահմանափակելով մարդու սահմանադրական իրավունքը, կհասնի հետապնդվող լեգիտիմ նպատակին համարժեք արդյունավետությամբ, սակայն չի առաջացնի այլ հետևանքներ, քան ընտրված միջոցը: Վարչական մարմնի ընտրած միջոցը համա-

պատասխանում է անհրաժեշտության պահանջին, եթե տվյալ իրավիճակում հետապնդվող նպատակին հնարավոր չէ հասնել առանց իրավունքի ավելորդ սահմանափակման:

Համաչափության սկզբունքների էմպիրիկ տարրերի՝ պիտանիության և անհրաժեշտության պահանջների վերաբերյալ մեր ներկայացրած եզրահանգումները նպատակ ունեն ապահովել համաչափության սկզբունքի տարրերի միջև աշխատանքի հնարավորինս հավասար բաժանումը: Այս առումով, մենք փորձել ենք պիտանիության և անհրաժեշտության պահանջների էությունը և դրանց բաղադրիչների բովանդակությունը ներկայացնել այնպես, որ վարչական միջոցի համաչափության գնահատման ամբողջ ծանրությունը չընկնի համարժեքության պահանջի վրա:

¹ St'u, The administration and you. A handbook Principles of administrative law concerning relations between individuals and public authorities, Council of Europe, October 2018, էջ 15:

² St'u, N. Emiliou, The Principle of Proportionality in European Law: A Comparative Study (London: Kluwer Law International, 1996), էջ 28:

³ St'u, Tor-Inge Harbo, The Function of Proportionality Analysis in European Law, Nijhoff Studies in European Union Law, 2015, էջ 23:

⁴ St'u, Mahendra P. Singh, German Administrative Law In Common Law Perspective, Springer, 1985, էջ 89:

⁵ St'u, N. Emiliou, The Principle of Proportionality in European Law: A Comparative Study (London: Kluwer Law International, 1996), էջ 27-28, Case C-243/01 Gambelli [2003] ecr I-13031, պարագրաֆ 67:

⁶ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935841:

⁷ St'u, օրինակ Aharon Barak, Proportionality: Constitutional and their limitations. Cambridge Studies in Constitutional Law, Cambridge University Press; 1 edition (March 19, 2012),

⁸ St'u, Aharon Barak, նշված աշխատ., էջ 323, Арутюнян Г. Критерии ограничения прав человека в практике конституционного правосудия // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Вып. 3 (29). - 2005. - էջ 43, Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. մրազրությանը Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ, Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 82, P. Leyland and G. Anthony, Textbook on Administrative Law, Oxford University Press, 2013, էջ 43:

⁹ St'u, A. Vermeule, Judging under Uncertainty (Cambridge, MA: Harvard University Press, 2006):

¹⁰ St'u, C. B. Pulido, El Principio de Proporcionalidad y los Derechos Fundamentales (Madrid: Centro de Estudios Políticos y Constitucionales, 2007), էջ 738:

¹¹ St'u, Lothar Hirschberg, Der Grundsatz der Verhältnismäßigkeit (Otto Schwartz and Co 1981), էջ 68:

¹² St'u, Kai Möller, "Proportionality: Challenging the Critics" (2012) 10 International Journal of Constitutional Law, էջ 714:

¹³ St'u, Kremnitzer, M., Steiner, Talya, Lang, Andrej, Proportionality in action : comparative and empirical perspectives on the judicial practice, New York : Cambridge University Press, 2020:

¹⁴ St'u, նաև Kremnitzer, M., Steiner, Talya, Lang, Andrej, Proportionality in action : comparative and empirical perspectives on the judicial practice, New York : Cambridge University Press, 2020, էջ 362:

¹⁵ St'u, E. Brems, "Human Rights: Minimum and Maximum Perspectives", Human Rights Law Review 2009, (349), էջ 360:

- ¹⁶ St'u, Eva Brems, Laurens Lavrysen, "Don't Use a Sledgehammer to Crack a Nut": Less Restrictive Means in the Case Law of the European Court of Human Rights, Human Rights Law Review, Volume 15, Issue 1, March 2015, Pages 139–168, <https://doi.org/10.1093/hrlr/ngu040>, էջ 5:
- ¹⁷ St'u, նույն տեղում:
- ¹⁸ St'u, F. Fleiner, Institutionen des Deutschen Verwaltungsrechts (T ü bingen, 1928), էջ 404:
- ¹⁹ Այս փոխաբերության մասին տե՛ս, G. Wong, "Towards the Nutcracker Principle: Reconsidering the Objections to Proportionality," PL 92 (2000):
- ²⁰ St'u, Իսրայելի Գերագույն դատարանի որոշումը՝ H CJ 2334/02 Shtanger v. h e Speaker of the Knesset [2003] IsrSC 58(1) 786, 797 (Barak, P.):
- ²¹ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809945743:
- ²² Այս հարցի վերաբերյալ ամերիկյան փորձի համար տե՛ս R. H. Fallon, "Strict Judicial Scrutiny," 54 UCLA L. Rev . 1267, 1327 (2007), էջ 1328:
- ²³ St'u, Laporte –v- Chief Constable Gloucestershire Constabulary [2004] EWCA Civ 1639:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ, Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 82:
2. Арутюнян Г. Критерии ограничения прав человека в практике конституционного правосудия // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Вып. 3 (29). - 2005. - էջ 43:
3. The administration and you. A handbook Principles of administrative law concerning relations between individuals and public authorities, Council of Europe, October 2018, էջ 15:
4. N. Emiliou, The Principle of Proportionality in European Law: A Comparative Study (London: Kluwer Law International, 1996), էջ 28:
5. Tor-Inge Harbo, The Function of Proportionality Analysis in European Law, Nijhoff Studies in European Union Law, 2015, էջ 23:
6. Mahendra P. Singh, German Administrative Law In Common Law Perspective, Springer, 1985, էջ 89: http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935841 (15.05.2021):
7. Aharon Barak, Proportionality: Constitutional and their limitations. Cambridge Studies in Constitutional Law, Cambridge University Press; 1 edition (March 19, 2012).
8. P. Leyland and G. Anthony, Textbook on Administrative Law, Oxford University Press, 2013, էջ 43:
9. A. Vermeule, Judging under Uncertainty (Cambridge, MA: Harvard University Press, 2006):
10. C. B. Pulido, El Principio de Proporcionalidad y los Derechos Fundamentales (Madrid: Centro de Estudios Pol í ticos y Constitucionales, 2007), էջ 738:
11. Lothar Hirschberg, Der Grundsatz der Verhältnismäßigkeit (Otto Schwartz and Co 1981), էջ 68:
12. Kai Möller, "Proportionality: Challenging the Critics" (2012) 10 International Journal of Constitutional Law, էջ 714:
13. Kremnitzer, M., Steiner, Talya, Lang, Andrej, Proportionality in action : comparative and empirical perspectives on the judicial practice, New York : Cambridge University Press, 2020:
14. E. Brems, "Human Rights: Minimum and Maximum Perspectives", Human Rights Law Review 2009, (349), էջ 360:
15. Eva Brems, Laurens Lavrysen, "Don't Use a Sledgehammer to Crack a Nut": Less Restrictive Means in the Case Law of the European Court of Human Rights, Human Rights Law Review, Volume 15, Issue 1, March 2015, էջեր 139–168, <https://doi.org/10.1093/hrlr/ngu040>, էջ 5:
16. F. Fleiner, Institutionen des Deutschen Verwaltungsrechts (T ü bingen, 1928), էջ 404:
17. G. Wong, "Towards the Nutcracker Principle: Reconsidering the Objections to Proportionality", PL 92 (2000): Իսրայելի Գերագույն դատարանի որոշումը՝ H CJ 2334/02 Shtanger v. h e Speaker of the Knesset [2003] IsrSC 58(1) 786, 797 (Barak, P.): http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809945743 (15.04.2021):
18. R. H. Fallon, "Strict Judicial Scrutiny," 54 UCLA L. Rev . 1267, 1327 (2007), էջ 1328:
- Laporte –v- Chief Constable Gloucestershire Constabulary [2004] EWCA Civ 1639:

Кристине Алексаян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

РЕЗЮМЕ

Пригодность и необходимость как элементы принципа пропорциональности администрирования

Статья посвящена изучению элементов принципа пропорциональности администрирования - пригодности и необходимости. В статье представлены сущность и составляющие требований пригодности и необходимости, а также предпринята попытка представить основные критерии их оценки таким образом, чтобы обеспечить максимально равное разделение труда между элементами принципа пропорциональности.

Ключевые слова: пропорциональность ограничения, пригодность, необходимость, легитимная цель.

Kristine Aleksanyan

PhD student at the YSU Chair of Constitutional Law

SUMMARY

Suitability and necessity as elements of the principle of proportionality of administration

The article is devoted to the study of the elements of the principle of proportionality of administration - suitability and necessity. The article presents the essence and components of the requirements of suitability and necessity, and also attempts to present the main criteria for their assessment in such a way as to ensure the most equal division of work between the elements of the principle of proportionality.

Key words: proportionality of limitation, suitability, necessity, legitimate goal.

Բնագիրը ներկայացվել է 15.12.2021թ.

Ընդունվել է տպագրության 21.02.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանը

ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության
ամբիոնի ասպիրանտ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅԵՑԱԿԵՏ)

Տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը, հանդիսանալով ժողովրդավարական պետությունում մարդու կարևորագույն իրավունքներից մեկը, կարիք ունի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ու մարդկության զարգացմանը զուգահեռ համապատասխան իրավական գնահատական ստանալու: Վերջինս արտահայտվում է տեղեկատվության ազատության զարգացման շղթայով. այն սկզբում հանդես էր գալիս որպես սոսկ արտահայտվելու ազատության իրավունքի մաս, հետո՝ որպես առանձին իրավունք, որից այժմ առանձնացել և ուշադրության կենտրոնում է գտնվում հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը:

Հետազոտությամբ ներկայացվում է տեղեկատվության ազատությանը տեսական ու գործնական (ՀՀ և արտասահմանյան երկրների իրավական ակտերում) մակարդակում տրված դիրքորոշումները, որոնք համադրելով ժամանակակից պահանջմունքների հետ՝ առաջարկվում է նոր հայեցակետ ներկայացնել ու առանձնացնել տեղեկատվության ազատության ներքո հանդես եկող երկու իրավունք՝ ընդհանուր՝ ցանկացած տեսակի տեղեկատվություն փնտրելու, ստանալու ու տարածելու ազատություն և հատուկ՝ հանրային մարմիններից տեղեկատվության ստացման ազատություն:

Հիմնարարներ - տեղեկատվության ազատություն, ընդհանուր տեղեկատվության ազատություն, հատուկ տեղեկատվության ազատություն, հայեցակետ, Սահմանադրություն, իրավական գնահատական, մարդու իրավունք:

Տեղեկատվության ազատության իրավունքն իր ուրույն տեղն ունի մարդու հիմնական իրավունքների համակարգում, որը մի դեպքում ներկայացվում է որպես առանձին իրավունք, մյուսում՝ որպես արտահայտվելու ազատության մաս հանդիսացող իրավունք: ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը, կարևորելով տեղեկատվության ազատության նշանակությունը, 1946թ. իր առաջին իսկ նստաշրջանում ընդունված 59(1) բանաձևում սահմանում է, որ տեղեկատվության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է և այն բոլոր ազատությունների հիմնաքարն է, որոնց առնչվում է Միավորված ազգերի կազմակերպությունը¹: Ինչպես նշվում է հիշյալ բանաձևում՝ տեղեկատվության ազատությունը հիմնավորապես կարևոր է ոչ միայն սոսկ որպես իրավունք, այլև որպես մյուս բոլոր իրավունքների իրականացման համար սկզբնաղբյուր: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նույն որոշմամբ ընդունվում է. «Տեղեկատվության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է և մյուս բոլոր ազատությունների անկյունաքարը: Պետությունների միջև փոխըմբռնումը և համագործակցությունն անհնար է առանց արթուն և առողջ հասարակական կարծիքի, որն էլ, իր հերթին, ամբողջովին կախված է տեղեկատվության մատչելիությունից: Տեղեկատվության ազատությունը ներառում է անարգել կերպով տեղեկատվություն հավաքելու,

ամենուր փոխանցելու և տարածելու իրավունքը»²:

Հաշվի առնելով տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի մեծ կարևորությունն ու ժողովրդավարական պետության համար նրա ունեցած նշանակությունը՝ կարևոր ենք համարում վեր հանել քննարկվող իրավունքի տեսակները, որոնք ձևավորվել են տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի շուրջ և օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել՝ դրանց իրավական հետազոտման:

Նախ, պետք է ներկայացնել տեղեկատվության ազատության (freedom of information) նկատմամբ ձևավորված ընկալումը, որն արտահայտված է ինչպես տեսական մակարդակում, այնպես էլ՝ գործնական: Ի սկզբանե տեղեկատվության ազատությունը միտված է եղել բավարարելու պետության գործունեության մանրամասների նկատմամբ հանրության հետաքրքրությունը: Վ.Մ. Բոյերը տեղեկատվության իրավունքն ու ազատությունը մեկնաբանում է կարճ՝ իրազեկված լինելու և տեղեկատվության հասանելիության իրավունք³: Ռուսական իրավական մտքին զուգահեռ ամերիկյան և եվրոպական իրավագետները տեղեկատվության ազատությունը, ի թիվս այլնի, դիտարկում են, առաջին հերթին, որպես երկրի կառավարմանը մասնակցելու գործիք, հրապարակականության ու բազմակարծության ապահովման միջոց: Ամերիկացի

իրավագետ Ջ.Աբերմենը նշում է, որ տեղեկատվության ազատությանը վերաբերող նորմերը կարգավորում են, առաջին հերթին՝ անձի արտահայտվելու, երկրի կառավարմանը մասնակցելու և պետության կառավարման քաղաքական, տնտեսական ու բյուրոկրատական ազդեցություն ունենալու հարաբերությունները⁴։ Ըստ արգենտինացի իրավագետ Ռ. Սաբայի՝ տեղեկատվության ազատությունը, բացի բոլորիս հայտնի երաշխիքներից, կրում է նաև որոշակի հարցի վերաբերյալ տեղեկատվություն՝ սպառողների տեսակետների լայն բազմազանության ապահովման երաշխիքը։ Ինչպես նշում է հոլանդացի իրավագետ Մ. Բովենսը՝ տեղեկատվության ազատությանը վերաբերող օրենսդրությունը կարգավորում է, առաջին հերթին, պետության բաց կառավարումը, որը կանոնակարգում է պետական կառավարման թափանցիկության երաշխավորումը՝ նպատակ ունենալով ապահովել ավելի լավ ժողովրդավարական վերահսկողություն և կառավարության սոցիալական հաշվետվողականություն⁵։ Տեղեկատվության ազատությունը հաշվետու կառավարման⁶ և թափանցիկության⁸ հիմնական բաղադրիչն է։

Ինչպես տեսնում ենք՝ տեղեկատվության ազատությունը տեսաիրավական մոտեցումներում հիմնականում ընկալվում է սոսկ որպես հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունք։ Նման պատկեր է նաև իրավակիրառ պրակտիկայում, որտեղ տեղեկատվության ազատության հասկացությունն, առաջին հերթին, պատկերում է հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը։ Մինչդեռ, տեղեկատվության ազատության բուն էությունը, ժամանակակից մարտահրավերներն ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը տեղեկատվության ազատությունը դարձրել են շատ ու շատ ավելին, քան միայն հանրային իշխանություններից տեղեկություն ստանալու գործիք։ Մարդու իրավունքների ոլորտի կարևորագույն նշանակություն ունեցող միջազգային փաստաթղթերում տեղեկատվության ազատությունը ներկայացված է՝ որպես արտահայտվելու ազատության իրավունքի մաս, որը հանդես է գալիս որպես ցանկացած տեսակի (թե՛ հանրային մարմինների գործունեության հետ կապված, թե՛ ոչ) տեղեկության որոնումը, ստացումն ու տարածումը երաշխավորող իրավունք։

Կարող ենք հավաստել, որ միջազգային պայմանագրերն արտահայտվելու ազատության մեջ ներառում են ընդհանուր տեղեկատվության ազատությունը, իսկ վերջինս իր մեջ ընդգրկում է նաև նման լայն տարածում ստացած՝ հանրային մարմիններից տեղեկության ստացման «տեղեկատվու-

թյան ազատություն»-ը։ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը, ներկայացնելով «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի պաշտոնական մեկնաբանությունը, նշում է, որ այն ապահովում է նաև պետական մարմիններից տեղեկատվության հասանելիության իրավունքը⁹։

Արդյունքում ստացվում է, որ արտահայտվելու ազատությունն իր մեջ ներառում է տեղեկատվության ազատությունը, որն էլ իր հերթին իր մեջ ընդգրկում է երկու «տարր»՝ ընդհանուր տեղեկությունների ազատություն և հանրային մարմիններից ստացված հատուկ տեղեկությունների ազատություն։ Կարելի է ասել նաև, որ տեղեկատվության ազատության «ճյուղավորման» ծագումը կապված է արտահայտվելու ազատության զարգացման հետ։

Գործող խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը՝ ի տարբերություն 1995թ.-ի և 2005թ.-ի խմբագրությունների, տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը ներկայացնում է երկու հոդվածում՝ 42-րդ և 51-րդ. մի դեպքում՝ ճանաչում է տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, մյուսում՝ հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքը։ Նշված հոդվածները Սահմանադրական դատարանը ներկայացնում է որպես տեղեկատվության ազատության և տեղեկություններ ստանալու իրավունք՝ նշելով, որ արտահայտվելու ազատությունը, որպես մարդու անօտարելի հիմնական իրավունք, երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու, առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ (այդ թվում՝ հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին, նաև՝ փաստաթղթերին ծանոթանալու միջոցով) ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն¹⁰։

Այնուամենայնիվ, «տեղեկատվության ազատության» հասկացությունը դեռևս ընկալվում է որպես միայն 51-րդ հոդվածով նախատեսված իրավունք՝ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունք։ Վերջինիս վառ օրինակ է նաև «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ ՏԱ օրենք) տեղեկատվության ազատությանը տրված հասկացությունը, որը ներկայացվում է դրա ավանդական մոտեցմամբ՝ *տեղեկատվության ազատություն է համարվում տե-*

դեկտրոններն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելը և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալը (հոդված 3-րդ): Նույն օրենքի իմաստով էլ տեղեկատվություն տնօրինող են հանդիսանում հանրային մարմիններն ու հանրային նշանակության կազմակերպությունները:

Ինչպես նշում է Գ. Հովհաննիսյանը՝ հղում անելով գերմանացի իրավագետ Հ. Մաուրերին՝ հասարակ իրավունքի հասկացությունները սկզբունքորեն չեն կարող հիմք ընդունվել սահմանադրական նորմերը մեկնաբանելիս, բացառությամբ, եթե պարզվում է, որ դրանք համապատասխանում են սահմանադրաիրավական համատեքստին, ինչը շատ հազվադեպ է լինում¹²: Հետևաբար, տեղեկատվության ազատության սահմանադրաիրավական մեկնաբանումը պետք է իրականացվի ավելի լայն, քան այն նշված է օրինակ՝ հենց ՏԱ օրենքում: Ուստի, սահմանադրաիրավական առումով՝ տեղեկատվության ազատությունն ընդգրկում է ցանկացած տեսակի տեղեկության փնտրման, ստացման ու տարածման ազատությունը:

Այնուամենայնիվ, հասարակ իրավունքի որդեգրած մեկնաբանումը չպետք է նաև շփոթի տեղիք տա և պետք է հնարավորինս որոշակի ներկայացնի կոնկրետ հասարակ իրավունքում դրա բնույթը: Ստացվում է, որ ՏԱ օրենքը կարգավորում է միայն հանրային մարմիններից տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքի ապահովմանն ուղղված իրավահարաբերությունները, սակայն անվանակոչվել է «Տեղեկատվության ազատության մասին» օրենք՝ հիմք ընդունելով դրանում տեղեկատվության ազատության դեֆինիտիվ նորմը: Արդյունքում՝ ՏԱ օրենքը, կարգավորելով տեղեկատվության ազատության իրավունքի միայն մի մասը (51-րդ հոդվածը և փնտրել, ստանալ բաղադրիչները), վերնագրվել է հիմնական իրավունքի (տեղեկատվության ազատության) ողջ անվանմամբ: Կարծում ենք, որ քննարկվող իրավական ակտի անվանումն այդքան էլ չի համապատասխանում և արտացոլում տվյալ իրավական ակտի կարգավորման առարկային: Օրինակ՝ Հնդկաստանում նշված իրավահարաբերությունները կարգավորվում են 2005թ.-ին ընդունված և «Տեղեկացված լինելու մասին» անվանումը կրող օրենքով¹³, իսկ ՌԴ-ում քննարկվող իրավական ակտի անվանումն առավել է համապատասխանում առարկային՝ կոչվելով «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովման մասին» օրենք¹⁴: Հատկանշական է նաև, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 31.03.2017թ.-ի Նախագծով¹⁵ «տեղեկատվության

ազատություն» հասկացությունը հանվել էր, հավանաբար, գտնելով, որ հիմնական իրավունքի այլ հասկացություն օրենքով սահմանելն այդքան էլ նպատակահարմար չէ: Կարծում ենք, որ անհրաժեշտ է ՏԱ օրենքի անվանումը համապատասխանեցնել դրանով կարգավորվող իրավահարաբերությունների իրական բնույթին: Սրանով նաև կապահովվի տեղեկատվության ազատության հասկացության սահմանադրաիրավական մեկնաբանման շփոթի վերացումը:

Վերադառնալով տեղեկատվության ազատության արդեն իսկ քննարկվող տեսակներին, ինչպես նաև հաշվի առնելով դրանց միջև եղած ծավալային և բովանդակային մի շարք տարբերություններն ու մասնահատկությունները՝ առաջարկում ենք առանձնացնել տեղեկատվության ազատության երկու տեսակ՝ ընդհանուր տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն:

Ընդհանուր տեղեկատվության ազատությունը (այսուհետ նաև՝ ԸՏԱ) հանդիսանում է մարդու հիմնական իրավունք, որն ապահովում է տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Հատուկ տեղեկատվության ազատությունը (այսուհետ նաև՝ ՀՏԱ) հանդիսանում է մարդու հիմնական իրավունք, որն ապահովում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը:

Տարբեր երկրների սահմանադիրների մոտեցումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան երկրներ, որոնք հստակորեն առանձնացնում են մեր կողմից նշված ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու հատուկ տեղեկատվության ազատությունը՝ դրանք ներկայացնելով որպես մարդու առանձին իրավունքներ: Նշված ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ ընդհանուր ու հատուկ տեղեկատվության ազատությունների և արտահայտվելու ազատության հարաբերակցության վերաբերյալ տարբեր երկրների սահմանադիրների մոտեցումները ձևավորել են երեք մոդել, որոնցում.

1. արտահայտվելու ազատությունը, ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու հատուկ տեղեկատվության ազատությունը հանդիսանում են որպես մարդու առանձին իրավունքներ՝ նշված մոդելն են որդեգրել Բելգիայի, Բուլղարիայի, Էստոնիայի, Ադրբեջանի, Ճապոնիայի, Մոլդովայի, Նիդերլանդների, Ֆրանսիայի, Ռումինիայի, Իսպանիայի, Շվեդիայի, Ուկրաինայի, ՌԴ-ի սահմա-

նադրությունները և այլն:

2. Արտահայտվելու ազատությունն իր մեջ ներառում է ընդհանուր տեղեկատվության ազատությունը՝ այս մոդելով են առաջնորդվել Ալբանիան, Հայաստանը, Կոլումբիան, Խորվաթիան, Չեխիան, Ֆինլանդիան, Վրաստանը, Հունաստանը, Հունգարիան, Իտալիան, Լատվիան, Լիտվան, Մեքսիկան, Նոր Զելանդիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սլովակիան, ՀԱՀ-ը, Թուրքիան, Ուգենդան և այլն:

3. Արտահայտվելու ազատությունն իր մեջ ներառում է հատուկ տեղեկատվության ազատություն՝ սրա դեպքում, հիմնականում, ընդհանուր տեղեկատվության ազատությունը, որպես առանձին հիմնական իրավունք, չի առանձնացվում. նման մոտեցում է արտացոլված այնպիսի երկրների մայր օրենքներում, ինչպիսիք են՝ Չեխիան, Ֆինլանդիան, Լիտվան, Մեքսիկան, Սլովակիան և այլն:

Ինչպես տեսնում ենք՝ ՀՀ-ն և մի շարք երկրներ ընդհանուր տեղեկատվության ազատությունը ներառում են արտահայտվելու ազատության մեջ: Գտնում ենք, որ նման մոտեցումը հիմնավոր էր, միայն ու միայն, տեղեկատվության ազատության սաղմնային վիճակում գտնվելու ժամանակ, երբ վերջինս չունի բավարար իրավական և պրակտիկ «հնարավորություն»՝ հանդես գալու որպես առանձին իրավունք: Միաժամանակ, կարող ենք արձանագրել, որ հատուկ տեղեկատվության ազատությանը հաջողվել է առանձնանալ և ներկայանալ որպես առանձին իրավունք, քանի որ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը առանձնակի կարևորություն է կրում և գտնվում է միջազգային մի շարք պայմանագրերի ուշադրության կենտրոնում, ինչը չենք կարող ասել ընդհանուր տեղեկատվության ազատության մասին:

Կարծում ենք, որ խիստ անհրաժեշտություն կա, բացի հատուկ տեղեկատվության ազատությունից նաև մեծ ուշադրության արժանացնել ընդհանուր տեղեկատվության ազատությանը, դիտարկել այն որպես մարդու առանձին իրավունք, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների, ժողովրդավարության զարգացման ու մարդկության պահանջներին մասնականակաշրջանում տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունն այլևս չի կարող համարվել սոսկ արտահայտվելու ազատության իրավունքի բաղադրիչ կամ լրացուցիչ դրսևորում: Քննարկվող իրավունքն օրեցօր փոփոխվում, զարգանում և ընդլայնվում է՝ ի հաշիվ ժամանակակից մարտահրավերների, որոնք պահանջում են դրանց համաժամանակյա ու համար-

ժեք իրավական կարգավորումներ:

Առաջ քաշելով նոր հայեցակետ՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել տեղեկատվության ազատության բաղկացուցիչ երկու իրավունքների՝ ընդհանուր տեղեկատվության ազատության և հատուկ տեղեկատվության ազատության էության բացահայտմանն ուղղված դրանց հարաբերակցությունը՝ վեր հանելով մի շարք ընդհանրություններ և տարբերություններ: Վերջինս կարող ենք դիտարկել մի քանի տեսանկյունից.

- ԸՏԱ-ն ավելի լայն է և ընդգրկում է ցանկացած տեսակի տեղեկության փնտրման, ստացման ու տարածման իրավունքը: Այս իրավունքը երաշխավորում է նաև ռադիոյի, մամուլի և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը: Միաժամանակ, ՀՏԱ-ն ավելի նեղ է, քանի որ կարգավորում է միայն հանրային մարմիններից տեղեկությունների փնտրման ու ստացման իրավահարաբերությունները,

- ԸՏԱ-ի և ՀՏԱ-ի իրացմամբ հետապնդվող շահը համընկնում է, քանի որ երկուսի դեպքում էլ հետապնդվում է հանրային (անորոշ թվով անձանց) հետաքրքրության բավարարման նպատակ,

- Պետության պարտականությունները ԸՏԱ-ի դեպքում ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի «առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության» ձևակերպումն ինքնին հավաստում է պետության նեգատիվ պարտականությունը՝ անգործություն դրսևորելով որևէ կերպ չմիջամտել ընդհանուր տեղեկատվության ազատության իրացմանը, մյուս կողմից՝ ակտիվ գործողություններով ստեղծել այնպիսի միջոցներ (այդ թվում՝ իրավական), որը հնարավորություն կտա ապահովել անձի նշված հիմնարար իրավունքի իրացումը: Մինչդեռ ՀՏԱ-ի դեպքում առկա է պետության միայն պոզիտիվ պարտականությունը՝ տրամադրել հայցվող տեղեկատվությունը: Պետության առջև է դրված տեղեկատվական միջոցների ազատությունն ապահովելու պարտականությունը, և որպես այն իրացնելու երաշխիք՝ օրենքով սահմանված կարգով են կարգավորվում տեղեկություններ ստանալու, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը¹⁶:

- Քննարկվող հիմնական իրավունքի բաղկացուցիչ տարրերի ներառումը: Ինչպես վերևում նշեցինք, տեղեկատվության ազատությունն ինքնին ներառում է տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու բաղկացուցիչ տարրեր: Սա դիտարկելով մեր կողմից ներկայացվող հայեցակետի

լուսի ներքո, կարող ենք արձանագրել, որ ԸՏԱ-ի դեպքում տեղեկատվության ազատության երեք բաղկացուցիչ տարրերն էլ արտահայտված են: Մինչդեռ ՀՏԱ-ն ներառում է միայն տեղեկություն փնտրելու և ստանալու բաղադրատարրերը: Նշվածն ավելի պատկերավոր դարձնելու համար նշենք, որ, եթե անձը ՀՏԱ-ի միջոցով ստացված տեղեկությունը սկսում է տարածել, ապա այն դուրս է գալիս ՀՏԱ-ի իրավական ռեժիմից և մտնում ԸՏԱ-ի իրավական ռեժիմ, որը, ներառում է տեղեկություն տարածելու բաղադրատարրը:

- Իրավահարաբերության սուբյեկտները: Եթե ՀՏԱ-ի դեպքում առավել քան պարզ է, որ իրավահարաբերության կողմերից առնվազն մեկը հանրային մարմին է, իսկ մյուսը՝ տեղեկատվության ստացմանն ուղղված գործողություն (հարցում) կատարող անձ, ապա ԸՏԱ-ի դեպքում իրավահարաբերության սուբյեկտներն այդքան էլ հստակ չեն: Հասկանալի է, որ սուբյեկտներից մեկը տեղեկատվության տարածման, փնտրման կամ ստացմանն ուղղված գործողություն (հարցում) կատարող անձ է, մինչդեռ մյուս կողմն անորոշ է: ԸՏԱ-ի պարագայում օրինակ՝ տեղեկատվության ստացմանն ուղղված գործողության (հարցման) մյուս կողմ կարող է լինել ցանկացած սուբյեկտ (այդ թվում՝ մասնավոր իրավաբանական անձ), ով օրենքով կոնկրետ տեղեկության տրամադրման պարտականություն ունի:

- ԸՏԱ-ի և ՀՏԱ-ի մրցակցությունը: Հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են և՛ ընդհանուր տեղեկատվության ազատությունը, և՛ հատուկ տեղեկատվության ազատությունը, ուստի այս դեպքում ԸՏԱ-ի և ՀՏԱ-ի միջև առաջացող հարաբերակցությունը դրսևորվում է որպես ընդհանուր նորմի (lex posterior) և հատուկ նորմի (lex specialist) մրցակցություն: Ըստ վերջինիս՝ երկու նորմերի միջև մրցակցության (կոլիզիայի, հակասության) դեպքում կիրառելի է lex specialist-ը¹⁷, այս դեպքում՝ 51-րդ հոդվածը: Lex specialist նորմը նախապատվություն ունի lex posterior և «մարդու համար բարենպաստ նորմի առաջնության» կանոնների նկատմամբ¹⁸: Սա նշանակում է, որ, եթե անձն իրացնում է իր տեղեկատվության ազատության իրավունքը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկատվություն ստանալու ձևով, ապա տվյալ իրավահարաբերության համար կիրառելի է դառնում ոչ թե տեղեկատվության ազատության ընդհանուր նորմը՝ 42-րդ հոդված, այլ հատուկ նորմը՝ 51-րդ հոդված: Չուգահեռ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ-ում գործող

իրավակիրառ պրակտիկան¹⁹ հատուկ տեղեկատվության ազատության իրավահարաբերությունների իրավական հիմք է ընդունում ինչպես հատուկ նորմը՝ 51-րդ հոդված, այնպես էլ ընդհանուր նորմը՝ 42-րդ հոդված: Մինչդեռ, նշված հոդվածներով կարգավորվող իրավահարաբերություններն ունեն տարբերություններ՝ ընդհուպ մինչև նշված հիմնական իրավունքների սահմանափակման հիմքերի տարբերությունները:

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը՝ վրա է հասել ժամանակը, երբ պետք է ներկայացվեն ու խորն ուսումնասիրության ենթարկվեն տեղեկատվության ազատության իրավունքի տակ հանդես եկեղ տարրերը՝ ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու հատուկ տեղեկատվության ազատությունը: Նման պահանջմունքի վկայությունն է ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների ու մարդկության առաջընթացին զուգահեռ տեղեկատվության ազատության զարգամանը համաժամակյա իրավական գնահատական տալու հրամայականը, այնպես էլ արդեն իսկ մի շարք երկրների կողմից առաջարկվող երկու իրավունքների ամուղղակի ճանաչման հանգամանքները:

Առաջարկվող հայեցակետը, որը թույլ է տալիս առանձնացնել տեղեկատվության ազատության երկու տարր՝ ընդհանուր տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն, ներկայացված չէ մասնագիտական գրականության մեջ: Այնուամենայնիվ, մի շարք նորմատիվ իրավական ակտեր անուղղակիորեն ճանաչում են նշված երկու տեսակ իրավունքները: Կարծում ենք, որ հատուկ տեղեկատվության ազատության և ընդհանուր տեղեկատվության ազատության առանձնացումը թույլ կտա նախ՝ տեղեկատվության ազատության իրավունքը ներկայացնել որպես մարդու առանձին իրավունք, երկրորդ՝ տարանջատել հստակ տարբերություններով հանդես եկող հանրային մարմինների տեղեկություններ ստանալու ազատությունը և ցանկացած տեսակի տեղեկության փնտրման, ստացման ու տարածման ազատությունը, որի շնորհիվ վեր կհանվեն նշված իրավունքների առանձնահատկությունները, իսկ մասնակի հետազոտումը թույլ կտա ավելի երաշխավորել դրանց իրացումը՝ ապահովելով դրանց իրավական գնահատական տալու պահանջմունքները:

¹ Memorandum on The Law on Television and Radio Broadcasting in the Republic of Armenia, by ARTICLE 19 Global Campaign for Free Expression, London, February 2001. <https://www.refworld.org/pdfid/4756cf818.pdf>

² International Law Governing Communications and Information (A Collection of Basic Documents), Edward W. Ploman, Greenwood Press, 1982, էջ 127:

³ Информационное право: учеб. пособие. Ч. 1 / В. М. Боев, О. Г. Павельева; ГУАП., СПб., 2006, С. 26.

⁴ “The Global Explosion of Freedom of Information Laws”. Administrative Law Review/, Volume 58, Number 1; John M. Ackerman, Irma E. Sandoval-Ballesteros, Washington College of Law, American University, Winter 2006, էջ 87:

⁵ Roberto Saba, El Derecho de la Persona a Acceder a la Informacign en Poder del Gobierno, 3 DERECHO COMPARADO DE LA INFORMACIóN 45, (Jan.-June 2004), էջ 153: <https://bit.ly/2VZGNFR>

⁶ Mark Bovens, Information Rights: Citizenship in the Information Society, 10 J. POL. PHIL. 317, 317-341 (2002), էջ 327: <https://bit.ly/3tWomOR>

⁷ Freedom of Information as an Internationally Protected Human Right, Toby Mendel, Head of Law Programme at ARTICLE 19. <https://bit.ly/3AvL96y>

⁸ The nature and value of access to information laws in Canada and the EU: Ideals, practices and perspectives. Irma Spahiu, York University Toronto, Ontario, Canada, 2016, էջ 42: <https://bit.ly/2ZjqKnA>

⁹ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (19-րդ հոդված), «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (19-րդ հոդվածի 2-րդ մաս), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (10-րդ հոդվածի 1-ին մաս):

¹⁰ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի թիվ 34 «Ընդհանուր մեկնաբանություն», հոդված 19-րդ, «Կարծիքի և արտահայտվելու ազատություն», ԺՆՆ, 2011, կետ 18-րդ: <https://bit.ly/3KmD0Xg>

¹¹ ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՈ-1396, ընդունված՝ 26.12.2017թ.:

¹² «Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն», Գ. Հովհաննիսյան, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Եր., 2020, էջ 339:

¹³ The right to information act, 21.06.2005. <https://rti.gov.in/rti-act.pdf>

¹⁴ Law on Providing Access to Information on the Activities of Government Bodies and Bodies of Local Self-Government (2009) <https://www.legislationline.org/documents/id/17759>

¹⁵ <https://www.e-draft.am/projects/151/about>

¹⁶ ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՈ-1396 որոշում, ընդունված՝ 26.12.2017թ.:

¹⁷ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի՝ «(...) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը»:

¹⁸ «Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ», հեղ. խումբ՝ Մ. Մուրադյան, Ա. Ղամբարյան.-3-րդ լրամշակված հրատ.-Եր.: «Լուսաբաց հրատարակչություն», 2018, էջ 587:

¹⁹ Տե՛ս, օրինակ՝ Սահմանադրական դատարանի թիվ ՍԳՈ-1396, ՍԳՈ-1256 որոշումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի թիվ 34 «Ընդհանուր մեկնաբանություն», հոդված 19-րդ, «Կարծիքի և արտահայտվելու ազատություն», ԺՆՆ, 2011, կետ 18-րդ: <https://bit.ly/3KmD0Xg>:

2. «Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ», Հեղ. խումբ՝ Մ. Մուրադյան, Ա. Ղամբարյան.-3-րդ լրամշակված հրատ.-Եր.: «Լուսաբաց հրատարակչություն», 2018թ.:

3. Սահմանադրական դատարանի թիվ ՍԳՈ-1396, ՍԳՈ-1256 որոշումներ:

4. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր:

5. «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր:

6. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա:

7. Информационное право: учеб. пособие. Ч. 1 / В. М. Боев, О. Г. Павельева; ГУАП., СПб., 2006.

8. International Law Governing Communications and Information (A Collection of Basic Documents), Edward W. Ploman, Greenwood Press, 1982.

9. “The Global Explosion of Freedom of Information Laws”. Administrative Law Review/, Volume 58, Number 1; John M. Ackerman, Irma E. Sandoval-Ballesteros, Washington College of Law, American University, Winter 2006.

10. Roberto Saba, El Derecho de la Persona a Acceder a la Informacign en Poder del Gobierno, 3 DERECHO COMPARADO DE LA INFORMACIóN 45, (Jan.-June 2004) <https://bit.ly/2VZGNFR>.

11. Memorandum on The Law on Television and Radio Broadcasting in the Republic of Armenia, by ARTICLE 19 Global Campaign for Free Expression, London, February 2001.<https://www.refworld.org/pdfid/4756cf818.pdf>.

12. Mark Bovens, Information Rights: Citizenship in the Information Society, 10 J. POL. PHIL., 317-341 (2002): <https://bit.ly/3tWomOR>.

13. Freedom of Information as an Internationally Protected Human Right, Toby Mendel, Head of Law Programme at ARTICLE 19.<https://bit.ly/3AvL96y>.

14. The nature and value of access to information laws in Canada and the EU: Ideals, practices and perspectives. Irma Spahiu, York University Toronto, Ontario, Canada, 2016, <https://bit.ly/2ZjqKnA>.

Էդգար Ավետիսյան

Аспирант кафедры права Европейского университета в Армении

РЕЗЮМЕ

Свобода общей информации и свобода конкретной информации

Фундаментальное право на свободу информации, являющееся одним из важнейших прав человека в демократическом государстве, нуждается в получении соответствующей правовой оценки параллельно с развитием информационных технологий и человечества. Последнее выражается в цепочке развития свободы информации. Сначала это было лишь частью права на свободу выражения мнений, затем как отдельное право, из которого сейчас в центре внимания находится право на получение информации от государственных органов.

В исследовании представлены позиции, данные свободе информации на теоретическом и практическом уровне (в правовых актах РА и зарубежных стран), которые, сочетаясь с современными требованиями, предлагают новую точку зрения. представить и разделить два права в рамках свободы информации: общее, свобода любого вида информации, и конкретное, свобода получать информацию от государственных органов.

Ключевые слова - свобода информации, свобода общей информации, свобода конкретной информации, концепт, Конституция, правовая оценка, права человека.

Edgar Avetisyan

European University of Armenia, Chair of Law, Postgraduate Student

SUMMARY

Freedom of general information and freedom of specific information

The fundamental right to freedom of information, being one of the most important human rights in a democratic state, needs to receive an appropriate legal assessment in parallel with the development of information technology and humanity. The latter is reflected in the chain of development of freedom of information. At first it was only a part of the right to freedom of expression, then as a separate right, from which now the right to receive information from public bodies is in the center of attention.

The research presents the positions given to the freedom of information at the theoretical and practical level (in the legal acts of the RA and foreign countries), which, combining with the modern requirements, offer a new point of view. to present and separate two rights under the freedom of information: general, freedom of any kind of information, and specific, freedom to receive information from public bodies.

Key words - freedom of information, freedom of general information, freedom of specific information, concept, Constitution, legal assessment, human rights.

Բնագիրը ներկայացվել է 16.03.2022թ.

Ընդունվել է տպագրության 21.03.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Տոնյանը

ՆՈՐԱՅՐ ԱՎԱԳՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**«ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ» ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Սույն գիտագործնական աշխատանքի թեման արդիական է և առնչվում է վարչական վարույթի և վարչարարության ներկայումս արդիական այն հարցադրումների հետազոտությանը, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու «վարչական մարմին» եզրույթի իրավական բովանդակությունը՝ վարչական վարույթի տարբեր տեսակների համատեքստում: Հեղինակը առաջ է քաշել այն մոտեցումը, որ «վարչական մարմին» եզրույթը թերևս կարող է ամբողջությամբ և անվերապահորեն կիրառելի լինել բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է բացառապես գործադիր իշխանության իրականացման հետ, իսկ իշխանության մյուս ճյուղերի պարագայում ներկայացվել են որոշ հիմնավորված վերապահումներ:

Հիմնարար- վարչական վարույթ, վարչարարություն, վարչական մարմին, առանձին տեսակի վարչական վարույթ, վարչական վարույթի տեսակ:

Ի տարբերություն խորհրդային ժամանակաշրջանի իրավագետների, ովքեր վարչական իրավունքի վերաբերյալ հետազոտություններ իրականացնելիս ցուցաբերել են պահպանողական մոտեցում¹, արևմտյան իրավագետները մշտապես կարևորել են հանրային իրավական գործառույթներ իրականացնող մարմինների ցանկացած լիազորությունների իրականացման ընթացակարգերի համակողմանի ուսումնասիրությունը և նոր հարցադրումներին անդրադարձը: Արդյունքում, ձևավորվել է, այսպես կոչված, ամերիկյան դոկտրինալ մոտեցում, ըստ որի՝ վարչական իրավունքի ամերիկյան և բրիտանական հայեցակարգերում վարչական իրավունքը սահմանում է նաև վարչական մարմինների լիազորությունները և միտված է կանոնակարգելու հետևյալ երեք հարցադրումները՝ 1) ինչպիսի՞ լիազորություններով կարող են օժտվել վարչական մարմինները, 2) ինչպե՞ս են որոշվում վարչական մարմիններին վերապահվող լիազորությունների սահմանները և 3) ինչպե՞ս են վարչական մարմինները սահմանափակվում այդ լիազորությունների շրջանակներում²:

Նշված հարցադրումները հատկապես կարևոր նշանակություն կարող են ունենալ առանձին տեսակի վարչական վարույթների առնչությամբ՝ բացահայտելով առանձնահատկությունների որոշ չափորոշիչներ: Մասնավորապես, հստակեցնելով, թե ընդհանուր առմամբ ինչպիսի լիազորություններ կարող են վերապահվել վարչական մարմիններին՝ առավել հիմնավորված կլինի այն հարցի պատասխանը, թե վարչական մարմինների ո՞ր գործառույթների իրականացման համար են անհրաժեշտ հատուկ ընթացակարգեր: Վարչական մարմիններ-

րին վերապահվող լիազորությունների սահմանների որոշման չափորոշիչներն ինքնուրույն կարող են ծառայել առանձին տեսակի վարչական վարույթներում լիազորությունների սահմանների որոշման համար և այլն:

Վարչական վարույթը, որը ժամանակակից վարչական իրավունքի կենտրոնական և հիմնարար ինստիտուտներից մեկն է, իրավաբանական դոկտրինում ներկայացվում է երկու նշանակությամբ: Նախ, վարչական վարույթը համարվում է գործադիր իշխանության կողմից իրականացվող ցանկացած գործառույթի իրականացման ընթացակարգ, որպիսի տեսակետներում նշանակություն չունի այն հանգամանքը, թե տվյալ գործառույթն իրականացվում է ներքին կառավարչական հարաբերություններում, թե ունի արտաքին ազդեցություն: Վերջինս վարչական վարույթը բնորոշում է լայն իմաստով: Նեղ իմաստով բնորոշելիս, արդեն ընդգծվում է, որ վարչական վարույթն իրավական որոշակի հետևանքներ է առաջացնում, հատկապես, արտաքին հարաբերություններում և եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ³:

Վարչական վարույթի նեղ իմաստն է ամրագրված նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 19-րդ հոդվածում, համաձայն որի՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է: Ակնհայտ է, որ վարչական վարույթի այսպիսի հասկացությունը կառուցված և պայմանավորված է երկու առանձին «վարչական մարմին» և «վարչական ակտ» իրավական եզրույթներից, հետևաբար «վարչական վարույթ» հասկացության և դրա բովանդակության բացահայտման

համար անհրաժեշտ է, առաջին հերթին, պարզել «վարչական մարմին» և «վարչական ակտ» եզրույթների իրավական նշանակությունը: Նշված եզրույթների իրավական նշանակության պարզաբանումն ունի կարևոր գիտագործնական նշանակություն ոչ միայն «վարչական վարույթ» եզրույթի իրավական իմաստի բացահայտման, այլ նաև մի շարք այլ միասնական մոտեցում չունեցող հարցերի վերաբերյալ հիմնավոր դիրքորոշում ներկայացնելու համար:

Սույն աշխատանքում անդրադարձ է արված «վարչական մարմին» եզրույթին, քանզի այս կամ այն պետական մարմինը վարչական մարմին համարելու հարցի հստակեցումն ունի կարևոր իրավական նշանակություն. որպեսզի պետական մարմինը համարվի վարչական մարմին, հարկ է, որ նրա գործունեության նկատմամբ կիրառելի լինի վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը⁴:

Առաջնահերթ «վարչական մարմին» եզրույթի նշանակությունը պարզելը կարևոր է նաև հետագայում «վարչական ակտ» եզրույթի նշանակությունը որոշակիացնելու համար, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ «... վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը *վարչական մարմինն ընդունել է (ընդգծումը մերն է՝ Ն.Ա.)* հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»: Օրենսդրությամբ տրված բնորոշումից ակնհայտ է, որ «վարչական ակտ» եզրույթի նշանակությունը պարզելն առավել տրամաբանական կլինի «վարչական մարմին» եզրույթի նշանակությունը պարզելու համատեքստում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի որոշ իրավակարգավորումների, այդ թվում՝ «վարչական մարմին» եզրույթի վերաբերյալ գիտական հիմնավոր դիրքորոշումների բացակայությունը կարող է, ընդ որում, որոշ դեպքերում, ցավոք, արդեն հանգեցրել է դրանց սխալ ընկալման և սխալ իրավակիրառման: Նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ օրենքի I և VII բաժինների («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի «Վարչարարության հիմունքները» վերտառությամբ 1-ին բաժինն իր մեջ ներառում է 1-ին «Ընդհանուր դրույթներ», 2-րդ «Վարչա-

րարության հիմնարար սկզբունքները» և 3-րդ «Գործերի ենթակայությունը վարչական մարմիններին, վարչական մարմինների փոխօգնություն» գլուխները, իսկ «Պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար» վերտառությամբ 7-րդ բաժնում ներառված են 15-րդ «Պատասխանատվություն կրողը, պատասխանատվության հիմքերը և կարգը, վնասը հատուցելը» և 16-րդ «Պատասխանատվության հատուկ կանոնները» գլուխները:) գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող *ցանկացած գործունեության վրա (ընդգծումը մերն է՝ Ն.Ա.)*: Փաստորեն, նշված բաժինների կիրառելիությունը հանրային իրավունքի բնագավառում իրականացվող այս կամ այն գործունեության նկատմամբ հասկանալու համար անհրաժեշտ է լինելու պարզել, թե արդյո՞ք գործունեություն իրականացնող սուբյեկտը վարչական մարմին է:

Ընդ որում, նշված դրույթում առկա «ցանկացած գործունեություն» եզրույթի ներքո հարկավոր է հասկանալ, բացառապես, վարչարարություն իրականացնելու չորս եղանակները՝ 1) վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեությունը, 2) նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեությունը, 3) փաստական հետևանք առաջացնող գործողությունը և 4) փաստական հետևանք առաջացնող անգործությունը, քանի որ նույն հոդվածի 2-րդ մասում օրենքի տարբեր բաժինների գործողությունների ոլորտները սահմանելիս նշվում է այդ նույն եղանակներից միայն երեքը, մասնավորապես, II-VI բաժինների գործողությունը տարածվում է վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության վրա, իսկ IV-VI բաժինների գործողությունը տարածվում է նաև վարչական մարմինների այնպիսի գործողության և անգործության վրա, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ, փաստորեն, օրենսդիրը բացառում է II-VI բաժինների գործողությունը նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության՝ այդ եղանակով վարչարարություն իրականացնելու նկատմամբ: Այդպիսով, օրենսդիրը «ցանկացած գործունեություն» եզրույթի կիրառմամբ շեշտադրել է, որ I և VII բաժինների գործողությունը տարածվում է վարչարարության բոլոր, այդ թվում՝ նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող եղանակների վրա՝ սեփական կամքը բացահայտելով տվյալ դրույթում ևս «վարչական մարմիններ» եզրույթի կիրառմամբ:

Սակայն, իրավակիրառ պրակտիկայում առկա են Վարչական դատարանի կողմից քննության

առած բազմաթիվ դատական գործեր, որոնք ընդդեմ Ազգային ժողովի բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին են՝

Նշվածից հետևում է, որ իրավակիրառ պրակտիկան ընթանում է Ազգային ժողովը վարչական մարմին համարելու ուղղությամբ, որպիսի տրամաբանությամբ ողջամտորեն հնարավոր կլինի պնդել, որ Ազգային ժողովի կողմից հանրային իրավունքի բնագավառում իրականացվող նորմատիվ ակտերի, այդ թվում՝ օրենքների ընդունման գործունեության (ընթացակարգերի) նկատմամբ կիրառելի են վերը նշված բաժիններով նախատեսված իրավակարգավորումները: Ավելին, որպես այդպիսի դիրքորոշման օգտին խոսող հանգամանք կարող են վկայակոչվել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշ իրավակարգավորումները, օրինակ՝ 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն նորմը, համաձայն որի՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, որով կհիմնավորվի, որ Ազգային ժողովի կողմից իրականացվող հանրային իրավունքի բնագավառում իրականացվող գործունեության որոշ տեսակներ վարչադատավարական վերահսկողության օբյեկտ չեն համարվում բացառապես այդ նորմի ուժով, սակայն դրանց նկատմամբ կիրառելի են վերը նշված բաժիններով նախատեսված կարգավորումները:

Խնդիրն այն է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի «Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ» դրույթն անհարկի տարածական մեկնաբանությունների տեղիք է տալիս: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ՎԴ/4901/05/11 վարչական գործով 27.11.2015թ. որոշմամբ անդրադառնալով այս կարգավորմանը, նշել է, որ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածում վարչական մարմնի հասկացությունը, նախ սահմանել է ինստիտուցիոնալ առումով՝ ամրագրելով, որ վարչական մարմիններ են գործադիր իշխանության հանրապետական մարմինները, տարածքային կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, այնուհետև վարչական մարմնի հասկացությունը սահմանել է գործառնության շրջանակներում՝ նշելով, որ վարչական մարմիններ են նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինները: Այսինքն՝ ինստիտուցիոնալ առումով՝ վարչական մարմին չհանդիսացող պե-

տական մարմինը, որպեսզի գործառնության շրջանակում համարվի վարչական մարմին, հարկավոր է, որ իրականացնի վարչարարություն, ընդ որում օրենսդիրը շեշտադրել է այդպիսի գործունեություն իրականացնող պետական մարմինը վարչական մարմին համարելու կարևորությունը կամ, այլ կերպ ասած՝ «վարչարարություն» հասկացության էական հատկանիշ է համարել պետական մարմինը վարչական մարմին համարվելը, իսկ թե պետական մարմինը կոնկրետ իրավիճակում վարչական մարմին կհամարվի ինստիտուցիոնալ, թե գործառնության շրջանակում, արդեն «վարչարարություն» հասկացության էական հատկանիշ չէ: Փաստորեն, եթե Ազգային ժողովը, Վարչական դատարանի կողմից քննության առած օրինակում, վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն իրականացնելիս գործառնության շրջանակում կարող է համարվել վարչական մարմին, ապա ինչո՞ւ նորմատիվ իրավական ակտ, օրինակ՝ օրենք, ընդունելիս չի կարող գործառնության շրջանակում համարվել վարչական մարմին, չէ՞ որ վարչարարությունն արտաքին ներգործություն ունեցող այն գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ:

Վերը նշվածը տեսականորեն հնարավոր, իսկ գործնականում էլ չբացառվող ծայրահեղական դիրքորոշումներ են, և ըստ դրանց իրավակիրառ պրակտիկա չունենալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում առկա անորոշ հասկացություններից ծագող հիմնախնդիրները կարող են լուծվել բացառապես համապատասխան ոլորտները կարգավորող նոր օրենսդրական ակտերի ընդունմամբ՝ հաշվի առնելով երկու իրավական ակտերի բովանդակային փոխկապակցվածությունը, քանի որ միասնական և հստակ չափանիշներով իրավական կարգավորումն ինքնին խրախուսելի է և հանդիսանում է ինչպես իրավունքի գերակայության, այնպես էլ իրավահավասարության, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի, իրավակիրառ գործունեության որոշակիության ու կանխատեսելիության արժեքավոր երաշխիք՝

Ինչևէ, անդրադառնալով վարչական մարմինների ծագումնաբանությանը՝ կարելի է նշել, որ վարչական մարմինների կայացումն ու զարգացումը եվրոպական երկրներում տեղի է ունեցել որոշակի անցումային փուլերով, առաջին հերթին առկա են եղել հիմքեր վարչական մարմինների ի հայտ գալու համար, որից հետո յուրաքանչյուր երկրում այդ մարմինները ձևավորվել են տվյալ երկրի իրա-

վաքաղաքական գործունեների ազդեցության ներքո, և ստացել են ազգային տարբերակում, իսկ հետագայում, նաև մեր օրերում նկատվում են դրանց միջև առկա ընդհանրությունների աճ: Կառավարման մարմինները, որոնք ի սկզբանե պատմականորեն ստեղծված են եղել ապահովելու հպատակների հնազանդությունը բարձրագույն իշխանությանը, այժմ, արդեն պատասխանատու են հասարակության առջև: Գործադիր իշխանության գործունեության ոլորտի հետզհետե ընդլայնումը հանգեցրել է նրան, որ վարչական մարմինների առջև դրված խնդիրներն աճել են, և պետության ներսում օրինականությունն ապահովելուց զատ, հետագայում դրանք պարտավոր են եղել նաև իրականացնել տնտեսական հարաբերությունների նկատմամբ վերահսկողություն, իսկ ավելի ուշ, նաև հասարակության անդամների կյանքի և գոյության համար անհրաժեշտ այլ գործառույթներ⁷:

Վարչական մարմինների ծագման և զարգացման ուսումնասիրությունից երևում է, որ ըստ ֆրանսիական դոկտրինի՝ վարչական մարմինների այժմյան բովանդակությամբ ընկալման նախադրյալները սկիզբ են առել 19-րդ դարում, երբ վարչական մարմիններն առավելապես ընկալվում էին որպես միջնորդ օղակ իշխանությունների և հասարակության անդամների միջև, որոնց միջոցով օրենսդրական կարգադրագրերը հասնում են իրենց հասցեատերերին, իսկ վերջիններիս բողոքներն իշխանություններին⁸: Ընդ որում, այդ մարմինները կաշկանդված են եղել օրինականության սահմանադրական սկզբունքով և գործել են օրենսդիր իշխանության կողմից ընդունված կարգավորումներին համապատասխան⁹:

Փաստորեն, դեռևս, 19-րդ դարում ակնհայտ է եղել վարչական մարմինների գործադիր իշխանության մարմինների համակարգում ներառված լինելու, ինչպես նաև օրինականության սկզբունքով կաշկանդված լինելու հանգամանքները, հատկապես, ընդգծվել է դրանց օրենքով նախատեսված գործառույթների իրավակիրառ բնույթը: Ավելին, Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրված է, որ վարչական համակարգը կառավարության ենթակայության ներքո է¹⁰:

Վարչական իրավունքի իտալական դոկտրինում նշվում է, որ վարչական մարմինների շարքին են դասվում բոլոր այն մարմինները, որոնք ստեղծված են հետևյալ երեք խնդիրներից որևիցե մեկի լուծման նպատակով՝ ա) քաղաքական ինստիտուտներին աջակցելը կառավարման բնագավառում, բ) քաղաքական ինստիտուտների կողմից

որոշված պետական նպատակներին հասնելուն ուղղված գործունեություն իրականացնելը և գ) հանրային շահից ելնելով՝ Սահմանադրության, օրենքների և կառավարության քաղաքականության հիման վրա ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման և շահույթի ստացման հետ կապված գործառույթներ իրականացնելը¹¹:

Իտալիայի Հանրապետության սահմանադրության 95-րդ հոդվածն ամրագրում է, որ նախարարների խորհրդի նախագահը պահպանում է քաղաքական և վարչական գործունեության ուղղությունը՝ խրախուսելով և համակարգելով նախարարների գործունեությունը, իսկ 97-րդ հոդվածն ամրագրում է, որ պետական հաստատությունները կազմակերպվում են օրենքով նախատեսված կարգով, այնպես, որ ապահովվի ճիշտ և անաչառ վարչարարություն¹²:

Նշվածից ակնհայտ է, որ Իտալիայում վարչական մարմինների շարքին են դասվում պետական այն հաստատությունները, որոնք գործում են գործադիր իշխանության գործունեության ոլորտում և ենթակա են կառավարությանը:

«Վարչական վարույթի մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված նորմը սահմանում է, որ այդ օրենքի իմաստով վարչական մարմին է հանդիսանում հանրային կառավարման առաջադրանքներ կատարող ցանկացած հաստատություն¹³:

Ընդ որում, վարչական մարմինները հանրային կառավարման առաջադրանքները կատարելու համար պետական մարմինների կողմից պատվիրակված և լիազորված են ընդունելու կառավարման ակտեր, որոնք ունեն արտաքին ազդեցություն: Վարչական մարմինների գործառույթներն ու լիազորությունները սահմանազատված են օրենսդիր և դատական իշխանությունների գործունեությունից: Դրանց կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում է օրենքով և կառավարության որոշումներով, իսկ կազմակերպման և ենթակայության հիմնարար սկզբունքները՝ սահմանադրությամբ¹⁴:

Փոքր ինչ այլ մոտեցում է որդրեգրել ԱՄՆ օրենսդրությունը, որտեղ վարչական մարմիններ համարվող պետական հաստատությունները ներկայացվել են բացառման սկզբունքով և ԱՄՆ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսվել է այն մարմինների շարքը, որոնք չեն համարվում վարչական մարմիններ, ընդ որում վարչական մարմին չհամարվող պետական մարմինների շարքում առկա է նաև օրենսդիր մարմին-

նր¹⁵ :

Այդպիսի բացառման սկզբունք որդեգրված է մաս Վրաստանում, որտեղ Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ նախատեսում է այն վարչական մարմինները, այդ թվում՝ օրենսդիր մարմինը, որոնց գործունեության նկատմամբ օրենսգրքի գործողությունը չի տարածվում¹⁶ :

Այսպիսով, վերոնշյալ երկրների փորձը ցույց է տալիս, որ թեկուզև «վարչական մարմին» եզրույթի վերաբերյալ չկա միասնական դիրքորոշում, սակայն միանշանակ է, որ թե՛ տեսական գրականությունում և թե՛ օրենսդրությամբ արձանագրվում է, որ դրանք ներառված են կամ գործադիր իշխանության մարմինների համակարգում, կամ նրանց գործառույթները պատվիրակված են հանրային իշխանության մարմինների կողմից և ուղղված են գործադիր իշխանության խնդիրների լուծմանը: Ավելին, որոշ երկրներում հստակ արձանագրվում է օրենսդիր մարմնի վարչական մարմին չհամարվելու փաստը, ինչը լիովին արդարացված ենք համարում: Տարակարծությունների տեղիք չտալու համար հստակեցնենք, որ խոսքը բնավ չի վերաբերում օրենսդիր մարմնի և անձանց միջև հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի լուծման ենթակայության հարցին, այլ, բացառապես, օրենսդիր մարմնի՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող գործունեության նկատմամբ վարչարարությունը և վարչական վարույթը կարգավորող օրենսդրության կիրառելիությանը:

Ամփոփելով «վարչական մարմին» եզրույթի վերաբերյալ գիտագործնական մոտեցումների վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ վարչական մարմինը պետական կառավարման մարմինների համակարգում ներառված կամ գործադիր իշխանության կամ տեղական ինքնակառավարման ոլորտում Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված լիազորություններ իրականացնող մարմին է կամ Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված այնպիսի մարմին է, որը չի հանդիսանում արդարադատություն կամ օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին:

Այսպիսի բնորոշումը թույլ կտա գործնականում հստակորեն առանձնացնել այն մարմիններին, որոնք համարվում են վարչական մարմիններ, ինչով պայմանավորված՝ նրանց կողմից հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության նկատմամբ կիրառելի կլինի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին և 7-րդ բաժիններով

նախատեսված իրավակարգավորումները: Ավելին, այսպիսի բնորոշումը թույլ կտա բացառել Ազգային ժողովի և դատարանների վարչական մարմին համարվելը, որոնց կողմից հիմնական առաքելությունից դուրս հանրային իրավունքի բնագավառում իրականացվող գործունեությանը և կարգավորող օրենսդրության մասին կանդիդատացնում այլ պատեհ առիթով:

Բացի այդ, տրված բնորոշումը թույլ կտա իրավական համակարգում ձեռքբաղատվել անհարկի տարածական մեկնաբանությունների տեղիք տվող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի «Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ» դրույթից:

Այսպիսով, վարչարարություն, հետևաբար մաս առանձին տեսակի վարչական վարույթ իրականացնող մարմինների դերում կարող են հանդես գալ՝ 1) պետական կառավարման մարմինների համակարգում ներառված մարմինները, 2) գործադիր իշխանության ոլորտում սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված լիազորություններ իրականացնող մարմինները, 3) տեղական ինքնակառավարման ոլորտում սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված լիազորություններ իրականացնող մարմինները, 4) սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված այլ մարմինները, որոնք չեն հանդիսանում արդարադատություն կամ օրենսդիր իշխանություն իրականացնող մարմիններ:

Հետևաբար, միայն վերը նշված մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը, որը կեզրափակվի վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, ինչպես մաս անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությունը կամ անգործությունը կարող է համարվել վարչարարություն:

Հավելենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում, ինչպես մաս փոխկապակցված այլ իրավական ակտերում առկա առանցքային նշանակություն ունեցող եզրույթների անհարկի մեկնաբանությունները բերում են անհստակության և ոչ միասնականության, ինչը, գործնականում, բերում է, անգամ, հիմնարար իրավունքների խախտման վտանգի: Ուստի, դրանով պայմանավորված, առանձնակի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու ոլորտը կարգավորող նոր օրենսդրական ակտեր:

- ¹ Տե՛ս, Դանիելյան Գ. «Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները» - Եր. «ԱՌ-Տ», 2004 – էջ 126-146:
- ² Տե՛ս, Schwartz B. - American Administrative Law: An Overview [1996] AdminRw 2; (1996) 45/46 Admin Review էջ 14, էլեկտրոնային հղումը՝ <http://classic.austlii.edu.au/au/journals/AdminRw/1996/2.html>:
- ³ Տե՛ս, օրինակ՝ Салищева Н.Г. Административный процесс в СССР - М. 1964 – С. 8. Сорокин В.Д. Административно-процессуальное право – СПб. 2004. - С. 21.
- ⁴ Տե՛ս, Никеров Г.И. “Административное право” США [Текст] / Г.И. Никеров; АН СССР Ин-т США и Канады - Москва : Наука 1977. – С. 32-35. տե՛ս նաև՝ “Административное право зарубежных стран” Учебное пособие, - М.: Издательство “СПАР”, 1996 – С. 10.
- ⁵ Տե՛ս, օրինակ, ՎԳ/2859/05/21 դատական գործը:
- ⁶ Տե՛ս, Դանիելյան Գ. «Վարչական վարույթի առանձին տեսակների անհրաժեշտությունը պայմանավորող չափանիշները», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Դազինյան. –Եր., ԵՊՀ, 2017, էջ 71:
- ⁷ Մանրամասն տե՛ս Sabino Cassese Die Entfaltung des Verwaltungsstaates in: Ius Publicum Europaeum Band III: Verwaltungsrecht in Europa: Grundlagen / hrsg. von Armin von Bogdandy Sabino Cassese Peter Michael: Müller, 2010, էջ – էջ 26:
- ⁸ Տե՛ս, Pierre Legendre L'administration du XVIII siècle à nos jours, 1968, էջ 268:
- ⁹ Տե՛ս, Sabino Cassese նույն աշխատության էջ – 18:
- ¹⁰ Տե՛ս, Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրության 20-րդ հոդվածը, էլեկտրոնային հղումը՝ https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/france/france-c.htm, տե՛ս նաև՝ Ziller J. «Verwaltungsorganisation» in: Bogdandy/ Cassese/ Huber (Hrsg.) «Ius Publicum Europaeum» Bd. V: Verwaltungsrecht in Europa: Grundzüge C.F. Mueller Verlag: Heidelberg. - էջ 13:
- ¹¹ Տե՛ս, Pastori G. «La pubbSica ammiriistrazione» // Manuale di diritto pubblico, - էջ 519, հղումն ըստ՝ Կ. Չարիկյան «Վարչական մարմինների և դրանց փոխօգնության ինստիտուտի էությունը», Դատական իշխանություն, նոյեմբեր, 2012 – էջ 53:
- ¹² Տե՛ս, Իտալիայի Հանրապետության սահմանադրությունը, էլեկտրոնային հղումը՝ [http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/ita?fn=documentframeset.htm\\$f=templates\\$3.0](http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/ita?fn=documentframeset.htm$f=templates$3.0)
- ¹³ Տե՛ս, էլեկտրոնային հղումը՝ https://www.gesetze-im-internet.de/vwvfg/_1.html :
- ¹⁴ Տե՛ս, Alpmann // Brockhaus. Fachlexikon: Recht. 2. «aktualisierte und erweiterte» Auflage Alpmann & Schmidt. Leipzig. 2005© ¾ 205; Creifelds. Rechtswörterbuch. 18. Auflage. Verlag C.H. Beck. München 2004 – էջ 176, 1477-1478; Wolff H.A. und Decker A. Verwaltungsgerichtsordnung // Verwaltungsverfahrensgesetz Studienkommentar Verlag C.H. Beck. München, 2005 – էջ 534: Աղբյուրներն ըստ՝ Вильфрид Бергманн // Административно-процессуальное право Германии – М. Волтерс Клувер, 2007 – С. 9.
- ¹⁵ Տե՛ս, էլեկտրոնային հղումը՝ <https://www.archives.gov/federal-register/laws/administrative-procedure/551.html> :
- ¹⁶ Տե՛ս, էլեկտրոնային հղումը՝ <https://matsnc.gov.gc.ru/document/view/16270?publication=37> :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. Դանիելյան Գ. «Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները» - Եր. «ԱՌ-Տ», 2004:
2. Դանիելյան Գ. «Վարչական վարույթի առանձին տեսակների անհրաժեշտությունը պայմանավորող չափանիշները», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Դազինյան. –Եր., ԵՊՀ, 2017:
3. Չարիկյան Կ. «Վարչական մարմինների և դրանց փոխօգնության ինստիտուտի էությունը», Դատական իշխանություն, նոյեմբեր, 2012:
4. “Административное право зарубежных стран” Учебное пособие- - М.: Издательство “СПАР”, 1996.
5. Вильфрид Бергманн // Административно-процессуальное право Германии – М. Волтерс Клувер, 2007.
6. Никеров Г.И. “Административное право” США [Текст] / Г.И. Никеров; АН СССР Ин-т США и Канады - Москва: Наука 1977.
7. Салищева Н.Г. Административный процесс в СССР - М. 1964.
8. Сорокин В.Д. Административно-процессуальное право - СПб. 2004.
9. Alpmann // Brockhaus. Fachlexikon: Recht. 2. “aktualisierte und erweiterte” Auflage Alpmann & Schmidt. Leipzig. 2005.
10. Creifelds. Rechtswörterbuch. 18. Auflage. Verlag C.H. Beck. München 2004.
11. Schwartz B. - American Administrative Law: An Overview [1996] AdminRw 2; (1996) 45/46 Admin Review.
12. Sabino Cassese - Die Entfaltung des Verwaltungsstaates in: Ius Publicum Europaeum Band III: Verwaltungsrecht in Europa: Grundlagen / hrsg. von Armin von Bogdandy Sabino Cassese Peter Michael: Müller 2010.
13. Pierre Legendre L'administration du XVIII siècle à nos jours» 1968.

14. Pastori G. «La pubblica amministrazione» // Manuale di diritto pubblico.
15. Ziller J. «Verwaltungsorganisation» in: Bogdandy/ Cassese/ Huber (Hrsg.) «Ius Publicum Europaeum» Bd. V: Verwaltungsrecht in Europa: Grundzüge C.F. Mueller Verlag: Heidelberg.
16. Wolff H.A. und Decker A. Verwaltungsgerichtsordnung // Verwaltungsverfahrensgesetz Studienkommentar Verlag C.H. Beck. München, 2005.

Норайр Авагян

Аспирант кафедры конституционного права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Понятие «административный орган» в контексте различных видов административного производства

Тема данной научно-практической работы актуальна и связана с исследованием актуальных в настоящее время вопросов административного производства и администрирования, которые позволяют выявить правовое содержание термина «административный орган» в контексте различных видов административного производства: Автор выдвинул тот подход, что термин «административный орган» может быть полностью и безоговорочно применим во всех тех случаях, когда речь идет исключительно о реализации исполнительной власти, а в случае других ветвей власти были представлены некоторые обоснованные оговорки.

Ключевые слова: административное производство, администрирования, административный орган, отдельный вид административного производства, вид административного производства.

Norayr Avagyan

YSU, Faculty of Law, Postgraduate Student of the Department of Constitutional Law

SUMMARY

“Administrative body” in the context of various types of administrative proceedings

The topic of this scientific and practical work is relevant and is connected with the study of currently relevant issues of administrative proceedings and administration, which allow us to identify the legal content of the term “administrative body” in the context of various types of administrative proceedings. The author put forward the approach that the term “administrative body” can be fully and unconditionally applicable in all cases where it is exclusively about the exercise of executive power, and in the case of other branches of government, some reasonable reservations were presented.

Key words: administrative proceeding, administration, administrative body, various types of administrative proceedings, type of administrative proceeding.

Բնագիրը ներկայացվել է 01.02.2022թ.
Ընդունվել է տպագրության 18.02.2022թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանը

ԱՀԱՐՈՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
տեղեկատվական և հեռահաղորդակցական
տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի
տեղեկատվության անվտանգության և ծրագրային
ապահովման ամբիոնի ծրագրային ճարտարագիտության
բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Սույն հոդվածը նպատակաուղղված է՝ դիտարկելու էլեկտրոնային դատական վարույթների կազմակերպչական և իրավական ապահովման զարգացման ակտուալ համակարգային որոշ խնդիրները, էլեկտրոնային դատավարության միասնական համակարգի ստեղծումը՝ հաշվի առնելով ՀՀ նախագահի կարգադրությունը ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183-Լ «Հայաստանի թվայնացման 2021-2025 ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» որոշումը:

Հիմնարարներ – իրավական ինֆորմատիկա, էլեկտրոնային դատարան, տեղեկատվական տեխնոլոգիաներ, դատական վարույթ, տեղեկատվական անվտանգություն:

Գիտության զարգացման ներկա փուլում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը գիտելիքի ձեռքբերման և օգտագործման գերիշխող մեթոդներից է: Իրավագիտությունն այս առումով բացառություն չէ: Գիտությունների այս փոխկապակցվածության մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն տեղեկատվության ստացման, մշակման, փոխանցման և պահպանման հատուկ տեխնոլոգիաները, որոնք սահմանվում են որպես տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Իրավաբանական ինֆորմատիկայի մեթոդների և միջոցների կիրառումը դատական գործունեության թվայնացման կազմակերպման և իրավական ապահովման ոլորտում գործնականում ունի կարևոր նշանակություն և պահանջում է համակարգի արդիականացում ու շարունակական զարգացում: Իրավական ինֆորմատիկայի առանձնահատկությունն այն է, որ այն ներկայացնում և համակարգված կերպով փոխկապակցում է երկու ոլորտ՝ իրավական և տեխնիկական:

Իրավական ինֆորմատիկան՝ դատավարական գործողությունների կատարումն է թվային ձևով[1]: Բացի այդ, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաները, հնարավոր է իրականացնել ոչ միայն ընթացակարգային, այլ նաև իրավական առումով նշանակալի այլ գործողություններ,

օրինակ՝ հարկային ծառայության ինտերակտիվ առցանց ծառայություններ, անձնագրերի և վիզաների գրանցում, տարբեր լիցենզիաների ձեռքբերում, տրանսպորտային միջոցների հաշվառում և հաշվառումից հանում, սեփականության իրավունքի և անշարժ գույքի հետ գործարքների պետական գրանցման փաստաթղթերի էլեկտրոնային գրանցում և այլն:

Մեր ժամանակներում անհրաժեշտություն է կառավարության կողմից արդարադատության ոլորտի թվայնացումը: Էլեկտրոնային կառավարման գործիքներն էապես բարձրացնում են արդարադատության ոլորտի մարմինների աշխատանքի արդյունավետությունը՝ թույլ տալով նորարարական եղանակով լուծել արդարադատության համակարգի առջև ծառացած խնդիրները: Էլեկտրոնային միասնական համակարգի ներդրումը նպատակ ունի նաև ապահովել արդարադատության առավել մատչելիությունը, իրավական ինստիտուցիոնալ հենքի արդիականացումը, պարզեցնել վարչարարությունը, ապահովել քաղաքացիակենտրոն մոտեցումները, ներդնել որակյալ, հասանելի և մատչելի ծառայությունների մատուցման մոդելը՝ անձանց հնարավորություն տալով ներկայացնել իրենց խնդիրներն ու պահանջներն արդարադատության ոլորտի ինստիտուտներին:

Իրավական ինֆորմատիկայի զարգացումը պահանջում է ոչ միայն դատական գործընթացների կազմակերպման տեղեկատվական համակարգերի ներդրման խնդիրների լուծում, այլ նաև արդարադատության կազմակերպչական և իրավական մեխանիզմների մի շարք գործիքների մշակում: Իրավական ինֆորմատիկայի հիմնական նպատակներն են՝ արդարադատությունն ավելի մատչելի դարձնելը, դատարան դիմելու և դատական գործընթացներին մասնակցելու հետ կապված ժամանակի և ֆինանսական ծախսերի կրճատումը, թափանցիկությունը, դատարանների ծանրաբեռնվածության կրճատումը, արդյունավետ կառավարումը: Այս ընթացակարգերին հասնելու համար պահանջվում է համապատասխան կազմակերպչական և իրավական աջակցություն, օրինակ՝ անմիջապես տնից կամ աշխատավայրից էլեկտրոնային եղանակով դատարան ուղարկված հայցերի քննարկման համար դրանց էլեկտրոնային փոստով ստացված ապացույցների ներկայացումը՝ առաջին ատյանի, ներառյալ վերաքննիչ ու վճռաբեկ դատարանների նիստերին օգտագործվող տեսակոնֆերանսի միջոցներով առցանց դատական նիստին մասնակցությունը:

